


7499

R

53(075)  
5-28



53(075)

6-30

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԱՌԱԴԱՐՄԱՆ

ՍՈՑ-ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
ԱՅԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՁԵՐՆԱՐԿՆԵՐ

# ԳԻԶԻԿԱՅԻ

Ա. Շ. Խ. Ա. Տ. Վ. Բ. Գ. Ե. Բ.

Մ Ա Ս Բ .

ՈՒՍՏԵՆ ՎԵՑԵՐԱՐԴ ՏԵՐՎԱ ԴԱՍՆԹԱՅ

Կողմեց Հ. ԵԼԻՅԵՎԱՆ

ՅԵՐՐՈՐԴ ԲԱՐԵՓՈԽՎԱԾ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15.04.2013

7499



## ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ

### ԶԵՐՄԱՅԻՆ ԵՆԵՐԳԻԱՅԻ ԶԱՓՈՒՄԸ

1. ԳԱՂԱՓԱՐ ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ. ԿԱՂԱՐԻԱ. ՑԵՐՔ  
մարմինը տաքանում է, ասում ենք՝ մարմինը մի վորու խանակու-  
թյամբ չերմություն ստացավ, իսկ յերք սառչում է, ասում ենք,  
մարսինը մի վորու խանակությամբ չերմություն կորցեց կամ  
սվեց:

Ուրեմն մարմինի մեջ չերմության քանակը կարող է մեծանալ  
կամ փոքրանալ:

Չերմության քանակը չափելու համար ընդունված է մի առան-  
ձին միավոր, վորը կոչվում է կալորիա:

Կալորիան ջերմության այն խանակն է, վոր մեկ գրամ ջուրը  
ստացնում է 1°: Այս միավորը կոչվում է նաև գրամ-կալորիա կամ  
փոքր կալորիա: Կա և մեծ կալորիա կամ կիլոգրամ-կալորիա: Դա  
չերմության այն քանակն է, վոր մեկ կիլոգրամ ջուրը տաքացնում  
է 1°:

Հասկանալի լե, իհարկե, վոր մեկ գրամ ջուրը 1° սառչելիս  
կկորցնի մեկ կալորիա:

Չերմության քանակի համար միավոր ընդունելուց հետո, մենք  
հեշտությամբ կարող ենք հաշվել ջերմության այն քանակը, վոր  
ջուրը տաքանալիս ձեռք ե բերում կամ սառչելիս արձակում է:

Լուծենք մի այսպիսի խնդիր: Վերը ան ջերմություն է պետք,  
վորպեսզի 300 գրամ 10°-ի ջուրը տաքանա մինչեւ 40°:

Մտածում ենք այսպես.

1 գր.	ջուրը	1°	տաքացնելու	համար	պետք	է	1 կալորիա
300 գր.	»	1°	»	»	»	=	300 »
300 գր.	»	30°	»	»	»	=	30 × 300 =
						=	9.000 կալորիա:

Հ. 1273,

Քրառակարգ մ 5004 (բ):

Տիրագ 6000:

Պահպատի առաջին ապարան Պաղտըշապատում:  
Պատվեր № 52:

$Q$  ( $\text{ջերմության քանակը}$ ) =  $300$  ( $40^{\circ} - 10^{\circ}$ ) =  $9.000$  կալորիա:  
Այստեղից յերկում ե, վոր ջրին հաղորդած ջերմության քանակը վորոշելու համար պետք ե այդ զրի գրամետրի թիվը բազմապատկեր աստիճանների տարերությամբ:

Այդ հաշիվը կարելի յե ձևակերպել նաև հանրահաշվական յեղանակով: Որինակ. վորքան ջերմություն ե պետք, վորպեսզի  $M$  գր  $t_1^0$ -ի ջուրը տաքանա մինչև  $t_2^0$ :

$$\begin{array}{lllll} 1 \text{ գր } \text{ջուրը } 1^0 \text{ տաքացնելու } & \text{համար } \text{պետք } & \text{ե } 1 \text{ կալորիա } \\ M \text{ գր } & \text{» } 1^0 & \text{» } & \text{» } M \text{ » } \\ M \text{ գր } & \text{» } (t_2^0 - t_1^0) & \text{» } & \text{» } M(t_2 - t_1) \end{array}$$

$$Q = M(t_2 - t_1)$$

Խնդիրներ.

Վորքան ջերմություն ե պետք, վորպեսզի  $300$  գրամ  $10^{\circ}$ -ի ջուրը տաքանա մինչև  $50^{\circ}$ : Պատասխանն արտահայտեցեք մեծ և փոքր կալորիաներով:

5 կգ  $80^{\circ}$ -ի ջուրը դարձավ  $50^{\circ}$ -ի: Նա վորքան մեծ կալորիա ջերմություն կորցրեց:

Մի վերո  $26^{\circ}$ -ի ջուրը պետք ե հասցնել մինչև յեռման աստիճանը ( $100^{\circ}$ ): Վորքան ջերմություն ե պետք: Պատասխանն արտահայտեցեք մեծ և փոքր կալորիաներով:

Վորքան փոքր կալորիա ջերմություն ե պետք, վորպեսզի ու գրամ  $t_1^0$ -ի ջուրը տաքանա մինչև  $t_2^0$ :

Մի բաժակ ( $250$  գրամ) տաք թելը  $12^{\circ}$  սառչելու դեպքում վորքան կալորիա ջերմություն կարձակի:

Խնդիր 5 գր  $0^{\circ}$ -ի ջուր: Այդ ջուրը քանի աստիճան կատաքանա, յեթե նրան հաղորդենք  $100$  կալորիա տաքություն:

Մեկ լիտր ջուրը քանի աստիճան կառոչի, յեթե արձակի  $500$  կալորիա ջերմություն:

2. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԶՐԵՐԻ ԽԱՌՆՈՒԹԻՒՆ, ԿԱԼՈՐԱՉԱՓ: Զերմությունը տաք մարմնից անցնում ե սառը մարմնին այնքան ժամանակ, մինչև վոր նրանց ջերմության աստիճանները հավասարվում են: Յեթե տաք ջուրը խառնենք սառը ջրի հետ, այն դեպքում տաք ջուրը կառոչի, իսկ սառը՝ կտաքանա: Հասկանալի յե, ինարկե, վոր տաք ջրի ջերմության մի մասն ել անցնում ե անոթի պատերին, ջերմաչափին և շրջապատին: Յեթե ցանկանում ենք ճշտությամբ վորոշել ջերմության այն քանակը, վոր սառը ջուրը ստացել ե տաք ջրից, մենք պետք ե հոգանք, վոր անոթի պատերը, ջերմաչափը և շրջապատը, վորքան կարելի յե, տաք ջրից քիչ ջերմություն կանեն: Այդ պատճառով կալորիաների հաշիվներն անում են հատուկ անոթների մեջ, վորոնք կոչվում են կալորաչափ (կալորիմետր):

Կալորաչափը բաղկացած ե մետաղե բարակ պատեր ունեցող անոթից, վորի արտաքին մակերեւությամբ հղկած ե և փայուն, վորպեսզի ճառագայթումը թույլ լինի: Այդ անոթը դրվում ե մի այլ անոթի մեջ, վորի ներքին պատերը նույնպես հղկած են, վորպեսզի առաջին անոթից արձակած ճառագայթներն անդրադառնան դեպի հետ: Այդ յերկու անոթներն իրարից բաժանվում են խցանով և իրար անմիջապես չեն դիմում: Նրանց արանքում գոյացող ողի շերտը նույնպես կպահպանի ներքին անոթի ջերմությունը. ողի շերտի վատ հաղորդիչ լինելու պատճառով ջերմությունը ներքին անոթից դժվարությամբ կանցնի շրջապատին և հակառակը:

Յեթե այդպիսի կալորաչափ չունեք, այն նկ. 1. կալորաչափ: Դեռք բերեք կոնսեղերի (պահածոների) համար պատրաստած յերկու փայուն տուփ, մեկը մեծ, մյուսը փոքր: Մեծի հատակին դրեք խցանից մի քանի տափակ կտորներ և ապա նրա մեջ տեղափորեցրեք փոքր տուփը, կտանաք կալորաչափ:

Տաք և սառը ջրերը խառնեցեք իրար հետ և ապա տաք ջրի կորցրած ջերմությունը համեմատեցեք այն ջերմության հետ, վորսառը ջուրը ձեռք ե բերում: Փորձի ժամանակ կարելի յե նկատի չունենալ այն ջերմությունը, վոր անցնում ե պատերին, ջերմաչափին և շրջապատին:

Յենթաղրենք, թե  $1000$  գր  $15^{\circ}$ -ի ջուրը խառնում եք  $500$  գր  $27^{\circ}$ -ի ջրի հետ: Զուրը խառնելոց հետո կտանաք  $19^{\circ}$ -ի խառնուրդ:


Տաք ջուրը կորցրեց  
 $500 (27 - 19) = 4000$  կալորիա:

Սառը ջուրը ձեռք բերեց  
 $1000 (19 - 15) = 4000$  կալորիա:

Այստեղից հետևում ե, վոր ջերմության տարեր աստիճանի յերկու մարմին իրար հետ խառնելիս, սառը մարմին սանում է այնին ջերմություն, վորքան սաք մարմին արձակում է:

Հիմա լուծենք մի խնդիր: Կալորաչափի մեջ ածած ե  $500$  գր  $28^{\circ}$ -ի ջուր, վորի հետ խառնում ենք  $700$  գր  $12^{\circ}$ -ի ջուր: Գտնել խառնուրդի աստիճանը (t):

Տաք ջուրը  $28^{\circ}$  ից իջակ մինչև  $t^0$ , հետևապես նա կորցրեց  
 $500 (28 - t)$  կալորիա,  
իսկ սառը ջուրը ձեռք բերեց  
 $700 (t - 12)$  կալորիա:



Այս լեռկու քանակությունները հավասար են իրար.

$500 (28-t) = 700 (t-12)$ , վորտեղից  $t=18,6^{\circ}$

Խնդիրներ.

2 լիտր  $10^{\circ}$ -ի ջրի հետ խառնեցեք 3 լիտր  $50^{\circ}$ -ի ջուր։ Խառնուրդն էնչ աստիճան կունենա։

Տաշտի մեջ ածած և 2 վեգրո  $10^{\circ}$ -ի ջուր։ Յեռման աստիճանի վարքան ջուր պետք ե ավելացնեք, վորպեսզի խառնուրդը լինի  $30^{\circ}$ -ի։

4 լիտր  $12^{\circ}$ -ի ջրի հետ պետք ե խառնել 2 լիտր այնպիսի աստիճանի ջուր, վորպեսզի խառնուրդն ունենա  $36^{\circ}$ ։ Այդ 2 լիտր ջուրն էնչ աստիճան պետք ե ունենա։

$m_1$  գր  $t_1^{\circ}$ -ի ջուրը խառնել ենք  $m_2$  գր  $t_2^{\circ}$ -ի ջրի հետ։ Խառնուրդն էնչ աստիճան կունենա։

3. ՏԵՍԱԿԱՐԱՐ ԶԵՐՄՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ. Մինչև հիմա մենք խոսում ենք այն ջերմության մասին, վոր ջուրը կորցնում կամ ձեռք ե բերում։ Այժմ չափենք այն ջերմությունը, վոր ձեռք ե բերում կամ կորցնում ե վորեւ ուրիշ նյութ։ Այս խնդիրը կարենոր գործնական նշանակություն ունի. որինակ, կերակրի կաթսայի մեջ կրակից ջերմությունն ստանում ե և հաղորդում ջրին պղինձը. սովորական վառարանների մեջ ջերմությունն անցնում ե շրջապատին աղյուսների միջով և այլն։

Փորձերը ցուց են տալիս, վոր

1 գր սպիրտը  $1^{\circ}$  տաքացնելու համար պահանջվում է վոչ թե 1, այլ 0,6 կալ.

1 գր լեռկաթը  $1^{\circ}$  » » » » » 0,1 »

1 գր ալումինը  $1^{\circ}$  » » » » » 0,2 »

Ուրեմն հավասար զանգվածներ ունեցող տարբեր նյութեր  $1^{\circ}$  տաքացնելու համար տարբեր քանակությամբ ջերմություն էն պահանջում։ Ասում ենք, տարբեր նյութեր տարբեր տեսակարար ջերմությունների ունեն։

Տեսակարար ջերմությունը վորությունը վորության այն տանտեղի, վոր պիտի ե հաղորդել 1 գր վորեվի նյութին, վորպեսզի սա  $1^{\circ}$  տախանա։

Ջրի տես. ջերմունակությունն է 1 կալորիա, լեռկաթինը  $0,1$  կալ., կապարինը  $0,03$  և այլն։

Ցեղենութիւնը. ջերմունակությունը հայտնի լե, այն դեպքում մենք հեշտությամբ կարող ենք հաշվել ջերմության այն քանակը, վոր պետք ե այդ նյութի վորեւ զանգվածը մինչև մի վորեւ աստիճան տաքացնելու համար։

Որինակ, վարքան ջերմություն ե պետք, վորպեսզի 400 գր  $20^{\circ}$ -ի պղինձը տաքանա մինչև  $100^{\circ}$ .

1 գր պղինձը  $1^{\circ}$  տաքացնելու համար պետք ե 0,1 կալորիա։

400 գր »  $1^{\circ}$  » » »  $0,1 \cdot 400 = 40$  կալորիա

400 գր »  $80^{\circ}$  » » »  $0,1 \cdot 400 \cdot 80 = 3200$  կալ.։

Խնդիրը կարելի լուծել և հանրահաշվական լեզանակով։ Ուրինակ, տված ե Մ գր  $t_1^{\circ}$ -ի նյութ, վորի տես. ջերմունակությունն է ։ Մինչև  $t_2^{\circ}$ -ը տաքացնելը վորքան ջերմություն ե պետք։

1 գրամը  $1^{\circ}$  տաքացնելու համար պետք ե 0 կալորիա։

Մ »  $1^{\circ}$  » » » c. M կալորիա։

Մ »  $(t_2 - t_1)$  » » » c. M  $(t_2 - t_1)$  կալորիա։


$$Q = c \cdot M \cdot (t_2 - t_1)$$

Աշխատանք.

Դենել պղինձի կամ վորեվի այլ մետաղի տեսակարար ջերմությունը։

Անհրաժեշտ պարագաներ. — 1. բաժակով ջուր, 2. կալորաչափ,

3. լեռկությունաչափ, 4. շտատիվ պահիչով, ողակով և ցանցով, 5. սպիրտալին լապտեր կամ, ավելի լավ ե, պրիմուս, 6. մի մետաղի կը տոր, 7. ստվարաթուղթ։



Նկ. 2. Տեսակարար ջերմունակության գտնելու փորձով։

Գործիքները դասավորեցեք այնպես, ինչպես 2-րդ նկարն է ցուց տալիս։ Սպիրտալին լապտերի և կալորաչափի միջև տեղափոխեք մի թերթ ստվարաթուղթ (ինչու համար). ապա կատարեցնեք հետևյալը.

1. Կշռեցնեք M գր ջուր և ածեցնեք կալորաչափի մեջ. II ջերմաչափն ընկղմացնեք ջրի մեջ և նրա աստիճանը (t) վորուեցնեք։

2. Կշռեցնեք պղնձի կտորը. թող նրա կշիռը լինի m գրամ. Այդ պղնձի կտորին կապեցնեք մի թելի կտոր և լեռը A բաժակի ջուրը կը կան լեռ գալ, պղնձի կտորը գցեցնեք նրա մեջ։ Մի 10 րոպեից հետո

պղինձը կընդունի յեռացող ջրի աստիճանը ( $T^0$ ), վորը վորոշվում է ջերմաչափի ոգնությամբ:

3. Բոնելով թելից՝ պղինձն արագորեն տեղափոխեցեք և գցեցեք կալորաչափի մեջ: Կալորաչափի ջուրը տաք պղնձից կտաքանա և կընդունի մի վորեւ աստիճան, որինակ,  $\Theta^0$ : Պարզ է, վոր պղինձն իր հերթին պետք է ստոչի:

Պղնձի տեսակարար ջերմությունը, վոր պետք է վորոշվի, կնշանակենք չոպ:

Մտածում ենք այնպիս, ինչպես առաջ.

ա. 1 գր պղինձը  $T^0$  սառչելիս կորցնում է չ կալորիա:

մ գր  $\rightarrow T^0 \rightarrow \rightarrow \rightarrow$  մ x կալորիա:

մ գր  $\rightarrow T - \Theta^0 \rightarrow \rightarrow \rightarrow$  մ. x.  $(T - \Theta)$  կալ.

Պղինձը կորցրեց  $Q = mx (T - \Theta)$  կալորիա:

բ. 1 գր ջուրը  $T^0$  տաքացնելու համար պետք է 1 կալորիա:

մ գր  $\rightarrow T^0 \rightarrow \rightarrow \rightarrow$  մ կալորիա:

մ գր  $\rightarrow (\Theta - t)^0 \rightarrow \rightarrow \rightarrow$  մ  $(\Theta - t)$  կալ.

Ջուրը ձեռք բերեց  $q = M(\Theta - t)$  կալորիա:

Յեթե պղնձի կորցրած ջերմությունն անցավ ջրին, այն դեպքում  $Q = q$ , ալտեղից ստացվում է հետևյալ հավասարությունը.

$$Mx(T - \Theta) = M(\Theta - t)$$

պղնձի սիած ջրի ստացած

ջերմությունը ջերմությունը

Այս հավասարության մեջ, բացի չ-ից, մնացած բոլոր մեծությունները հայտնի յեն: Վորոշում ենք չ-ի նշանակությունը.

$$x = \frac{M(\Theta - t)}{m(T - \Theta)}$$

Նույն յեղանակով կարելի յե վորոշել ամեն մի պինդ մարմին տես. ջերմունակությունը:

Ի՞նչպես կարելի յե վորոշել հեղուկների տես. ջերմունակությունը:

**Մի ժամի նյութերի տեսակարար ջերմունակություններ:**

Թվերը ցուց են տալիս, թե 1 գր նյութը  $T^0$  տաքացնելու համար վորքան փոքր կալորիա յե պահանջվում:

Կապար . . . . .	0,03	(ավելի ճիշտ 0,0314)
Պլատին . . . . .	0,03	( » » 0,0325)
Կլայել (անագ) . . . . .	0,05	( » » 0,0548)
Արծաթ . . . . .	0,08	( » » 0,057)
Պղինձ . . . . .	0,1	( » » 0,0933)
Ցինկ . . . . .	0,1	( » » 0,0955)
Յերկաթ . . . . .	0,1	( » » 0,114)
Ալյակի . . . . .	0,19	
Ալյումին . . . . .	0,2	( » » 0,214 )
Սառուց . . . . .	0,5	( » » 0,504 )
Ջուր . . . . .	1	
Մողիկ . . . . .	0,03	( » » 0,033 )
Սպիրուտ . . . . .	0,6	( » » 0,602 )

### Խնդիրներ.

Մեկ կիլոգրամ պղինձը  $100^0$  տաքացնելու համար վորքան կալորիա կպահանջվի:

Ունենք մեկ գրամ ջուր և մեկ գրամ յերկաթ: Դրանցից յուրաքանչյուրին հաղորդում ենք մեկական կալորիա: Ջրի և յերկաթի ջերմության աստիճանը վորքանով կրածը անա:

Ապակու տես. ջերմունակությունն է 0,19: Վորքան փոքր կալորիա յե պետք, վորպեսզի քիմիական բաժակը  $10^0$  տաքանա, յեթե նրա կշիռն է 70 գրամ:

Վերցնենք հավասար զանգվածներով և նույն աստիճանի սնդիկ, սպիրուտ և պղինձ ու հավասար չափով տաքացնենք: Վոր նյութն պեկի շատ ջերմությունն կլլանի:

Ինչու ցամաքն ավելի շուտ և տաքանում, քան թե ծովը: Ջրի մեջ տես. ջերմունակությունն ինչ ազդեցություն ունի կլիմայի վրա: Վերցնենք հավասար զանգվածներ ունեցող  $100^0$ -ի չորս գնդակ, մեկը՝ յերկաթից, մյուսը՝ պղնձից, յերրորդը՝ ալյումինից, իսկ չորրորդը՝ կապարից: Դնենք այդ գնդակները մոմի շերտի վրա: Այդ գնդակներից վորի տակ շատ մոմ կհալվի:

60 գր  $100^0$ -ի յերկաթը ձգում ենք կալորիմետրի մեջ, վորտեղ դանվում է 120 գր  $13,2^0$ -ի ջուր: Ջրի ջերմության աստիճանը բարձրացավ մինչեւ  $17,8^0$ : Գտեք յերկաթի տես. ջերմունակությունը:

Մի բաժակ ( $250$  սմ<sup>3</sup>)  $40^0$ -ի ջուրը խոսնում ենք մի բաժակ  $20^0$ -ի սպիրուտի հետ: Վորոշել խառնուրդի աստիճանը:


Մոդիկի փոքր տես. ջերմունակությունն ինչ հարմարությունն է ջերմաչափի համար:

4. ՎԱՐԵԼԻԹՆԵՐԻ ՋԵՐՄՄԱՐԱՐ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Առորլա կանքում և արդյունաբերության մեջ, ջերմություն ստանալու համար այլում՝ են զանազան վառելիքներ—նավթ, բենզին, քարածուխ և ալին:

Յեթե վերցնենք հավասար կշիռ ունեցող տարբեր վառելիքներ և ամբողջապես ալյումին, կտեսնենք, վոր նրանք տարբեր քանակությամբ կալորիաներ են տալիս: Ասում ենք՝ սարբեր վառելիքներ սարբեր ջերմացար ունենություն ունեն:


Նյութի ջերմարար ունակությունը սովորաբար վորոշվում է կալորիաների այն թվով, վոր ստացվում է մեկ կլիլորդամ վառելիքից:

Վառելիքի ջերմարար ունակությունը գտնում էն կալորաչափի ոգնությամբ (նկ. 4): Կալորաչափի մեջ ածում են վորոշ քանակությամբ ջուր, որինակ,  $1,000$  գր և նրա աստիճանը վորոշում:



նկ. 3. Տարբեր նյութերից կազմված գնդակների տակ մոմը տարբեր չափով և հալվում:

լենթադրենք, թե ջերմության աստիճանը յեղավ 12: Այսուհետև կերցնում են մի մետաղե գլան և նրա մեջ տեղափորում 2 գրամ քարածուխի փոշի: Այդ գլանի մեջ ողամուղ մեքենայի ողնությամբ բարականաչափ թթվածին են մտցնում և ապա բերանը պինդ փա-



Նկ. 4. Վառելանյութի ջերմարար ունակության գորոշումը կալորաչափի ողնությամբ:

Կում: Գլանի պատերի միջով անցնում են յերկու ելեկտրական հաղորդիչներ: Գլանը տեղափորում են կալորաչափի ջրի մեջ և ապա ելեկտրական հոսանք անցկացնում: Հոսանքից թելը շիկանում ե և հենց վոր քարածուխն սկսում ե ալրվել, հոսանքը դադարեցնում են: Վորովինեան գլանի մեջ բավական թթվածին կա, ուստի քարածուխն ամբողջապես ալրվում ե: Առաջացած ջերմությունն անցնում ե գլանի պատերին, այստեղից ել ջրին: Յենթադրենք, թե ջրի ջերմության աստիճանը բարձրացավ մինչև  $26^{\circ}$ :

Քարածիսի ջերմարար ունակությունը նշանակենք  $x$ -ով:

Զուրը վառելիքից ստացավ  $1000$  ( $26 - 12$ ) կալորիա:

Քարածուխն ալրվելիս արտադրեց  $2 \times$  կալորիա, ալստեղից

$$2 \times = 1000 \quad (26 - 12)$$

$$x = \frac{1000 \quad (26 - 12)}{2} = 7000 \text{ կալորիա:}$$

### Փորձերը ցույց են տալիս, վոր

1 կգ Դոնեցի անտրացիտը տալիս է	7.200	մեծ կալորիա
1 կգ բենզինը	11.200	" "
1 կգ նավթը	11.000	" "
1 կգ մազութը	11.200	" "
1 կգ սպիրտը	7.100	" "
1 կգ Դոնեցի քարածուխը	7.000	" "
1 կգ անգլիական (Կարդիֆի) քարածուխը	7.650	" "
1 կգ լավ տորֆը	3.500	" "
1 կգ չոր փայտը ( $27^{\circ}/\text{սոնա-}$ վություն պալունակող)	3.100	" "
1 կգ թաց փայտը	1.900	" "
1 կգ փալտի ածուխը	8.000	" "

50 գր սպիրտն ամբողջովին ալրվելու դեպքում վորքան կալորիա կտա: Վառարանի մեջ ալրվեց 10 կգ թաց փայտ: Վորքան ջերմություն առաջացավ: Շոգեգնացքի կաթսան տաքացնելու համար մի ժամում ծախսվում է մեկ տոնն Դոնեցի քարածուխ: Շոգեգնացքը մի ժամում վորքան ջերմություն է ծախսում:

Սենյակները տաքացնելու համար յերեխն գործ են ածում նավթի վառարաններ: Այդ վառարանն է ժամում վորքան ջերմություն կարտադրի, չեթե մեկ ժամում ծախսվում է 0,4 կգ նավթ:

Ի՞նչ վառելանյութեր գիտեք. դրանցից վորքն է թանգ գնահատում և ինչնեւ:

5. ՍՊԻՐՏԱՅԻՆ ԼԱՊՏԵՐԻ ՈԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ: Վառելիքի ալրման ժամանակ ստացված ջերմությունը հաղորդում ենք փորեւե անոթի կամ գործիքի այս կամ այն նպատակով, որինակ, ինքնալեռի մեջ ալրվող ածուխի ջերմությունը հաղորդվում է ջրին յեռացնելու նպատակով, շոգեգնացքի մեջ ալրվող քարածուխի ջերմությունը հաղորդվում է կաթսալին գորշից ստանալու նպատակով և այն:

Սակայն պետք է նկատել, վոր վառելիքից ստացած ջերմությունն ամբողջովին ոգտակար աշխատանքի վրա չի ծախսվում: Նրա մի մասը կլանվում է անոթի պատերի մեջ, մի մասը ցըգում է շրջապատի մեջ և այն: Յեթե ինքնալեռի մեջ արտադրված ջերմության  $60^{\circ}/\text{o}$  կորչում է, իսկ  $40^{\circ}/\text{o}$  ծախսվում է ջուրը տաքացնելու համար, այն գեպքում ասում ենք՝ ինքնալեռի ոգտակար գործողության գործակիցն է  $40^{\circ}/\text{o}$ : Լուծենիք սի ինիդիր:

Թեյամանի մեջ ածած է մեկ լիտր  $15^{\circ}/\text{o}$  ջուր: Հարկավոր է սպիրտային լապտերով ալր ջուրը տաքացնել մինչև յեռացն աստիճան ( $100^{\circ}$ ): Լապտերի ողտակար գործողության գործակիցը վորքան է, չեթե ալր ջուրը յեռացնելու համար ալրվել է 20 գրամ սպիրտ: Զուրը ձեռք է բերում

$$Q=1000 \cdot (100 - 15) = 85000 \text{ կալորիա:}$$

20 գրամ սպիրտը արձակել ե

$$Q=20 \cdot 7100 = 142000 \text{ կալորիա:}$$

Ուրեմն ծախսվեց 142000 կալորիա ջերմություն, բայց դրանից միայն 85000 կալորիան վերածվեց ոգտակար աշխատանքի: Այստեղից սպիրտային լապտերի ոգտակար գործողության գործակիցը կլինի:

$$\frac{85000 \cdot 100}{142000} = 59,9\%$$

Աշխատանք.

Վորուեցեմ ձեր լաբորատորիայի սպիրտային լապտերի ոգտակար գործողության գործակիցը:

Անհրաժեշտ պարագաներ—քիմիական բաժակ, կշռոք, կշռաքարեր, ջերմաչափ, յեռոտանի, ցանց, սպիրտային լապտեր:

1. Կշռեցեք սպիրտային լապտերը:

2. Բատարկ բաժակի կշռը զորոշելուց հետո նրա մեջ ջուր ածեցեք. կրկին կշռելուց հետո գտնեք ջրի կշռը:

3. Զրի ջերմության աստիճանը վորոշեցեք և ապա բաժակը դրեք լեռուտանու վրա:

4. Կառուցեք սպիրտային լապտերը և դրեք բաժակի տակ:

5. Յերբ ջրի ջերմության աստիճանը բավականաչափ կրարձրանա, սպիրտային լապտերը հանդցրեք և հետո ջուրը ջերմաչափով խառնեցեք ու վորոշեցեք նրա աստիճանը:

6. Սպիրտային լապտերը կրկին կշռեցեք և գտնեք, թե քանի գրամ սպիրտ ե այրվել:

Ստացած թվերը գրեցեք ազգուսակի մեջ (համապատասխան նշանների տեղ):

Վերջին կշռը	Ջերմանանի առաջնային գործակիցը	Ջերմանանի առաջնային գործակիցը	Ջերմանանի առաջնային գործակիցը	Ջերմանանի առաջնային գործակիցը	Ջերմանանի առաջնային գործակիցը	Ջերմանանի առաջնային գործակիցը	Ջերմանանի առաջնային գործակիցը	Ջերմանանի առաջնային գործակիցը	M (t <sub>2</sub> - t <sub>1</sub> )					
M գր	t <sub>1</sub> °	t <sub>2</sub> °	M (t <sub>2</sub> - t <sub>1</sub> )	P <sub>1</sub>	P <sub>2</sub>	P <sub>1</sub> - P <sub>2</sub>	(P <sub>1</sub> - P <sub>2</sub> ) / 7100	K =	M (t <sub>2</sub> - t <sub>1</sub> )					

7. Ուրեմն սպիրտային լապտերի ոգտակար գործողության գործակիցը գտնելու համար պետք է ջրի կլանած ջերմության քանակը բաժանել այրված սպիրտի արձակած ջերմությամբ:

Ոգտակար գործ. գործակից—Ստացված ոգտակար ջերմություն Սախաված ամբողջ ջերմություն:

Աշխատանքի մեջ այրվեց 40 կգ քարտածուխ: Այդ վառարանից վեր-

քան կալորիա ջերմություն ստացվեց, ինչու նրա ոգտակար գործողության գործակիցն է 55%:

Վառարանների ոգտակար գործ. գործակիցը բարձրացնելու համար ի՞նչ պետք է անել:

### ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻ ՎԻՃԱԿԻՑ ՄՅՈՒՍԻՆ ԱՆՑՆԵԼԸ

6. ԳԱՂԱՓԱՐ ՀԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ: Շատ պինդ նյութեր բավականաչափ տաքացնելիս հալվում են, այսինքն՝ փոխում են իրենց վիճակը և դառնում հեղուկ:

Վերցրեք մի մետաղ անոթ, մեջը քիչ ձյուն կամ սառցի կը տորներ ածեցեք և ապա դրեք կրակին: Յեթե այդ սառուցը դրսից ե բերված և նրա ջերմության աստիճանը 0°-ից ցածր է, այն դեպքում նա դեռ կտաքանա մինչև 0° և ապա միայն կսկսի հալվել:


Հալվելուց ստացած ջուրը և սառցի մնացորդներն իրար հետ խառնեցեք և ջերմաչափի ոգնությամբ վորոշեցեք խառնուրդի աստիճանը: Դուք տեսնում եք, վոր հալվելիս խառնուրդի աստիճանը մնում է անփոփոխ:

Յեթե կրակը թեժացնեք, հալումը կարագանա, բայց ջերմության աստիճանը դարձյալ կմնա անփոփոխ:

Ջերմության այն աստիճանը, վորի ժամանակ նյութը հալվում է, կոչվում է հալման կետ:

Սառցի հալման կետն է 0°, Յուրաքանչյուր նյութ իր հալման կետն ունի:

Այժմ հակառակ վորձը կատարենք, այսինքն ջուրը պնդացնենք, սառուց դարձնենք:



Նկ. 5. Կապարի հալման և պնդացման դրաֆիլ:

Քիմիական բաժակի մեջ քիչ ջուր ածեցեք և ապա այրեաժակը տեղավորեցեք «ցրտացնող խառնուրդի» մեջ (3 կշռամաս ձյունի և մեկ կշռամաս կրակը) աղի խառնուրդն ունենում է մոտ-

20°): Զերմաշափն ընկղմեցեք ջրի մեջ և հետևեցեք ջերմության աստիճանին: Յերբ ջրի ջերմության աստիճանը կիշնի մինչև 0°, կտեսնենք, վոր ջուրն սկսում է պնդանալ, սառուց դառնալ: Պնդանալիս ջրի և առաջացած սառցի խառնուրդի աստիճանը շարունակ մնում է 0:

Ուրեմն նյութը պնդանում է այն աստիճանում, ինչ աստիճանում հալվում է: Սառցի հալման կետը 0° է, ջրի պնդացման կետը նյունպես 0° է:

#### Աշխատանք.


Դորոշել մոմի հալման աստիճանը:

Բաժակի մեջ ջուր ածեցեք և սպիրտալին լապտերի վրա տաքացրեք, ինչպես այդ ցույց ե տալիս նկարը:

Զերմաշափի գնդին սիսեռի չափ մի կտոր մոմ կպցրեք: Զերմաշափն իշեցրեք ջրի մեջ և ձեռքով պահեցեք, բայց այնպես, վոր ջերմաշափը պատերին կտմ հատակին չղիպչի:

Դիտեցեք ջերմության աստիճանի բարձրաւումը: Ակ. Բ. Մոմի հալման սալը: Մոմը հենց վոր կակսի հալվել, անմիջապես կպոկվի ջերմաշափից և կբարձրանա ջրի լերես:

Մոմը վոր ասինանի մեջ հալվեց:



Ջրածին . . . . .	— 256°	Պղինձ . . . . .	1080°
Սպիրտ (ալքոհոլ) . . . . .	— 130°	Չուզուն մոտ . .	1100°
Սոգիկ . . . . .	— 39°	Պողպատ . . . . .	1400°
Սառուց . . . . .	0°	Յերկաթ . . . . .	1600°
Անագ . . . . .	230°	Պլատին . . . . .	1770°
Կապար . . . . .	330°	Ապակի (զանազան տես.)	800—1400°
Արծաթ . . . . .	970°	Վոլֆրամ . . . . .	3000°
Վոսկի . . . . .	1070°		

Պետք է նկատել, վոր բոլոր պինդ մարմինները սառցի նման իրենց վիճակը «հանկարծ» չեն փոխում: Մոմը և ապակին հալվելուց առաջ փափկում են: Կան և այնպիսի նյութեր, վորոնք բոլորովին չեն հալվում, որինակ վառողը, փալտը: Սրանք տաքացնելիս լենթարկվում են քիմիական փոփոխությունների:

Զեռք բերեք տաքացրեք մետաղների բարակ լարեր: Փորձեցեք այդ լարերը հալել մոմի կամ սպիրտալին լապտերի բոցի մեջ և դրանով մոռագրապես գաղափար կազմեցեք բոցի ջերմության աստիճանի մասին:

7. ՀԱԼՄԱՆ ԶԵՐՄԱՆԹՅՈՒՆ: Դիտելով սառցի հալումը, մենք լեկանք այն լեզրակացության, վոր հալվելիս ջերմության աստի-

ճանը չի փոխվում, չնայելով, վոր դրսից անընդհատ ջերմություն ենք հաղորդում: Այդ ջերմությունը նյութի ջերմության աստիճանը չի բարձրացնում, բայց կատարում է մի այլ աշխատանք: Նա պինդ նյութի մոլեկուլները հեռացնում ե իրարից, թուլացնելով նրանց հարակցական ուժերը:

#### Աշխատանք.

Գտնել սառցի հալման բազնված ջերմարյանը փորձով:

1. Կալորիմետրի մեջ ածեցեք վորոշ քանակությամբ ջուր և ջերմության աստիճանը վորոշեցեք: Յենթաղրենք, թե այդ ջրի կշիռն է 600 գր, իսկ աստիճանը՝ 25:

2. Վերցրեք ընկույզի չափ մի կտոր սառուց. շորով կամ ծծան թղթով սառուցը չորացրեք և անմիջապես գցեցեք կալորիմետրի մեջ:

3. Յերբ ամբողջ սառուցը կհարվի, ջուրը ջերմաշափով զգուշութամբ խառնեցեք և ապա վորոշեցեք այդ ջրի ջերմության աստիճանը: Յենթաղրենք, թե ստացաք 20°:

4. Կալորիմետրի ջուրը նորից կշռեցեք: Յենթաղրենք, թե ստացաք 630 գրամ:

Ուրեմն քանի գրամ սառուց և հալվել:  
Հիմա հաշվեցնեք:

Կալորիմետրի ջուրը կորցրեց 600.  $(25 - 20) = 3000$  կալորիա: Այդ չափ ջերմությունից սառուցը հալվեց և ամբողջովին լջուր դարձավ. բացի այդ, սառցից առաջացած ջուրը 0°-ից բարձրացավ մինչև 20°:

Սառցից առաջացած ջուրը կլանեց 30. 20 = 600 կալորիա: Մնացած 3000 — 600 = 2400 կալորիան ծախսվեց 30 գր սառուցը ջուր դարձնելու համար: Ալստեղից գտնում ենք, վոր 1 գր սառուցը հալելու համար ծախսվում է

$$2400 : 30 = 80 \text{ կալորիա:}$$

Այդ հաշիվը կարելի յե կատարել նաև հանրահաշվական լեղանակով:

Կալորիմետրի մեջ ածված է M գրամ  $t_1^0$ -ի ջուր: Ջրի մեջ գցում ենք տ գրամ 0°-ի սառուց: Սառուցն ամբողջապես հալվում է և ջրի ջերմության աստիճանը դառնում է  $t_2^0$ : Սառցի հալման թաղնված ջերմությունը նշանակենք զ տառով:

Ամբողջ սառուցը հալելու համար պետք է տ. զ կալորիա:

Սառցից ստացած ջուրը մինչև  $t_2^0$ -ը տաքացնելը պետք է տ կալորիա:

Կալորիմետրի ջրի արձակած ջերմությունը կլինի  $M(t_1 - t_2)$  կալորիա:

Այս տվյալներից կարելի յե կազմել հետևյալ հավասարությունը:

$$m + mt_2 = M(t_1 - t_2), \quad M(t_1 - t_2) = mt_2$$

$$m = \frac{M(t_1 - t_2)}{t_2}$$

Ճիշտ հաշիվներ անելիս պետք է նկատի ունենալ և այն ջերմությունը, վոր տուլիս է կալորիմետրի բաժակը:

Յեթե նյութի հալման թագնված ջերմությունը հայտնի յէ, այն գեղքում կարելի յէ լուծել զանազան խնդիրներ։ Որինակ, մեկ տոնն 0°-ի չուգունը հալելու համար վարքան ջերմություն ե պետք, իեթե նրա տեսակարար ջերմությունն ե 0,17, հալման աստիճանն ե 1100°, իսկ հալման թագնված ջերմությունն ե 25։

Լուծումն։

Նախքան հալելը պետք ե ծախսել վորոշ քանակությամբ ջերմություն, վորպեսզի չուգունը ընդունի հալման աստիճանը։ Դրա համար պետք ե ծախսել  $Q_1 = 0,17 \cdot 1000 \cdot 1100 = 187000$  մեծ կալորիա։

Չուգունը հալելու համար պետք կլինի

$Q_2 = 25 \cdot 1000 = 25000$  մեծ կալորիա, իսկ ընդամենը  $Q_1 + Q_2 = -212000$  մեծ կալորիա։

Մի բանի նյութերի հալման թագնված ջերմությունը			
Ալլումին	102	Արծաթ	22
Սառուց	80	Կլայեկ (անագ)	14,3
Պղինձ	44	Ցերկաթ	6
Ցինկ	28	Կապար	5,5
Պլատին	27	Մնդիկ	2,8
Չուգուն	25		

Խնդիրներ։

Մարմինները ցուրտ պահելու համար սովորաբար սառուց են գործածում, ինչև առաջի մեջ դրվագը իրը սառն ե լինում։ Այդ իրի ջերմությունն ինչի՞ վրա յէ ծախսվում։

50 գր 0°-ի սառուցը հալելու համար վարքան կալորիա յէ պետք։ 100 գրամ—20°-ի սառուցը 100°-ի ջուր դարձնելու համար վարքան կալորիա յէ պահանջվում։

Յերեանի շրջակալքում հունվար և փետրվար ամիսների ընթացքում յեկած ձյունի հաստությունը կազմում է մոտ 50 սմ։ 1 սմ հաստություն ունեցող ձյունի շերտը հալվելիս առաջացնում է 1 սմ հաստություն ունեցող ջրային շերտ։ 1 քառ. մետր մակերեսի վրա հավաքված ձյունը հալելու համար վարքան կալորիա յէ պետք։

Մեկ կիլոգրամ 15°-ի կապարը հալելու համար վարքան կալորիա յէ պետք։

8. ՆՅՈՒԹԻ ԾԱՎԱԼԻ ՓՈԽՎԵԼԸ ՀԱԼՄԱՆ ՅԵՎ ՊՆԴԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ։ Նյութերի խոշորագույն մասը պինդ վիճակում ավելի խիտ ե լինում, քան թե հեղուկ վիճակում։ Որինակ՝ պարագինը, մոմը, կապարը, կլայեկը և այլն։ Այդ նյութերի պինդ կտորները խորասուգում են սեփական հեղուկի մեջ։ որինակ, իեթե մոմը հալեք և ա-

պա այդ հալված մոմի մեջ գցեք նույն մոմից մի պինդ կտոր, կը-տեսնեք, վոր վերջինս խորասուգում ե։ Վերը հիշած բոլոր նյութերը հալվելիս ընդարձակվում են և ընդունում ավելի մեծ ծավալ, իսկ պնդանալիս սեղմվում են և ընդունում ավելի փոքր ծավալ։

Կան մի քանի նյութեր, վորոնք բոլորովին հակառակ հատկությունն ունեն. դրանք հեղուկ ժամանակ ավելի փոքր ծավալ են ընդունում, քան պինդ վիճակում։ Այդպիսի բացառիկ նյութերի շաքին ե պատկանում ջուրը։ Նա պնդանալու ժամանակ ընդարձակվում ե։ Կատարեցեք մի այսպիսի փորձ։

Վերցրեք մի փոքրիկ սրվակ, լցրեք ջրով և ապա բերանը խցանով պինդ փակեցեք, այնպես վոր սրվակի մեջ բոլորովին ոդ չի-նի։ Կանեփի թերով խցանը սրվակի վզին պինդ կապեցեք, վորպեսզի դուրս չընկնի։

Սրվակը դրեք ցրտացնող խառնուրդի մեջ։ Մի 10—15 րոպե-ից հետո ջուրը կսառչի, սառուց կդառնա և ընդարձակվելով կը-փշրի սրվակը։

Զմեռային սառնամանիքներին ջրմուղների խողովակները ջրի սառչելու մեջոցին ճաքում են։

Այս յերեսուցը մեծ գեր ե կատարում նաև ընդության մեջ։ Լեռնային տեսակների հեղքերի մեջ հավաքված ջուրը սառչելիս փշրում ե ժայռը։

Հալված թուջը (չուգունը) պնդանալիս նույնպես ընդարձակվում ե։ Թուջե իրեր ձուլելու համար պատրաստում են հատուկ կաղապարներ և ապա այդ կաղապարները լցնում հալված թուջով, վորը պնդանալիս ընդարձակվում ե և լցնում բոլոր խորդուբորդությունները։

Հարցեր։

Մեկ կիլոգրամ սառուցը և մեկ կիլոգրամ ջուրը նույն ծավալն ունեն։

Ինչո՞ւ սառուցը լողում ե ջրի լերեաին։

Բացի ջրից, թուջից և բիսմուտից մացած բոլոր նյութերը հալվելիս ընդարձակվում են, իսկ պնդանալիս՝ սեղմվում։ Կապարի կտորը հալված կապարի մեջ խորասուգում ե. ինչո՞ւ։

9. ԳՈԼՈՐԾԱՑՈՒՄ։ Յերբ հեղուկն ընդունում ե գաղային վիճակ, ասում ենք նա «գոլորշանում» ե։

«Գոլորշանում» այսպես ե կատարվում։ Մենք գիտենք, վոր հեղուկի մոլեկուլները շարունակ շարժման մեջ են։ Այն մոլեկուլները, վորոնք հեղուկի մակերեսուցի մոտ են և պատճիմամբ շարժվում են դեպի վեր, պոկվում են հեղուկից և անցնում շրջապատող



տարածության մեջ: Հենց այդ պոկված մոլեկուլսերը կազմում են գոլորշիք:

Նկատենք, վոր կարող են գոլորշանալ նաև պինդ մարմինները, որինակ, նավթալինը, կամֆարան և աղն, բայց նրանց գոլորշացումը կատարվում է շատ դանդաղ:

Այժմ տեսնենք, թե ինչի՞ց ե կախված հեղուկի գոլորշացումը:

Վերցրեք եթերի, սպիրտի, ջրի և սնդիկի հավասար մեծության կաթիներ և տեղափորեցեք ապակե թիթեղի վրա: Եթերի կաթին անմիջապես կգոլորշանա, փոքր ինչ հետո կանհետանա սպիրտի կաթիլը, իսկ ավելի ուշ՝ ջուրը: Մոդիկն այնքան դանդաղ կգոլորշանա, վոր նրա կաթիլի անհետանալը նկատելու համար պետք կլինի բավական յերկար ժամանակ:

Այստեղից յեղրակացնում ենք, վոր ջերմության նույն ասինանում տարբեր հեղուկներ տարբեր արագությամբ են գոլորշանում: Սպիրտը, բենզինը, եթերը արագ գոլորշացող հեղուկներ են, նրանց անվանում են ցնդող հեղուկներ: Այսպիսի հեղուկները կարելի յեպահել միայն փակ անոթների մեջ:

Հեղուկի գոլորշացման արագությունը կախված է վոչ միայն այդ հեղուկի տեսակից, աղեք:

I. Ջերմության ասինանից: Տաք հեղուկն ավելի արագ է գոլորշանում:

II. Հեղուկի բաց մակերեսվույթի մեծությունից: Վորքան մեծ է հեղուկի բաց մակերեսվութը, այնքան շատ գոլորշի կարող ե բարձրանալ: Լայն մակերեսվութի դեպքում գոլորշիներն ավելի շատ տեղից են բարձրանում:

III. Շրջապատող ոդի նորոգվելուց: Փշելու դեպքում գոլորշացումն ուժեղանում է, վորովհետև մենք դրանով թուլացնում ենք հեղուկի վրայի ճնշումը և թույլ տալիս, վոր մոլեկուլները բարձրանան:

Քամի որը լվացքն ավելի շուտ է չորանում:

Գոլորշացման հակառակ գործողությունը, այսինքն՝ գոլորշու հեղուկ դառնալը, կոչվում է խացում:

Հարցեր.


Լվացարարն ինչու ին լվացքը փռում:

Թաց շորն արագ չորացնելու համար կախում են վառարանի մոտ: Ինչու:

Գոլորշացման ժամանակ նյութի մոլեկուլների հետ ինչ և տեղի ունենում:

Դոլորշացումն ինչ նշանակություն ունի բուխի համար:

10. ՅԵՌՈՒՄ: Սըլվակը կիսով չափ լցրեք ջրով և դրեք կրավին: Զերմաշափն ընկղմեցեք ջրի մեջ (ավելի լավ է կախել) և հետևեցեք նրա ցուցմունքին: Յերբ ջերմության աստիճանը կլինի մոտավորապես 50, անոթի պատերին և հատակին կգոյանան գաղային պղպջակներ: Դա այն ողն ե, վոր լուծված է ջրի մեջ և այժմ արտադրվում է, վորովհետև տաք ջուրը չի կարողանում այնքան ող լուծել, վորքան սառը ջուրը: Պղպջակները հետզհետե մե-



Նկ. 7. Մասցի հալման և ջրի յեռման միջոցին ջերմության աստիճանը չի փոխվում:

ժանում են և շատանում: Նրանք բացի ողից պարունակում են նաև ջրային գոլորշի: Մոտավորապես  $90^{\circ}$ -ում անոթի հատակից բարձրանում են ավելի խոշոր պղպջակներ, բայց հեղուկի մակերեսութիւն չհասած անհետանում են: Վերջապես յերբ ջերմության աստիճանը հասնում է  $100^{\circ}$ -ի, այն դեպքում պղպջակները ջրի յերեսն են գուրս գալիս և պատովելով ազատում իրենց միջի գոլորշին: Դա նշան է, վոր ջուրը յեռում է:

Դիտեցեք մի քանի բոպե ջերմաշափը և միաժամանակ կրակն ուժեղացրեք. դուք տեսնում եք, վոր յեռման ընթացքում ջրի ասինանը մնում է անփոփոխ:

Այսպիսով յեռումը սովորական գոլորշացումից տարբերվում է նրանով, վոր

ա) գոլորշացումը կատարվում է ջերմության ամեն աստիճանում, իսկ յեռման ժամանակ նաև հեղուկի ներսից:

բ) գոլորշացման ժամանակ մոլեկուլները բաժանվում են հեղուկի յերեսից, իսկ յեռման ժամանակ նաև հեղուկի ներսից:

Ջրի յեռման կետը միայն այն գեպքում է  $100^{\circ}$ , յերբ մինուրտի ճնշումը նորմալ է, այսինքն՝  $760$  մմ է: Յերբ մինուրտի ճնշումը փոխվում է, փոխվում է նաև յեռման կետը:

Յուրաքանչյուր հեղուկ իր յեռման աստիճանն ունի:

## Աւատանիք.


Վորուել սպիրտի յեռման աստիճանը:

Քիմիական, այսինքն՝ բարակ պատեր ունեցող բաժակը կիսով չափ ջրով լցրեք և դրեք յեռուանու վրա, դնելով բաժակի տակ մետաղ ցանց:

Փորձանոթի մեջ քիչ (նորա ծավալի քառորդի չափ) սպիրտ ածեցեք և մեջը դրեք մի ջերմաչափ: Փորձանոթը տեղափորեցեք բաժակի մեջ:

Սպիրտային լուստերով ջուրը տաքացրեք, մինչև վոր սպիրտը կակսի յեռալ:

Սպիրտը վո՞ր աստիճանի մեջ է յեռում:



Նկ. 8. Սպիրտի  
յեռման աստիճանի  
գորոշումը:

Մի բանի հեղուկների յեռման աստիճանը

(Մթնոլորտի նորմալ ճնշման տակ)

Հեղուկ ջրածին . . . . .	$-253^{\circ}$	Ջուր . . . . .	$100^{\circ}$
Հեղուկ թթվածին . . . . .	$-183^{\circ}$	Սնդիկ . . . . .	$357^{\circ}$
Եթեր . . . . .	$35^{\circ}$	Հեղուկ . . . . .	$925^{\circ}$
Ալքոհոլ (սպիրտ)	. . . . .	$78^{\circ}$	


11. ՅԵՌՈՒՄ ԲԱՐՁՐ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ: Յերբ ջուրը բերանը բաց անոթի մեջ է յեռում, այն դեպքում գոլորշիներն անդադար հեռանում են և ջուրը մնում է մթնոլորտային ճնշման տակ, յեռման աստիճանն ել մնում է անփոփխ: Բայց յեթե անոթի բերանը փակենք և թույլ չտանք, վոր գոլորշիները հեռանան, այն դեպքում նրանք կհավաքվեն ջրի յերեսին և մեծ ճնշում գործ կդնեն: Հիմա պետք է ջրի ջերմության աստիճանն ավելի բարձրացնենք, վորպեսզի յեռումը աեղի ունենա: Բայց սրվակի միջոցով մեծ ճնշում չի կարելի ստանալ, վորովհետև խցանը կարող է դուրս ընկնել, կամ սրվակը կպայմի: Ավելի հարմար է Պապինի կարսան, վորի կափարիչը պտուտակների ոգնությամբ ամրացրած է կաթսային: Կափարիչն ունի մանոմետր, ջերմաշափ և ապահովիչ (նկ. 9):

Մանոմետը ցուց է տալիս գոլորշու ճնշումը: Ջերմաչափը ցուց է տալիս գոլորշու ջերմության աստիճանը: Կափարիչի մեջ պատրաստված է մի փոս, վորի մեջ սնդիկ է ածած: Ջերմաչափը դրվում է հենց ալդ սնդիկի մեջ: Գոլորշիների ջերմությունն անց-

նում է անդիկին, իսկ այդտեղից ել՝ ջերմաչափին: Ապահովիչը մի անցք է, վորը ծածկված է մետաղե փականով: Գոլորշիների ուժից փականը բարձրանում է, բայց խանգարում է լծակը. վերջինս առանձին ծանրոցի շնորհիվ ճնշում է գործ դնում փականի վրա:

Յերբ կաթսայի միջի ճնշումը բավականին մեծանում է և լծակն իր ծանրոցով այլևս չի կարողանում դիմադրել, փականը բարձրանում է և գոլորշու մի մասը դուրս է գալիս: Ապահովիչը պաշտպանում է կաթսան պայթումից:

Պապինի կաթսայի միջոցով կարելի լի ստանալ մեծ ճնշում (մի քանի հարյուր մթնոլորտ), բայց այս դեպքում ջերմության աստիճանը, նաև ճնշման, բավական բարձր է լինում ( $150^{\circ}$ ,  $200^{\circ}$  և ավելի):



Նկ. 9. Պապինի կաթսա:

Հետևյալ աղյուսակը ցուց է տալիս, թե ինչպես է փոխվում ջրի յեռման աստիճանը, յերբ արտաքին ճնշումը մեծանում է:

1 մթնոլորտ ճնշման տակ ջուրը յեռում է $100^{\circ}$ -ում	2	3	4	5	6	7	8	9	10	20
	»	»	»	»	»	»	»	»	»	»
	$121^{\circ}$	$134^{\circ}$	$144^{\circ}$	$152^{\circ}$	$159^{\circ}$	$165^{\circ}$	$171^{\circ}$	$176^{\circ}$	$180^{\circ}$	$213^{\circ}$
	»	»	»	»	»	»	»	»	»	»

Գնացքի շոգեկաթսան Պապինի կաթսա լի, վորի մեջ գտնվող գոլորշիների ճնշումը լինում է միքանի մթնոլորտ: Հետևյալ ջրի յեռման աստիճանն այդ կաթսաներում պետք է  $100^{\circ}$ -ից բարձր մինի: Դա կարելի լի գտնել աղյուսակի օգնությամբ, որինակ, յեթե մանոմետը ցուց տվեց 5 մթնոլորտ, նշանակում է ջրի յեռման աստիճանը հավասար է  $152^{\circ}$ :

12. ՅԵՌՈՒՄ ԹՈՒՑԼ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ. Սրվակի կամ բաժակի մեջ

կիսով չափ ջուր ածեցեք և տաքացրեք մինչև  $70-80^{\circ}$ : Դրեք սրվակը ողահան մեքենայի զանգի տակ և ողն սկսեցեք հանել: Քիչ հետո կտեսնեք, վոր ջուրն սկսում է յեռալ: Նշանակում է՝  $70-80^{\circ}$ -ի կարող է յեռալ, յեթե արտաքին ճնշումը թուլացնենք: Մոնջուրը կարող է յեռալ, յեթե արտաքին ճնշումը թուլացնենք: Մոնջուրը կարող է յեռալ, յեթե արտաքին ճնշումը թուլացնենք: Մոնջուրը կարող է յեռալ, յեթե արտաքին ճնշումը 418 մմ է, ջուրը բլանի գագաթին, վորտեղ մթնոլորտի ճնշումը 418 մմ է, ջուրը յեռում է  $84^{\circ}$ -ում:


Այս յերեսույթը կարելի է ցուց տալ և առանց ողահան մեքենայի:

Սրվակը կիսով չափ ջրով լցրեք և ապա յեռացրեք: Յեռման միջոցին ջրային գոլորշիներն իրենց հետ կհեռացնեն սրվակի մեջի ողը, վորը ճնշում է գործ դնում հեղուկի վրա: Միքանի ըոպեցից հետո, յերբ կհամոզվեք, վոր սրվակի մեջ ալիս ող չկա, սրվակը վերցրեք կրակից, բերանը խցանով պինդ փակեցեք և ապա՝ բերանը դեպի ցած դարձրած, ամրացրեք շտատիվի մեջ: Սրվակի մեջ ջրի վրա ալժմ ողի փոխարեն գոլորշին և ճնշում գործ դնում: Յեթե սրվակի վրա թաց շոր դնեք, կտեսնեք, վոր ջուրն սկսում է յեռալ, թեև նրա աստիճանն դնեք, կտեսնեք, վոր ջուրն սկսում է յեռալ, թեև նրա աստիճանն ալժմ 100<sup>o</sup> ից պակաս է: Թաց շորից գոլորշիները խտանում, ջուր ալժմ 100<sup>o</sup> ից պակաս է: Թաց շորից գոլորշիները խտանում է և ջուրն սկսում է յեռալ ցածը ճնշման տակ:

Զրի յեռման աստիճանները ցածր հեռումների դեպքում  
ճնշումը մթնոլորաներով  
(կոր թվերով գերցըած)

	Զրի յեռման աստիճանը
	100 <sup>o</sup>
1	80
0,47	70
0,31	60
0,20	50
0,12	40
0,07	30
0,042	20
0,023	10
0,012	0
0,006	

13. ԳՈԼՈՐՇԱՑՄԱՆ ԹԱԳՆՎԱԾ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ. Յեռման միջոցին, ինչպես տեսանք, հեղուկի ջերմության աստիճանը մնում է անփոփոխ, թեև հեղուկին ջերմությունը ենք հաղորդում: Նշանակում



Նկ. 10. Մթնոլորտի ճնշումը թուլացներու դեպքում ջուրը յեռում է 100<sup>o</sup> ից ցածը բարեկառնության մեջ:

եւ կլանված ջերմությունը ծախսվում է ինչվոր ներքին աշխատանքի համար: Նա թուլացնում է հեղուկի մոլեկուլների հարակցական ուժերը:

Զերմության այն հանակը, վոր անհրաժեշտ է 1 գր հեղուկը գոլորշիներու դարձնելու համար, կոչվում է գոլորշացման քազնված ջերմություն:

Փորձով գտնենք ջրի գոլորշացման թագնված ջերմությունը:

Կալորիմետրի մեջ ածենք 20<sup>o</sup>-ի 600 գր ջուր: Առանձին սրվակով ջուր յեռացնենք և ապա ռետինե խողովակով նրա գոլորշիներն անցկացնենք կալորիմետրի մեջ: Մի քանի ըռպեցից հետո խողովակը հեռացնենք կալորիմետրից և ջրի ջերմության աստիճանը նորից չափենք: Յենթաղրենք, թե այժմ կալորիմետրի ջուրն ունի 30<sup>o</sup>: Կալորիմետրը նորից կշռենք և վորոշենք ջրին հաղորդած գոլորշու կշիռը: Յենթաղրենք, թե կալորիմետրի ջուրը ծանրացել է 10 գրամով:

Այժմ հաշվենք: Կալորիմետրի ջուրն ստացավ  $600 \times 10 = 6000$  կալորիխա:

Այս ամբողջ ջերմությունն ստացվել է գոլորշուց: Գոլորշին դեռ գարձել է 100<sup>o</sup>-ի ջուր, արձակելով թագնված ջերմություն, իսկ հետո այդ ջուրն սկսել է սառչել և հասնել մինչև 30<sup>o</sup>:

Յեթե 1 գրամ գոլորշին արձակի չ կալորիխա, 10 գրամը կարձակի 10x կալորիխա: 10 գրամ ջուրը 100<sup>o</sup>-ի յեր, գարձավ 30<sup>o</sup>-ի, հետեապես նա կորցրեց  $10 (100 - 30) = 700$  կալորիխա:

$$6000 = 10x + 700, \text{ վորտեղից}$$

Հետապատճենած կինի 530 կալորիխալիք: Ուրեմն մեկ գրամ 100<sup>o</sup>-ի գոլորշին ջուր գառնալիս արձակում է 530 կալորիխա, կամ հակառակը՝ 1 գրամ 100<sup>o</sup> ի ջուրը նույն աստիճանի գոլորշի գարձնելու համար պետք է ծախսել 530 կալորիխա:

Ճիշտ հետազոտությունները ցուց են տալիս, վոր 1 գր 100<sup>o</sup> ջուրը նույն աստիճանի գոլորշի գարձնելու համար պահանջվում է 536 կալորիխա:

### Մի հանի հեղուկների գոլորշացման քազնված ջերմություն

Բերած թվերը ցուց են տալիս, թե 1 գր յեռման աստիճանի հեղուկը գոլորշի գարձնելու համար վարքան կալորիխա չի պահանջվում:

Զուր	536
Մպիրտ (ալքոհոլ)	200
Եթեր	90
Մոդիկ	62
Հեղուկ թթվածին	51

50 գրամ 100°-ի ջուրը նույն աստիճանի գոլորշի դարձնելու համար վհրքան կալորիա լին պետք:


10 գրամ 0°-ի սառուցը 100°-ի գոլորշի դարձնելու համար վհրքան կալորիա լին հարկավոր:

Կալորիմետրի մեջ գտնվում է 250 գրամ 20°-ի ջուր: Այդ ջուրը քանի աստիճան կտաքանա, լիթե նրա մեջ անցկացնենք 12 գրամ 100°-ի գոլորշի:

20 գրամ 100°-ի գոլորշին դարձավ 100°-ի ջուր: Այդ գոլորշին վհրքան ջեր մություն արձակեց:

10 գրամ 100°-ի գոլորշին դեռ դարձավ 100°-ի ջուր, ապա այդ 100°-ի ջուրը սառուց և դարձավ 0°-ի սառուց: Ընդամենը վհրքան կալորիա խլիք նրանից:

5 գրամ—35° սառուցը 100°-ի գոլորշի դարձնելու համար վհրքան կալորիա լին պետք (սառցի տեսակաբար ջերմությունը 0,5 ե),



Նկ. 11. Ջուրը գոլորշով  
տաքանում ե:

Աշխատանք.

Ջուրը գոլորշով տաքացրեք:

Սրվակը կիսով չափ ջուր լցրեք և դրեք լեռոտանու վրա: Սպիրտային լապտերով տաքացրեք այդ ջուրը մինչեւ վոր կակսի լեռալ (նկ. 11):

Վերցրեք մի բաժակ սառը ջուր և ջերմաչափով վորոշեցեք նրա ջերմության աստիճանը:

Սրվակի գոլորշատար խողովակի ծալքն ընկղմեցեք բաժակով ջրի մեջ:

1. Բաժակի ջրի ջերմուրյան ասինանը փոխվա՞մ ե:
2. Ինչո՞վ բացատրել այդ:
3. Բաժակի ջուրը օատանում ե, թե ինչնում. ինչո՞ւ.

14. ԳՈԼՈՐՇԱՑՄԱՆ ԹԱԳՆՎԱԾ ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԾՈՒԽԸԸ. Ջուրը գոլորշի դառնալիս կլանում ե բավական մեծ քանակությամբ ջերմություն. հետեւապես գոլորշու մեջ ջերմացին ավելի մեծ պաշար կա, քան հեղուկի մեջ: Յերբ գոլորշին հեղուկ ե դառնում, այդ պաշարն ազատվում ե և անցնում շրջապատող մարմիններին:

Կատարեցեք մի այսպիսի փորձ: Սրվակի մեջ քիչ ջուր ածեցեք և ապա բերանը փակեցեք խցանով, փորի միջով անցնում ե ապակե խողովակ: Յեռացրեք ջուրը: Յերբ խողովակի ծալքից գոլորշին կակսի առատորեն արձակվել, ապակե փորեն անոթ, որինակ, թեյի բաժակը պահեցեք գոլորշու մեջ. կտեմնեք, փոր ապակին ըրտնում ե: Դա ցուց ե տալիս, փոր գոլորշին, դիպչելով սառը բաժակի պատերին, կրկին հեղուկ ե դառնում, բայց բաժակը տաքանում ե: Գոլորշին ջուր դարձավ, նրա միջի ջերմությունն արտադրվեց և տաքացրեց բաժակը:

Այս հիման վրա շատ շենքեր տաքացնում են գոլորշով: Շենքերի ներսն անց են կացնում թուջե խողովակներ, վորոնց միջով առանձին կաթսալից գոլորշի լին թողնում: Գոլորշին խողովակների մեջ խտանում ե և իր միջի տաքությունը հաղորդում ե նրանց: Խողովակներից ել տաքանում ե բնակարանը:

Գոլորշին գործ են ածում նաև վորոշնութեր լիքելու համար:

15. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԸՆԿՆԵԼԸ ԳՈԼՈՐՇԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ: Զերմաչափի գունդը բամբակով փաթաթեցեք և ապա այդ բամբակը եթերով թրջեցեք: Եթերը արագորեն կգոլորշանա և մնդիկը ջերմաչափի մեջ կակսի լիջնել: Եթերը գոլորշանալու համար պետք լինած ջերմությունը վերցնում ե շրջապատից, ի միջի ալոց, նաև ջերմաչափից: Փորձը կարելի լին կատարել նաև ջրով, միայն ջուրը ավելի դանդաղ կգոլորշանա և ջերմաչափի մնդիկն այնքան ել արագ չի լիջնի:

Փորձանոթի մեջ մի քանի կաթիլ ջուր ածեցեք և նրա ստորին մտար, փորտեղ ջուրն ե, բամբակով փաթաթեցեք: Բամբակը եթերով թաց արեք և ապա սկսեցեք փչել: Քիչ հետո ջուրը կսուչի: Եթերը գոլորշացավ և գոլորշացման համար պետք լիդած ջերմությունը խլեց ջրից և ջուրը սառուց դառագ:

Մաղունդը եթերով թաց արեք և փչեցեք. շուտով նա կծածկվի լիդամով. բացատրեցեք:

Թեյլ շուտ սառցնելու համար ածում են ափսեի մեջ և ապա փչում. ինչնու:

Ինչնու թաց ձեռքը ցրտություն ե զգում:

Ամառը ջուրը կավե ամանի մեջ սառն ե մնում. ինչնու:

Տաքություն ունեցող հիվանդի ճակատին թաց շոր դնելն ինչ նշանակություն ունի:

#### ԳՈԼՈՐՇԱՑՄԱՆ ՆԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵԼ ՀԱԳԵՑՆՈՂ ԳՈԼՈՐՇԻՆԵՐԸ: Գոլորշիները բարձրանալով հեղուկի մակերեսութից, սովորական պայմաններում խառնվում են ողի հետ և ցրվում: Այդ պատճառով գոլորշիների հատկություններն ուսումնաբար համար այնպես պետք ե անել, փոր ողը չխառնվի գոլորշիների հետ:

Վերցնենք մի ծալքը փակ ապակի խողովակ, մնդիկով լցնենք և ապա շրջենք մնդիկով լիքը թասի մեջ, ինչպես այդ արինք ծանրաչափ պատճառելիս. կատանանք ուրիշելլան դատարկության մեջ մտցնենք մեկ կամ յերկու կաթիլ եթերը, փորը, հասնելով տորիշելլան դատարկության, անմիջապես գոլորշանա: Այդ գոլորշիները ճնշում գործ կդնեն թե խողովակի և թե մնդիկի մակերեսութիւնը վրա և դրանից խողովակի մեջ մնդիկը փոքր ինչ կցած-

բանա: Այստեղից մենք յեզրակացնում ենք, վրբ գոլորշին ել գազի նման առաձգականություն ունի, վորի մեծության մասին գազափար ենք կազմում սնդիկի իջած սյան բարձրությամբ: Յեթե խողովակի ծանրաչափակին սլունը 76 սմ բարձրություն ուներ և գոլորշիների ճնշումից նա ընդունեց 50 սմ բարձրություն, ապա գոլորշու գործ դրած ճնշումը հավասար կլինի 26 սմ-ի:

Եթերի նոր-նոր կաթիլներ մըտցնելիս, մենք տեսնում ենք, վոր ծանրաչափակին սրուն ավելի ու ավելի յե իջնում, բայց միայն մինչեվ մի վորուս սահման: Յերբ սնդիկը մոտ 44 սմ կիջնի, այսինքն խողովակի մեջ սնդիկը կունենա 32 սմ բարձրություն, այն ժամանակ մտցրած եթերալին կաթիլն այլևս չի գոլորշանա, այլ կմնա հեղուկ վիճակու է: Գոլորշու նեռումն այլեվս չի մեծանա, սնդիկն ել չի իջնի (սնդիկափակին սյան վրա հավաքված հեղուկ եթերի ճնշումը կամ ծանրությունը այնքան չնչին է, վոր մենք նրան նկատի չունենք):

Այսպիսով, յերբ եթերալին գոլորշին վորու խորիշուն և ունենում, այն դեպքում այլևս գոլորշացում

տեղի չի ունենում. ասում ենք՝ վերցրած տարածությունը հազեցել ե գոլորշիներով: Ինքը գոլորշին կոչվում ե հազեցնող գոլորշի:

Հազեցնող գոլորշին այնպիսի խորիշուն ունի, վոր նրա մեջ հեղուկը կառող ե գոլորշանալ, այսինքն՝ յեթե նրա մեջ նոր գոլորշիներ կարող են տեղափորվել, այն դեպքում այդ գոլորշին կոչվում ե վոչ հազեցնող:

Մենք կարող ենք տարածությունը հազեցնել ջրի, սպիրտի կամ այլ հեղուկի գոլորշիներով:

Պարզվում է, վոր միենալով բարեխառնության մեջ տարբեր հեղուկների հազեցնող գոլորշիները տարբեր նեռում ունեն:


Վերցնենք 4 ծանրաչափակին խողովակներ և կրկնելով Տորիչելլու փորձը, ստանանք տորիչելլան զատարկություններ (նկ. 13): Խողովակներից մեկը թողնենք այնպես, ինչպես կա: Նա ծանրաչափի դերը կկատարի: Ա խողովակի մեջ մտցնենք ջուր, Տ-ի մեջ՝ սպիրտ, Ե-ի մեջ՝ եթեր: Ամեն մի

<sup>1</sup> Մեր փորձի ժամանակ այդպիսի խոռոչյուն ստացվում է 20°-ի բարեխառնության մեջ, յերբ գոլորշիների ճնշումը լինում է 44 սմ:

հեղուկից խողովակի մեջ այնքան մտցնենք, վոր սնդիկի սյան վրա ստացվի մի բարակ շերտ: Այս պայմաններում մենք կարող ենք համոզված լինել, վոր տորիչելլան տարածությունը հազեցել ե գոլորշիներով: Համեմատելով այդ խողովակների սնդիկի սրունը ծանրաչափի սյան հետ, մենք տեսնում ենք, վոր 20° բարեխառնության մեջ ջրի գոլորշիների ճնշումից սնդիկն իջնի ե 1,7 սմ, սպիրտից՝ 4,5 սմ, իսկ եթերից՝ 44 սմ:

Նկատենք, վոր «տորիչելլան» դատարկությունն» խսկապես դատարկություն չե, նա հազեցած է սնդիկափակին գոլորշիներով, բայց այդ գոլորշիների ճնշումը (20°-ում 0,0013 մմ) այնքան չնչին է, վոր գործնական հաշիվների ժամանակ նրան նկատի չենք ունենում:

17. ԳՈԼՈՐՇՈՒ ՃՆՇՄԱՆ ԿԱ-  
ԽՈՒՄԸ ԾԱՎԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻՑ: Վերցնենք յերկու խողովակ և  
դարձալ կրկնենք Տորիչելլու փորձը:  
Բայց այժմ խողովակները պետք ե  
բարական յերկար լինեն, իսկ անոթը,




Նկ. 13. Բ—Բարոմետրային խողովակի և, Ա—խողովակի մեջ ջուր և, Տ—խողովակի մեջ սպիրտ, իսկ Ե—խողովակի մեջ եթեր:

վորի մեջ ընկղմում ենք խողովակի բաց ծալքը, խոր (նկ. 14):  
Խողովակներից մեկի մեջ ստանանք հազեցնող գոլորշիները մեջ մտուած իսկ հազեցնող գոլորշի:

Վորոշենք թե առաջին և թե յերկրորդ խողովակի մեջ գտնվող գոլորշը ծալքալը:

Խողովակներից մեկը, վորի մեջ զանվում ե վոչ հազեցնող գոլորշին, քիչ խորասուզենք սնդիկի մեջ (նկ. 14, խողովակ 1 և 2), Մենք տեսնում ենք,




Նկ. 14. 1—խողովակի մեջ վոչ հազեցնող գոլորշիները; 3—խողովակի մեջ հազեցնող գոլորշիները; 5—խողովակի ժամանակափակին հազեցնող գոլորշին:

Վոր գոլորշու ծավալը փոքրանում է, բայց ձնշումը մեծանում է: Ձնշման մեծանալը լեռնում և նրանից, վոր խողովակի մեջ սնդիկի սյունը ցածրանում է: Փորձերը ցուց են տալիս, վոր յերբ տարածությունը չհագեցնող գործու ծավալը միքանի անգամ փորձանում է, նեռում նույնան անգամ մեծանում է:

Ուրեմն հագեցնող գործու նեռումը հակադարձ համեմատական է ծավալին (նույն բարեխառության մեջ) կամ, կարելի լի ասել, հագեցնող գործու ծավալը յեզ նեռում փոփոխվում են Բոլլ-Մարիոսի որենի համաձայն:

Այժմ իշեցնենք այն խողովակը, վորի մեջ գտնվում են հագեցնող գոլորշիներ: Խողովակը խորասուզելիս տեսնում ենք, վոր գոլորշու ծավալը փոքրանում է, բայց սնդիկի վրայի հեղուկի շերտը հաստանում է. սնդիկի գոլորշու ձնշումը անփոփոխ և մնում (տես նկ. 14, խողովակ 3 և 4): Բարձրացնելու դեպքում ծավալը մեծանում է, բայց, բանի դեռ սնդիկի վրա հեղուկի շերտ կա, ձնշումը մնում է նույնը:




Նկ. 16. Հագեցնող գոլորշու ձնշումը սառեցնելիս փոքրանում է:

Այսպիսով տեսնում ենք, վոր հագեցնող և վոչ հագեցնող գոլորշիների մեջ մեծ տարրերություն կա: Ծավալի փոփոխության դեպքում հագեցնող գործու նեռումը մնում է նույնը, իսկ վոչ հագեցնողին՝ փոփոխմ է:

18. ՀԱԳԵՑՆՈՂ ԳՈԼՈՐՇՈՒ ՃՆՇՄԱՆ ԿԱԽՈՒՄԸ ԶԵՐՄԱՒԹՅԱՆ ԱՍՏԻճԱՆԻՑ: Խողովակի այն մասը, վորտեղ գտնվում է եթեր և նրա հագեցնող գոլորշին, փոքր ինչ տաքացնենք (նկ. 15): Զերմությունից նոր եթեր կգոլորշանա և դրանից գոլորշու ձնշումը կծեծանա. սնդիկը խողովակի մեջ քիչ կիշ-նի: Յեթե խողովակը սառեցնենք, սորինակ, սառուց քսենք, կտեսնենք, վոր գոլորշու մի մասը խտանում, հեղուկ և դառնում և դրանից գոլորշու ձնշումը նվազում է, վորի հետեանքով սնդիկը խողովակի մեջ քիչ բարձրանում է (նկ. 16):

Կարելի լի եթերի փոխարեն վերցնել վորեն ուրիշ հեղուկ և կրկնել



Նկ. 17. Հագեցնող գոլորշու ձնշումը տաքացնելիս մեծանում է:

որինակ, սառուց քսենք, կտեսնենք, վոր գոլորշու մի մասը խտանում, հեղուկ և դառնում և դրանից գոլորշու ձնշումը նվազում է, վորի հետեանքով սնդիկը խողովակի մեջ քիչ բարձրանում է (նկ. 16):

Նույն փորձը: Բոլոր դեպքերում կնկատենք, վոր հագեցնող գործու նեռումը տաքացնելիս մեծանում է, իսկ սառեցնելիս՝ բավարար է:

Հետեւյալ աղյուսակը ցուց է տալիս մի քանի հեղուկների հագեցնող գոլորշու ձնշումը տարրեր չերմության աստիճաններում:

Հագեցնող գործիների նեռումը

Զերմության աստիճան	Ե թ ե ր (ետիւային)	Ալքոհոլ (գի- նու սպիրտ)	Զ ո ւ ր
0°	18,6սմ	1,3սմ	0,46 սմ
10°	29 »	2,4 »	0,9 »
20°	44 »	4,5 »	1,7 »
30°	64 »	7,9 »	3,1 »
35°	76 »	—	—
40°	92 »	13,4 »	5,5 »
50°	127 »	22 »	9,2 »
60°	174 »	35 »	14,7 »
70°	—	56 »	29,2 »
78°	—	76 »	—
80°	—	83 »	35,3 »
90°	—	120 »	52,4 »
100°	—	167 »	76 »
120°	—	—	2 մթնոլ.
150°	—	—	4,7 »
200°	—	—	15,2 »

Նորմալ ձնշման (76 սմ) տակ եթերը լիռում է 35°-ում, սպիրտը՝ 78°-ում, ջուրը՝ 100°-ում: Պարզվում է, վոր հենց այդ աստիճաններում ել հագեցնող գոլորշու ձնշումը հավասարվում է մթնոլորտի նորմալ ձնշման (76 սմ): Այժմ հասկանալի կլինի հետեւյալ որենքը:

Հեղուկը յեռում է ջերմության այն ասիմանում, ինչ ասիմանում հագեցնող գործու նեռումը հավասարվում է արտաքին նեման:

Հարցեր:

Սպիրտի ջերմության աստիճանն է 50: Արտաքին ձնշումը վհրան պետք է լինի, վոր սպիրտն այդ աստիճանում լիռ գա:

Չուրն ինչ ձնշման տակ պետք է լինի, վոր լիռա 25°-ում:

19. ԳՈԼՈՐՇՈՒ ՀԵՂՈՒԿ ԴԱՐՁՆԵԼԸ: Մենք տեսանք, վոր հեղուկները ջերմության աղղեցնությունից գոլորշանում են և ընդունում գաղալին վիճակ: Հիմա տեսնենք, թե ինչպես կարելի լի գոլորշին հեղուկ դարձնել:

Վերցնենք մի ծալրը փակ, լիրկար խողովակ, սնդիկով լցնենք և բաց ծալրով լցնենք սնդիկով լի բավականաչափ խոր անոթի մեջ: Պիպետի ողնությամբ առրիշելլան դատարկության մեջ մտցնենք միքանի կաթիլ եթերը և ստանանք տարածությունը չհագեցնող գոլորշիները: (նկ. 17):

Յեթե խողովակը կամաց կամաց խորասուզենք սնդիկով մեջ, ալսինքն այնպես անենք, վոր գոլորշու ծավալը փոքրանա, այն ժամանակ կտեսնենք, վոր գոլորշին խտանում և և սնդիկով մակերեսութիւնի վրա գոյանում և եթերի բարակ շերտ: Ավելի խորասուզենք կարելի լի ամբողջ գոլորշին հեղուկ դարձնել: Յեթե միաժամանակ խողովակը սառուցով ցրտացնենք, գոլորշին ավելի շուտ կխտանա:

Յերբ հեղուկը գոլորշանում ե, մենք ջերմություն ենք ծախսում: Այդ ջերմությունից հեղուկի մոլեկուլների կապը թուլանում է և նրանք ցրվում են տարածության մեջ, ընդունելով մեծ ծավալ: Յեթե ցանկանում ենք, վոր գոլորշին հեղուկ դառնա, մենք պետք ե այնպես անենք, վոր մոլեկուլները կրկին մոտենան իրար և կպչեն: Այս այդ և պատճառը, վոր գոլորշին ձնշման ենք լենթարկում կամ սառեցնում:


20. ԳԱԶԵՐԻ ՀԵՂՈՒԿ ԴԱՐ-  
ՉՆԵԼԲ: Ճնշման ազդեցության տակ, ինչպես և սառեցնելիս, գազերը նույնպես խտանում են (համաձայն Բոյլ-Մարիոտի և Թե-լյուսակի որենքների): Այդ պատճառով գազերը կարող ենք նկատի ունենալ իրրե այնպիսի հեղուկների չփակեցնող գոլորշեներ, վորոնց յեռման աստիճանը շատ ցածր է:

Անգլիացի Ֆարագելը առաջին անգամ կարողացավ հեղուկ դարձնել մի քանի գազեր: Այդ նպատակով Ֆարագելը գազերը և ճնշման եր լենթարկում և ցըրտացնում. որինակ՝ քլորը հեղուկ դարձնելու համար նա հետեւալ միջոցին դիմեց: Վերցրեց հաստ պատեր ունեցող ապակե ճնկաձև խողովակ: Նրա փակ ծայրում տեղափորեց մի այնպիսի նյութ, վոր տաքացնելու ժամանակ արտադրում ե քլոր. ապա խողովակի բաց ծալրը ուժեղ կրակի ոգնությամբ հալեց և փակեց (նկ. 18):

Նյութ պարունակող ծալրն ակսեց տաքացնել, իսկ մյուսը շրջապատեց ցրտացնող խառնուրդով: Տաքացնելիս անգաղար արտադրվում եր քլոր և խողովակի ներսը ճնշումը հետզհետե մեծանում եր: Քլորը, լենթարկվելով բավական մեծ ճնշման և միաժամանակ սառչելով, խտանում եր և հեղուկ դառնում: Այս փորձը կատարելը վտանգավոր է, վորովհետեւ ներսը գտնվող մեծ ճնշումից անոթը կարող է պայթել:


Հեշտությամբ կարելի յե հեղուկ դարձնել նաև ածխաթթու գազը: Հեղուկ ածխաթթուն ներկայում մեծ գործադրություն ունի կանքում, որինակ, նա գործ և ածխում լինուած և այլ խմբչքներ պատրաստելու համար:

Հեղուկ ածխաթթու ստանալու համար մեծ գլանների մեջ շիկացնում են մի քանի հանքեր (կրաքար, մագնեզիտ): Արտադրվող ածխաթթու գազն ոգածուղ մեքենայով մղում են մետաղե հատուկ գլանների մեջ, վորտեղ նա սովորական բարեխտառնության մեջ 50—60 մթնոլորտ ճնշման տակ մնում է հեղուկ վիճակում:




Նկ. 17. 1, 2—չփակեցնող գոլորշի յե: 3, 4 և 5—հազեցնող գոլորշին հետզհետե ջուր և դաշում: 6, 7 և 8—ամբողջ գոլորշին ջուր և դաշուր: 9—բարոմետրային սյուն է:

Յեթե հեղուկ ածխաթթու պարունակող գլանը պահենք թեք գրությում և ապա նրա ծորակը բանանք ու հեղուկն ածենք մահուղե պարկի մեջ, կտեսնենք, վոր նա արագորեն գոլորշանում է: Այդ գոլորշացման ժամանակ այնքան ջերմություն է կլանվում, վոր մնացած հեղուկ ածխաթթուն սառչում է և զառնում ձկունանման մի զանգված, վորի ջերմության աստիճանը լինում է—80:



Նկ. 18. Գազերի հեղուկ գարձնելը  
Ֆարագելի յեղանակով:



Նկ. 19. Պինդ ածխաթթու ստանալը:

Կարելի յե պինդ ածխաթթուն լուծել եթերի մեջ և ստանալ—90°-ի լուծուլիթ: Յեթե այդ լուծուլիթի մեջ փորձանոթով սնդիկ գնենք և ապա նրա մեջ ընկդմենք մետաղե լարի կեռ ծալրը, կտանանք հետեւալ հետաքրքիր չերկուլիթ: Սատորի ցրտությունից սնդիկը կպնդանա և լարի ազատ ծալրից բանելով կարելի յե պինդ սնդիկը անօթից հանել, նրանով փշրել ապակի և ալն:

21. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԱՄՏԻԾԱԾԱՆ: Ֆարագելը չկարողացավ հեղուկ դարձնել թթվածինը, ջրածինը և միքանի այլ գազեր, չնայելով վոր այդ գազերը նա յենթարկում եր մեծ ճնշման և միաժամանակ ցրտացնում եր: Այդ պատճառով ել հիշալ գազերը լերկար ժամանակ համարվում ելին հաստատուն գազեր:

Հետագա հետազոտությունները ցույց տվին, վոր անխտիր բոլոր գազերը հնարավոր և հեղուկ դարձնել, միայն այս գեպքում անհրաժեշտ է, վոր գազը մի վարոշ աստիճանից ցածր լինի: Անդրւուս Փիզիկոսը ցույց տվեց, վոր ածխաթթու գազը մինչև 30,9°-ը դեռ ևս կարելի յե լինում հեղուկ դարձնել, յենթարկելով 77 մթնոլորտ ճնշման: Բայց իրք այդ գազի ջերմության աստիճանը 31°-ից բարձրանում է, այն գեպքում վոչ մի ճնշմամբ անկարելի յե լինում նրան հեղուկ դարձնել:

Այն աստիճանը, վարից բարձր գազը վոչ մի նեմակը հեղուկ դարձնել չի լինում, կոչվում է զերմուրյան կրիտիկական աստիճան:

Յուրաքանչյուր գազ իր կրիտիկական աստիճանն ունի: Վորովհետե մի քանի գազերի կրիտիկական աստիճանները չափազանց ցածր են և այդպիսի աստիճաններ Ֆարագելի ժամանակ կեռ ևս չելին ստացված, ուստի գիտնականներին թվում եր, թե «հաստատուն» գազերը հնարավոր չե հեղուկ դարձնել: Գործ գնելով ջերմության չափազանց ցածր աստիճաններ, մինչև—272, 18°, հնարավոր յեղավ հեղուկ դարձնել նաև «հաստատուն» գազերը:

Մի քանի նյութերի ջերմուրյան կրիսիկական աստիճան:

	Կրիսիկական աստիճան	Ցեղաման աստիճան
Հելիում	• • . . . . .	—268°
Ջրածին	• . . . . . .	—234°
Աղուս	• . . . . . .	—146°
Թթվածին	• . . . . . .	—118°
Ածխաթթու գազ	• . . . . . .	31°
Ածմակակ	• . . . . . .	131°
Քլոր	• . . . . . .	145°
Եթեր	• . . . . . .	195°
Սպիրտ (ալքոհոլ)	• . . . . . .	242°
Զուր	• . . . . . .	365°
		100°

Ի՞նչ է նշանակում կրիտիկական աստիճան:

Ինչու ֆարագեցը կարողացավ քլորը հեղուկ դարձնել, իսկ ջրածինը վոչ դազը հեղուկ դարձնելու համար ի՞նչ պայմաններ են պետք:

22. Հեղուկի ՈՒ: Ներկայումս հատուկ մեքենայի ոգնությամբ ստացվում ե մեծ քանակությամբ հեղուկ ոդ, վորը գործ ե ածվում զանազան դիտական փորձերի համար:

Մեքենայից անմիջապես ստացված հեղուկ ոդը պղառը ե լինում, վորվհետև նրա մեջ լողում են պինդ ածխաթթվի բուրեղներ. Այդ հեղուկ ոդը կարելի յե քամոցով քամել, վորից հետո նա լինում ե թափանցիկ և կապտագույն, կապուտ գունը պատկանում է հեղուկ թթվածնին. Մթնոլորտի հնագույն տակ հեղուկ ոդը շարունակ լինում ե, ցույց տալով —190°, վորովհետև հեղուկ ազոտն ավելի արագ ե գոլորշանում, քան թե թթվածինը, ուստի հեղուկը հետզհետե հարստանում ե թթվածնով. միաժամանակ կապուտ գունն ել ուժեղանում ե:

Հեղուկ ոդը պահում են «Դյուտարի անոթում» (նկ. 20): Նա կրկնակի պատեր ունեցող մի անոթ ե, վորի ներքին յերեսը ծածկված ե արծաթի շատ բարկ շերտով, իսկ պատերի արանքից ոդը բոլորովին հանված: Այս բոլորը նրա համար ե, վոր արտաքին մարմինների ջերմությունը հեղուկ ոդին չանցնի: Այդ պիսի անոթների մեջ մեկ լիտր ոդը կարելի յե պահել մի ամբողջ շաբաթ:

1. Հեղուկ ոդի մեջ գցած մարմինները պնդանում են և գառնում փխրուն: Կապտարե զանգակը հեղուկ ոդով ցրտացնելու դեպքում հնչում ե բավական նկ. 20. Դյուտարի անոթ

2. Հեղուկ ոդի ջերմության տատիճանում համարյա բոլոր քիմիական ըեակցիաները դադարում են: Հեղուկ ոդով ցրտացրած աղաթթուն նատերումի վրա այնու չի ազդում:

3. Սպիրտը հեղուկ ոդի մեջ ածելիս ընդունում ե խոշոր կաթիլների ձև, վորոնք այն աստիճանի պնդանում են, վոր անոթը ցնցելիս չըլիչըլիոց են արձակում:

4. Յեթե մետաղե թեխամանը դնենք սառուցի վրա ե ապա նրա մեջ հեղուկ ոդ ածենք, կտեսնենք, վոր այդ ոդը սկսում ե լինալ, արձակելով գոլորշիներ, ճիշտ այնպես, ինչպես թեխամանով թեյը լինում ե թիժ վառարանի վրա:



23. ՄՅՈՒՄ ԳԱԶԵՐԻ ՀԵՂՈՒԿ ԴԱՐՁՆԵԼԻ: Յեթե հեղուկ ոդը տեղավորենք ոդահան մեքենայի զանգի տակ և ապա ոդը հանենք, կտեսնենք, վոր այդ հեղուկ ոդը ավելի ցածր ճնշման տակ լինալով, կատաչի մինչև —220°: Դյուտարը այդ ցուրտ հեղուկով սառեցրեց սաստիկ ճնշած ջրածինը. յերբ ջրածինն ընդարձակվեց, այն գեպքում նա ավելի սառավ և սկսեց հեղուկ դառնալ: Դյուտարը կարողացավ ստանալ նաև պինդ ջրածին:

Անհամհատ գժվար եր հեղուկ դարձնելը: 1908 թ. Կամերլիք Ռնկանը՝ ոգտվելով հեղուկ ջրածնի ցրտությամբ՝ կարողացավ հեղուկ վոչ միայն հեղուկ դարձնել, այլ և պնդացնել (-272, 180-ում):

ՈՐԻ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ողի մեջ քիչ թե շատ քանակությամբ ջրային գոլորշի յե գտնվում: Բայց այդ գոլորշիները ոդը սովորաբար չեն հագեցնում. այդ յերեւում ե նրանից, վոր լվացքը չորանում ե, բաց անոթի ջուրը հետզհետե գոլորշանում ե և այլն:

Մենք գիտենք, վոր տարածությունը հազեցնելու համար այնքան ավելի շատ գոլորշի յե պետք, վորքան ջերմության աստիճանը բարձր ե: Գոլորշը այն քանակը, վոր տաք ոդը չի հագեցնում, կարող ե ցուրտ ոդը հագեցնել:

Ընդհանրապես յեթե ոդի մեջ շատ ջրային գոլորշիներ են գտնվում, մենք ոդը խոնալ ենք համարում, իսկ յեթե ոդը քիչ ջրային գոլորշի յե պարունակում, մենք ոդը համարում ենք չոր:

Ողի խոնավությունը չափելու համար կարելի յե պատրաստել մի հասարակ գործիք, վոր կոչվում ե պսիխումեր:

Փորձ 1. Վերցրեք յերկու այնպիսի ջերմաչափեր, վորոնք նույն ցուցմունքը տան: Դրանցից մեկի գունդը մաքուր քողով կամ բատիստով փաթեցեք. այդ կտորը պետք ե նախապես թրջած լինի և գնդակին հավասարապես կպած լինի (մեկ շերտով): Գնդակից բարձր՝ կտորը հավաքեցեք և թելով կապեցեք ջերմաչափի խողովակին. հետո կտորը հարթացրեք, կտորը թելով հավաքեցեք ու կտպեցեք, բայց ավելի թուլ, բան վերը: Բատիստի ստորին ազատ ծայրն ընկղմեցեք մակուր ջրի մեջ: Յերկու ջերմաչափն ել ամրացրեք վորեն հենարանի վրա: Ինչու պատրաստեցիք պսիխումերը: Պսիխումերի չոր ջերմաչափը ցույց ե տալիս ոդի ջերմության աստիճանը: Թաց ջերմաչափը ցույց ե տալիս ավելի ցածր բարեխառնություն, վորովհետև բատիստից ջուրը գոլորշանում ե և անհրաժեշտ ջերմության մի մասը վերցնվում ե թաց ջերմաչափից:

Մի յերկու շաբաթվակ ընթացքում որական մի քանի անգամ գիտեցեք ջերմաչափների ցուցմունքը (ստվերում), միաժամանակ նշանակելով յեղանակը (անձրև, մառախող, չոր և այլն):

Այդ գրասովություններից դուք կգաք հետեւյալ յեղակացության:

24. ՋՐԱՅԻՆ ԳՈԼՈՐՇՈՎ ՀԱԴԵՑԱԾ ՅԵՎ ԶՀԱԳԵՑԱԾ ՈԴ: Յերբեմն յերեն ջերմաչափներն ել նույն բարեխառնությունն են ցույց տալիս: Այդ նշանակում ե, վոր բատիստից ջուր չի գոլորշանու: Դա տեղի ունի, որինակ, յերկարատև անձրևների կամ մառախուզի ժամանակ: Յեթե ջուրն ալլես չի գոլորշանու, ալլեն նշանակում ե, վոր տվյալ պայմաններում ոդն անքան ցուլորշի յե պարունակում, վոր նրա մեջ նոր գոլորշի ալլես չի կարող տե-

Յերբ ողի մեջ այնքան ջրային գոլորշի կա, վոր նոր քանակությամբ գոլորշի ալկո չի տեղավորվում, ասում ենք՝ ողի գոլորշը հագեցած ե:

Արկի ճառագայթների ազդեցության տակ մառախուղը կորչում ե. դա ցուց ե տալիս, վոր լեռը ողը տաքացվի, այն դեպքում նա ավելի շատ գոլորշի կարող ե պարունակել: Յեկ ընդակառակը, մառախուղը կարող ե առաջ գալ այն դեպքում, իերը շատ գոլորշի պարունակող տաք ողի հետ խռովի ողի ցուց հոսանք. տաք ողի բարեխառնությունը դրանից կեջնի. այդ պատճառով ողն ալկո առաջվա չափ գոլորշի չի կարող պարունակել և գոլորշու մի մասը կխտանա, մառախուղ կդառնա: Դա տեղի ունի, որինակ, ծովերում: Գիշերը և ձմեռը ցամաքն ավելի սառն ե լինում, քան ծովը: Ճամաքից փշում ե ցուց քամին և ցրտացնում ծովի վրա գտնվող համեմատաբար տաք ողը. դրանից գոյանում ե մառախուղ:

Յեր դիտողությունների ժամանակ դուք կտեսնեք, վոր ջերմաչափները մեծ մասամբ տարեկ բարեխառնություն են ցուց տալիս. նշանակում ե այդպիսի դեպքում ջուրը գոլորշանում ե, ողը հագեցած չե:

25. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ: Յենթադրենք, թե 18°-ի ողը հագեցնելու համար պետք ե 12,8 գրամ գոլորշի, մինչդեռ ողում կա միայն 9,6 գրամ: Ասում ենք՝ ողի հարաբերական խոնավությունն ե 75%:

$$\frac{9,6}{12,8} = 0,75 \text{ կամ } 75\%$$

Հարաբերական խոնավությունը ցույց ե տալիս ողում գտնվող գոլորշը յել նույն բարեխառնության մեջ ողը հագեցնող գոլորշը բանակների հարաբերությունը:

Համարականի յե, վոր լեռը ողը հագեցած ե, նշանակում ե հարաբերական խոնավությունը 100% ե:

26. ՊՍԻԽՐՈՄԵՏՐԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ: Հատուկ աղյուսակներ կան, վորոնց ոգնությամբ հեշտությամբ վորոշում ե հարաբերական խոնավությունը: Ահա այդպիսի աղյուսակներից մեկը.

Զոր ջերմաչափի ցուցմունքների տարեկությունը	Զոր և խոնավ ջերմաչափների ցուցմունքների տարեկությունը										
	0°	1°	2°	3°	4°	5°	6°	7°	8°	9°	10°
0°	100	81	63	45	28	11					
2°	100	84	68	51	35	20					
4°	100	85	70	56	42	28	14				
6°	100	86	73	60	47	35	23	10			
8°	100	87	75	63	51	40	28	18	7		
10°	100	88	76	65	54	44	34	24	14	4	
12°	100	89	78	68	57	48	38	29	20	11	
14°	100	90	79	70	60	51	42	33	25	17	9
16°	100	90	81	71	62	54	45	37	30	22	15
18°	100	91	82	73	64	56	48	41	34	26	20
20°	100	91	83	74	66	59	51	44	37	30	24
22°	100	92	83	76	68	61	54	47	40	34	28
24°	100	92	84	77	69	62	56	49	43	37	31
26°	100	92	85	78	71	64	58	50	45	40	34
28°	100	93	85	78	72	65	59	53	48	42	37
30°	100	93	86	79	73	67	61	55	50	44	39

Որինակով ցուց տանք, թե ինչպես են աղյուսակը գործածում: Յեթաղբենք, թե ձեր փորձերի ժամանակը չոր ջերմաչափը ցուց տվեց 22°, իսկ թացը՝ 16°. տարեկությունը կլինի 6°:

Հարաբերական խոնավությունը գտնելու համար պետք ե վերցնել այն տողը, վորի սկզբում գտնվում է 22°-ը և այն սունչակը, վորի գլխավերնը դրված է 6°:

22°-ի տողի և 6°-ի սունչակի հատման տեղում գտնում ենք 54% և նշանակում ե հարաբերական խոնավությունն ե 54%:

Յեր կատարած դիտողություններից վորոշեցնեք հարաբերական խոնավությունը այս կամ այն տվյալների դեպքում:

27. ՄԱԶԵ ԽՈՆԱՎԱԶԱՓ: Հարաբերական խոնավությունը գտնելու համար բավական հարմար ե Սոսայուրի մազե խոնավաչափը: Նա հիմնված է մարդկային մազի հետեւալ հատկության վրա: Յերը ողի հարաբերական խոնավությունը մեծանում ե, մազը յերկարում ե, իսկ յերը խոնավությունը պակասում ե, կարճանում ե:

Խոնավաչափը պատրաստելու համար մարդու մազը եթերի միջոցով մարդիկ մաքրում են և ապա նրա մի ծալիք ամրացնում են գործիքին, իսկ մյուսը ձգում են մի փոքրիկ ճախարակի վրայով: Մազի ստորին, աղատ ծալիքից կախում են մի փոքրիկ ծանրոց, վորը մազը ձգած է պահում: Յերը հարաբերական խոնավությունը փոփոխվում ե, մազը կամ կարճանում ե կամ յերկարում. այդ ժամանակ ճախարակը պատավում է կամ գեպի աջ կամ գեպի ձախ և իր վրա ամրացրած սլաքի ոգնությամբ ցուց ե տալիս հարաբերական խոնավությունը (առ կոսներով):

Մարդու համար 50% ից մինչև 80% հարաբերական խոնավությունը նպաստավոր է համարվում: Յեթե խոնավությունը 50% ից պակաս ե, այն դեպքում ողը չոր ե, իսկ յեթե 80% ից բարձր ե՝ խոնավ:

## ՉԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՄԵՍ ԵՆԵՐԳԻԱ


28. ԳԱՂԱՓԱՄ ԵՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՍԻՆ: Մենք տեսանք, վոր հոսող ջուրն ընդունակ է աշխատանք կատարելու, որինակ, նա պատում է ջրաղացի անիվը, գլորում է քարի կտորներ և այն: Ասում ենք՝ հոսող ջուրն աւսուանի ընդունակ է, կամ հոսող ջուրն ունի եներգիա, յեռանուն: Բայց այդ ջուրը, անիվը կամ տուրբինը, թողնելուց հետո, այնու առաջվա արագությունը չունի. զրա փոխարեն տուրբինն ալժմ պատվում է և կարող է զանազան աշխատանքներ կատարել, հետեւապես ունի եներգիա:

Ուրեմն ջրի եներգիան նվազեց, վորովհետեւ այդ ջուրը յուր եներգիայի մի մասը:

ՅԵՐԵ տուրբինը ատամնավոր անիվսերի ոգնությամբ միացնենք ջրաղացաքարի հետ, այն դեպքում վերջինս կակաի արագությամբ պտտվել և կատարել աշխատանք (ցորենի հատիկների դիմադրության դեմ), իսկ տուրբինի արագությունը կթուլանա: Տուրբինն իր եներգիայի մի մասը տվեց

Ջրաղացաքարին: Ջրաղացաքարը կլանեց տուրբինի եներգիայի մի մասը:

Այսպիսով զանազան հարմիններ կարող են ունենալ եներգիա և այդ եներգիան կարող են տալ այլ մարմինների: Բերենք միքանի որինակ:



Նկ. 22. Պատվարի միջոցով բարձրացրած ջուրն ունի պոտենցիալ եներգիա:

I. Վերցնենք յերկու ոռումբ,

մեկը թնդանոթի կողքին ընկած, իսկ մյուսը մեծ արագությամբ շարժվելիս: Դրանցից վնարը կարող է աշխատանք կատարել, վնաս ունի եներգիա: պարզ է, վոր շարժվողը: Նա կարող է հողը քանդել, ամրոցի մասերը հեռացնել իրարից և այլն:

II. Համեմատենք Սևանա լճի ջուրը կասպից ծովի ջրի հետ: Յերկուսն ել անշարժ են, բայց Սևանա լճի ջուրը բարձր ե գտնը գումար: Նա կարող է հոսել մինչև կասպից ծովը և ճանապարհին աշխատանք կատարել, իսկ կասպից ծովին այդ աշխատանքը չի կարող կատարել:

III. Պատվարի միջոցով բարձրացրած ջուրը և նույն ջուրը տուրբինի միջով անցնելուց հետո: Առաջինը մեզ համար ավելի գնահատելի լին, վորովհետև նա կարող է տուրբինը պտտել և աշխատանք կատարել, իսկ յերկրորդն այդ աշխատանքն ալես չի կարող կատարել:

IV. Ժամացուցի լարված զսպանակը և նույն զսպանակը չլարված ժամանակ: Լարված զսպանակն ունի եներգիա, նա աշխատանք է կատարում, իսկ թուլացած զսպանակն այդ եներգիայից զուրկ է:

V. Մարդը կուշտ և հանգիստ զիճակում և նույն մարդը Փեղիկական ծանր աշխատանքից հետո, հոգնած, թուլացած: Առաջին դեպքում նա եներգիայի մեծ պաշար ունի, իսկ յերկրորդ դեպքում այդ եներգիայի մեծ մասից զուրկ է:

Եներգիան, ինչպես և աշխատանքը, չափվում է կիլոգրամմետրով:

Մարդը կամ վորեն կենդանի ունի մկանային եներգիայի վորով պաշար: բայց այդ ամբողջ պաշարը չի կարելի ստանալ կեն-

դանուց կամ մարդուց, առանց նրանց առողջությանը վնասելու: Փորձերը ցուց են տալիս, վոր միջակ բանվորը 8 ժամվա ընթացքում լավագույն դեպքում կատարում է 300.000 կգմ աշխատանք: ուժեղ ձին նույն ժամանակամիջոցում կատարում է մոտ 2 միլիոն կգմ աշխատանք: Այդ թվերը ցուց են տալիս, թե այս կամ այն կենդանի շարժիչը վորոշ ժամանակամիջոցում վորքան եներգիա կառող է արտադրել:

Այն եներգիան, վոր շարժվող մարմինն ունի, կոչվում է կինետիկական եներգիա (հունարեն «կինետիկոս» բառից, վոր նշանակում է «շարժման վերաբերվող»): Զրվեծի, գետի, շարժվող ոռութի, գլորվող քարի եներգիան կինետիկական եներգիա լի:

Այն եներգիան, վոր ունի մարմինը վետնից բարձր գՏնվելու կամ լարվածության հետևանքով, կոչվում է պոտենցիալ (կարողության) եներգիա, որինակ, պատվարի եներգը բարձր դիրք ունեցող ջուրը, լարված զսպանակը և այլն: Լարված զսպանակի եներգիան այլ կերպ կոչվում է նաև առաջականության եներգիա:

Այսպիսով պոտենցիալ եներգիան յերևան և գալիս, յերբ կածանրության կամ առաջականության ուժ: Կինետիկական եներգիան յերևան և գալիս, յերբ կաշարությունը ենք մեխանիկայի մեջ, ուստի պոտենցիալ յեվ կինետիկական եներգիան սաացել են մեխանիկական եներգիա ընդհանուր անունը:

29. Եներգիա: Ի՞նչպես ջրագեղի ՄԱՐՄՆԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ եներգիան: Պատկերացնենք միենույն ծանրությունն ունեցող յերկու քար, մեկը սարի լանջին, իսկ մյուսը՝ գագաթին: Յենթաղրենք, թե դրանք վրավում են ցած: Նա, վոր բարձրից ե ընկնում, ավելի շատ աշխատանք կկատարի, քան նա, վոր լանջից ե գլորվում: Ուրեմն բարձր դրված մարմնի մեջ պոտենցիալ եներգիայի ավելի մեծ պաշար կա: Գետնին դրված մարմնի եներգիան ընդունում ենք զերո, վորովհետև նա այլևս ընկնելու հսարապորություն չունի:

Պոտենցիալ եներգիան չտիրում ենք մարմնի ծանրության յեվ բարձրության արտադրյալով: 5 կգ ծանրություն ունեցող մուրճը, վոր գետնից 3 մ բարձր և գտնվում, ունի 5 կգ  $\times$  3 մ = 15 կգմ պոտենցիալ եներգիա:

Նկատենք, վոր 5 կգ ծանրություն ունեցող մուրճը 3 մ բարձրացնելու համար, պետք է ծախսենք 6 կգ  $\times$  3 մ = 18 կգմ աշխատանք: Նույն մուրճը 3 մ բարձրությունից ընկնելու դեպքում կարող է կատարել 15 կգմ աշխատանք:

30. Ի՞նչպես ջրագեղի ՄԱՐՄՆԻ ԿԻՆԵՏԻԿԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱՆ: Լեռնային վարար գետը և լեռնային բարակ առուն նույն եներգիան չունեն:

Դետը մեծ քարեր եւ գլորում, քանդում եւ իր ափերը, իսկ առուն խճաքարն անգամ չի տեղափոխում։ Ուրեմն՝ վորքան մեծ եւ շարժվող մարմնի զանգվածը, այնքան ան եւ նրա կինետիկական եներգիան։ Մյուս կողմից վորքան արագ եւ շարժվում մարմինը, այնքան ան եւ նրա կինետիկական եներգիան։

Կինետիկական եներգիան գտնելու համար մարմնի զանգվածը բազմապատճեմ են արագության բառակուտակ յեկ ապա արտադրյալը բաժանում 2-ով։ Նշանակենք մարմնի զանգվածը  $m$ , արագությունը՝  $V$ , իսկ կինետիկական եներգիան  $E$  տառով, այն դեպքում կինետիկական եներգիան հավասար կլինի  $E = \frac{m \cdot v^2}{2}$

Լուծենք մի խնդիր, թնդանոթի ռումբի զանգվածն եւ 160 կգ։ Գտնել այդ ռումբի կինետ. եներգիան, յեթե նրա արագությունն եւ 700 մ 1 վայրկանում։


$$E = \frac{m \cdot v^2}{2} = \frac{160 \cdot 700 \cdot 700}{2} = 39200000 \text{ կգմ.}$$

31. ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽՎԵԼԸ ԿԻՆԵՏԻԿԱԿԱՆԻ ՅԵՎ. ԸՆԴՀԱԿԱԲԱԿԻ. ՅԵՆԹԱԴՐԵՆՔ, թե գոգավոր անոթի Ա կետում գտնվում եւ  $M$  գնդակը (նկ. 23)։ Նա ունի պոտենցիալ եներգիա, վորը հավասար կլինի

ՄԻ ԿԴՄ-Ի,

ՎՈՐՄԵՂ Մ-ը գնդակի ծանրությունն եւ, իսկ Ա-ը նրա բարձրությունը անոթի Բ կետից։

Բաց թողնենք գնդակը։ Նա գլորվելով դեպի ցած, աստիճանաբար կպակասեցնի իր պոտենցիալ եներգիան, բայց դրա փոխարեն ձեռք կբերի կինետիկական եներգիա։ Յերբ նա կհասնի Բ կետին, այն դեպքում նրա ամբողջ պոտենցիալ եներգիան կփոխվի. Կինետիկականի, և գնդակը կսկսի բարձրանալ դեպի Ծ կետը։ Այժմ



Նկ. 23.

կպակասի նրա կինետիկական եներգիան, վորը կամաց կամաց կփոխվի պոտենցիալ եներգիայի։ Յերբ գնդակը կհասնի Ծ կետին, ամբողջ կինետիկական եներգիան կփոխվի պոտենցիալի։ Գնդակը կը սկսի նորից ցած ընկնել և այլն։

Այս որինակը ցուց եւ տալիս, վոր պոտենցիալ եներգիան կառող եւ փոխվել կինետիկականի և ընդհակառակը։

Յեթե շփումը և ողի դիմադրությունը չլիներ, գնդակը Ա կետից կանցներ Ծ կետը, Ծ կետից Ա կետը և այսպես շարունակ։ Բայց դիմադրությունների պատճառով գնդակը ամեն անգամ չվ կարողանում հասնել նախկին բարձրության և վերջու կանդ եւ առնում։

Կարենը եւ ուշադրությունը դարձնել հետեւալ հանգամանքի վրա. Եներգիան կարող եւ փոխել իր «ձևը», եներգիան կարող եւ փոխվել մի ուրիշ տեսակ եներգիայի, բայց յերբեք նա չի անհետանա։ Մյուս կողմից վոչչությունից եներգիա չի ստեղծվի։ Առում ենք.

Եներգիայի ընդհանուր բանակը չի փոխվում կամ եներգիան պահպանվում ե (եներգիայի պահպանման որենքը)։

Այս որենքը ֆիզիկական ամենակարևոր որենքներից մեկն ե։ Այդ որենքի շնորհիվ մարդ կարող եւ առաջուց ասել, թե եներգիայի վորոց պաշար ունեցող այս կամ այն մարմնից վորքան աշխատանք կարող եւ ստանալ։

Բերեք մի քանի որինակներ, վորտեղ կինետիկական եներգիան կամաց-կամաց փոխվեր պոտենցիալ եներգիայի։

Ի՞նչպիսի եներգիա ունի ամպի մեջ գտնվող ջրալին կաթիւը. Ի՞նչպիսի եներգիա ունի անձրենի կաթիւը։

70 կդ ծանրություն ունեցող մարմինը գտնվում եւ տանիքի վրա, վորը գետնից բարձր եւ 20 մետր։ Այդ մարմնի պոտենցիալ եներգիան վերքան ե։

32. ԶԵՐՄԱՅԻՆ ԵՆԵՐԳԻԱ. Յերբ ասում ենք՝ չերմությունը «տարածվում ե», չերմությունը մի մարմնից «անցնում ե» մյուսին, մարմինը «կորցրեց» այսքան չերմություն և այլն, մենք չերմության մասին այսպես ենք խոսում, վոր կարծես թե նա մի վորևէ հեղուկ կամ գաղ ե, վորը յերեմն միանում եւ մարմիններին, յերեմն բաժանվում ե նրանցից։ Մինչև XIX դարի կեսերը զիտնականներն այդպես ել կարծում եին։ Նրանք չերմությունը համարում ելին առանձին տեսակի հեղուկ, վոր անվանում ելին ջերմածին։ Նրանց կարծիքով, յերբ չերմածինը մտնում ե մարմնի մեջ, վերջինս տաքանում ե, իսկ յերբ հեռանում ե, այն դեպքում մարմինը սառչում ե։ Մարմնի ընդարձակվելը չերմությունից բացատրում ելին նրանով, վոր ջերմածինը մտնում եր նյութի ծակոտիների մեջ և մոլեկուլները հեռացնում իրարից։

XIX դարի կեսերում մի շարք հետազոտություններ ցուց տվին, վոր ջերմությունը փոչ թե նյութ ե, այլ եներգիայի մի տե-

սակն ե, վորը կարող ե առաջանալ ուրիշ տեսակի եներգիայից կամ փոխվել մի ուրիշ եներգիայի:

Յերբ յերկու մարմին շփում ենք իրար, առաջանում է ջերմություն: Սղոցելիս տարանում ե և սղոցը և փայտը: Շփման ուժերը հաղթահարելու համար աշխատանք ենք կատարում. այդ աշխատանքի նետվանքով ստացվում է ջերմություն: Ծախսվեց մկանների եներգիան, իսկ դրա փոխարեն ստացվեց ջերմություն.

Մուրճի ուժեղ հարգածներից կապարի գնդակը տափակում ե և տաքանում: Բացատրենք այս յերկությունը: Մուրճը բարձրացնելիս աշխատանք ենք կատարում յերկը ձգողական ուժի դեմ: Այդ աշխատանքի հետևանքով բարձրացրած մուրճի մեջ ստացվում է պոտենցիալ եներգիա: Բաց թողնենք մուրճը, նա կընկնի: Մուրճի պոտենցիալ եներգիան փոխվեց կինետիկական եներգիայի: Յերբ մուրճը զարկվում է կապարին, կինետիկական եներգիան կորչում ե, բայց դրա փոխարեն առաջ ե գալիս ջերմություն:

Մեր մկանային եներգիան փոխվեց պոտենցիալ եներգիայի, պոտենցիալ եներգիան փոխվեց կինետիկական եներգիայի, իսկ կինետիկական եներգիան ել՝ ջերմության:

Կարելի յե կատարել և այնպիսի փորձեր, վորոնց ժամանակ ժախաված ջերմության փոխարեն ստացվի աշխատանք: Շոգեմեքնայի մեջ ծախսում ենք ջերմություն և ստանում աշխատանք:

Յեթե աշխատանքից ստացվում է ջերմություն, իսկ ջերմությունից՝ աշխատանք, նշանակում է ջերմությունն ել եներգիա յի:

Հիմա տեսնենք, թե ջերմությունն եներգիայի վճր տեսակն եւ Յուրաքանչյուր ֆիզիկական մարմին, ինչպես գիտենք, բաղկացած ե մոլեկուլներից, վորոնք շարունակ շարժվում են: Յեթե մոլեկուլը շարունակ շարժվում ե, ապա նա պետք է ունենա կինետիկական եներգիա, ինչպես հոսող ջուրը, շարժվող ոռոմքը և այն:

Մոլեկուլների կինետիկական եներգիան կոչվում է ջերմություն: Մարմին մոլեկուլները վորքան արագ են շարժվում, այդ մարմի ջերմության աստիճանն այնքան ավելի բարձր ե, այնքան եներ-



գիայի մեծ պաշար կա նրա մեջ: Մարմին ջերմության աստիճանի բարձրանալը բացատրվում է նրանով, վոր նրա մոլեկուլների արագությունը մեծանում է: Յերբ մուրճով հարգածում ենք կապարին, այն դեպքում հարգածների ազդեցությունից մոլեկուլներն սկսում են ավելի արագ շարժվել. մոլեկուլների շարժման արագանալն ըմբռնում ենք վորպես ջերմություն:

Ջերմահաղորդությունը բացատրվում է նրանով, վոր շարժումը մի մոլեկուլից անցնում է մյուսին: Յերբ ձեռք ենք տալիս վորեւ տաք մարմնի, այն դեպքում վերջինիս մոլեկուլներն ունենալով ավելի մեծ արագություն, հաղորդում են մեր ձեռքի մոլեկուլներին իրենց շարժման մի մասը: Տաք մարմնի մոլեկուլների կինետիկական նվազում է, իսկ ձեռքի մոլեկուլներինը մեծանում է:

33. ՔԻՄԻԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱ. Մենք տեսանք, վոր վառելանյութերի այրման միջոցին ստացվում է ջերմային եներգիա: Այդ եներգիան վոչնչությունից չի կարող առաջանալ. ալրումից առաջ նա գտնվում եր վառելանյութի և թթվածնի մեջ: Այսպես որինակ, 1 կգ փայտի ածուխը և արգչափ ածուխն ալրելու համար անհրաժեշտ թթվածինը միասին ունեն եներգիայի մի վորոշ պաշար, վորը հավասար է 800 կալորիայի: Բայց քանի վոր ալրումը դեռ չի տեղի ունեցել, այդ եներգիան չի կարելի ջերմային եներգիա անվանել. դա եներգիայի մի առանձին տեսակն է, վոր կոչվում է ֆիմիական եներգիա:

Այրման մամանակ ֆիմիական եներգիան փոխվում է ջերմային եներգիայի:

34. ՃԱՌԱԳԱՅԹԱՅՑԻՆ ԵՆԵՐԳԻԱ. Քիմիական եներգիան այրման միջոցին փոխվում է վոչ միայն ջերմային, այլև նաև ազայրային եներգիայի: Յերբ վորեւ տաք մարմին աստիճանաբար սառչում է, նրա ջերմային եներգիայի մի մասը փոխվում է ճառագայթային եներգիայի, և ընդհակառակը, յերբ մարմինը կլանում է ճառագայթային եներգիա, վերջինս այդ մարմնի մեջ փոխվում է ջերմայինի: Արեւի ճառագայթային եներգին ընկնելով յերկրագնդի մակերեսութիւնի վրա, կլանվում են և փոխվում ջերմային եներգիայի:

Այսպիսով ջերմային եներգիան կարելի յե ստանալ մեխանիկական, ճառագայթային, քիմիական եներգիայից և, ընդհակառակը, ջերմային եներգիայից կարելի յե ստանալ մեխանիկական, ճառագայթային եներգիա և այն:


35. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԿԱՆ ՀԱՄԱՁՈՐ. Մենք տեսանք, վոր մեխանիկական աշխատանքից ստացվում է ջերմային եներգիա և, ընդհակառակը, ջերմային եներգիայից ստացվում է մեխանիկական աշխատանք, կամ ուրիշ խսոր պատճեն ասած՝ ջերմային եներգիան փոխ-

գում և մեխանիկականի և հակառակը: Այստեղից լեզրակացնում ենք, վոր մի վորու բանակությամբ մեխանիկական եներգիայից պես և ստացվի մի վորու բանակությամբ ջերմային եներգիա և վորովնետե մեխանիկական եներգիան չափում և կիլոգրամ-մետրերով, իսկ ջերմայինը՝ կալորիաներով, ուստի կարելի լեզրական մեծ կալորիան քանի կիլոգրամ-մետր աշխատանքից և ստացվում:

Մեխանիկական աշխատանի այն բանակը, վորից ստացվում է մեկ մեծ կալորիա ջերմություն, կոչվում է ջերմության մեխանիկական համարոր:

Ջերմության մեխանիկական համազորն առաջին անգամ գտավ Զառուլը իր մի նշանավոր փորձով: Այդ փորձը հետևալին է:

Վերցնենք մի մետաղե կալորաչափ (կ), վորի մեջ տեղափորված և ուղղահայաց առանցք՝ աթիակներով (նկ. 25): Կալորաչափի



Նկ. 25. Զառուլի գործիքի սխեման:

ներքին պատերին կպած են մի շարք միջնորմներ (b): Այդ միջնորմների մեջ գտնվում են բացվածքներ, վորպեսզի թիակները նրանց միջով շարժվեն: Առանցքը վերևում վերջանում է Ա զլանով և կո-

թով: Ցանկացած ժամանակ կարելի լեզրանը առանցքից բաժանել: Գլանի վրա փաթաթած է մի բարակ թոր, վորի ծալրերը գցած են ԾԸ ճախարակների վրայով, իսկ ծալրերից ել կախված են ՊՊ ծանրոցները: Պտտելով Ա զլանը՝ կարող ենք այդ ծանրոցները բարձրացնել, բայց հենց վոր կոթը թողնենք, նրանք իրենց ծանրությունից կսկսեն ցած ընկնել և դրանից Ա զլանը, ինչպես և առանցքը թիակներով կպտտվի:

Յենթաղրենք, թե Զառուլի կալորիմետրի մեջ գտնվում է 2 կգ 14,2°-ի ջուր: Ծանրոցներից ամեն մեկը թող լինի 5 կգ: Ա զլանը բաժանենք առանցքից և ապա, պտտելով կոթը, ՊՊ ծանրոցները բարձրացնենք 1 մետր: Գլանը միացնենք առանցքին և կոթը բաց թողնենք: Ծանրոցները կսկսեն ցած ընկնել, տուանցքը, հետեւապես և թիակները կսկսեն պտտվել: Միջնորմների և նրանց մեջ գտնվող բացվածքների շնորհիվ ամբողջ ջուրը միաժամանակ չի պտտվի, թիակի առաջը գտնվող ջուրը կշարժվի, իսկ միջնորմի հետևինը կմատեղը և կդժվարացնի թիակների շարժումը: Վոչ միայն թիակն ու ջուրը կշարժվեն իրար, այս ջուրը՝ ջրին: Կստացվի ջերմություն և կալորիմետրի ջուրը քիչ կտարանա: Ծախսեցինք բարձրացրած ծանրոցների պոտենցիալ եներգիան և դրա փոխարեն ստացանք ջերմություն: Մեկ անգամ ընկնելու դեպքում կատարվում է 2. 5 կգ-1 մ=10 կգ-մ աշխատանք: Սա այնքան քիչ աշխատանք է, վոր ջուրը դգալի չափով չի տաքանում, այդ պատճառով մենք նույն փորձը կրկնում ենք 50 անգամ և ապա կալորիմետրի ջրի աստիճանը նորից չափում: Յենթաղրենք, թե այժմ կալորիմետրի ջրի բարեխառնությունը լեղավ 14,79°:

Ծախսեցինք  $50 \times 10$  կգ-մ=500 կգ-մ մեխանիկական աշխատանք:

Զուրն ստացավ 2 կգ  $(14,79^{\circ} - 14,2^{\circ}) = 1,18$  մեծ կալորիա:

Յեթե 1,18 մեծ կալորիան ստացվում է 500 կգ-մ աշխատանքից, այն դեպքում մեկ մեծ կալորիան կստացվի 424 կգմ-ից  $\left(\frac{500 \text{ կգմ}}{1,18 \text{ մ. կ}} = 424 \text{ կգմ}\right)$ : Ճիշտ փորձերը ցուցովին, վոր

1 մեծ կալորիան=427 կիլոգրամմետր: 427 կգմ-ը մեծ կալորիայի մեխանիկական համարոր է:

Յեթե ծախսենք 427 կգմ աշխատանք, կստանանք մեկ մեծ կալորիա ջերմություն և, ընդհակառակը, յեթե ծախսենք մեկ մեծ կալորիա, այն դեպքում կստացվի 427 կգմ աշխատանք:

Խնդիրներ:

Յեթե մեկ մեծ կալորիայից ստացվում է 427 կգմ աշխատանք, ապա մեկ կիլոգրամմետր աշխատանք ծախսելու դեպքում վերքան ջերմություն կստացվի:

Ուրեմն աշխատանքի ջերմային համազորը՝ վորքան ետ:

Մեկ կիլոգրամ Դոնեցի քարածուխից քանի կիլոգրամմետր աշխատանք կարելի է ստանալ, յեթե նրա տված ջերմությունն ամբողջովին աշխատանքի վերածվի:


427 Կդ ծանրություն ունեցող մուրճը 1 մետր բարձրությունից ընկավ սալին. վերքան ջերմություն կարտադրվի:

Գոլորշով աշխատող մուրճը կշռում է 8000 կդ և բարձրացրած է 3 մ: Վերքան ջերմություն կարտադրվի, յեթե այդ մուրճը դարկի սալին և նրա ամբողջ կինետիկական եներգիան փոխվի ջերմության:

## ԶԵՐՄԱՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ջերմաշարժ կոչվում են այն մեքենաները, վորոնց մեջ ջերմային եներգիան վեր է ածվում մեխանիկական եներգիայի, այսինքն ծախսելով ջերմություն, մենք ստանում ենք մեխանիկական աշխատանք:

36. ՇՈՒՑԵՄԵՔԵՆԱ: Նախ քան բուն շոգեմեքենային անցնելը, ծանոթանանք մի հասարակ գործիքի հետ, վորը կպարզի շոգեմե-



Նկ. 26. Ջերմաշարժ մեքենայի պարզ սխեմա:

Նկ. 27. Շոգեմեքենա:


Քենացի կազմությունը (նկ. 26): Գնդածե անոթի մեջ ջուր է ածած: Նրա գլանածե մասում գտնվում է մի մխոց (P), վորը կարող է վեր ու վար շարժվել: Սպիրացին լապտերով ջուրը զգուշությամբ յեռացնենք. առաջացած գոլորշիների ուժից մխոցը կբարձրանա: Անոթը գնենք սառը ջրի մեջ. գոլորշիները հեղուկ կդառնան և մթնոլորտի ճնշումից մխոցը կիջնի ցած: Յեթե այս գործողությունը կրկնենք մի քանի անգամ, այդ դեպքում մխոցը կսկսի վեր ու վար անել և շարժել զանազան մարմիններ:

Ստացանք մի փոքրիկ շոգեշարժ մեքենա:

Տեխնիկայում գործադրվող շոգեմեքենաները շատի ավելի բարդ են: 27-րդ նկարը ցուց է տալիս դրանցից մեկի կազմությունը:

Բ կրակարանի վրա գտնվում է Բ «կաթսան», վորի մեջ գոլորշի յե ստացվում: Այդ գոլորշիները Տ խողովակով մտնում են «բաշխող» V արկղի մեջ, այստեղիցին N անցքով՝ C «գլանի» մեջ: Այստեղ գոլորշին ճնշում է գործ գնում P մխոցի վրա և բարձրացնում նրան:

Բաշխող արկղի մեջ գտնվում է K սողնակը, վորը շրջած թասի ձև ունի և, վեր ու վար շարժվելով, հերթով փակում է դեպի գլանը տանող N և M անցքերը: Յերբ մի անցքը փակվում է, մյուսն այդ միջոցին բացվում է և գոլորշին անցնում է մխոցի մի կողմը և



Նկ. 28. Շոգեշարժի և շոգեշարժի արկղի կտրվածքը: Մի դեպքում գոլորշին գլանի մեջ և մտնում մխոցի վերին կողմից, իսկ մյուս դեպքում ստորին:

ճնշում գործ դնում նրա վրա: Մխոցի մյուս կողմը գտնվող «բանած» գոլորշին մտնում է թասածկ սողնակի տակ և առանձին E խողովակով դուրս գալիս:

Այսպիսով գոլորշին անցնելով մխոցի մեջ կամ մյուս կողմը, նրան հաղորդում է յերթեեկ շարժում:

Մխոցի R կոթը, կոչվում է «մխոցաբուն», շարժական հողով միանում է մի ալ ձողի հետ, վորը կոչվում է «շարժաբուն» (L): Շարժաբունն իր հերթին միանում է Q «մեղեխի» հետ, վորի մի ծալը հաստատուն կերպով միացած է AA գլանի հետ: Այս գլանը մեղեխի շնորհիվ կարող է պտտվել իր առանցքի շուրջը և կոչվում է աշխատող գլան:

Աշխատող AA գլանի վրա գտնվում է W<sub>1</sub> անիվը, վորը կոչվում է փոկանիվ կամ շկիվ: Փոկանվի վրայով անցնում է մի ան-

ծալը (հաստ կաշվից պատրաստած) փոկ, վորով կարելի յե պտտել զանազան մեքենաներ, որինակ, կարելի յե աշխատեցնել սղոցարանի սղոցները, ձիթահան գործարանի աղորիքները և այլն:


Այսպես ուրեմն կրականում այրվում է վառելանյութը. արտադրված ջերմությունից կարսայի ջուրը գոլորշանում ե. գոլորշին անցնում է գլանի մեջ յեվ շարժում սխոցը. մխոցի շարժումից պտտվում է աշխատող գլանը, իսկ աշխատող գլանը փոկանվի (շեխվի) յեվ անծայր կաշվե յերիգի միջոցով շարժում է զանազան մեքենաներ (սղոցներ, ջրահան մեքենաներ և այլն):

Սղոցը կամ ջրհան մեքենան այն գործիքներն են, վորով աշխատանք ենք կատարում. շոգեմեքենայի դերը կայանում է նրանում, վոր այդ գործիքները շարժման մեջ դնի: Դրա համար ել շոգեմեքենան կոչվում է շարժիչ-մեքենա, իսկ սղոցը, ջրհանը՝ գործիչ-մեքենա:

Տրակտորը շարժիչ ե, իսկ գութանը, վորը շարժվում է ալդ տրակտորի միջոցով, գործիք մեքենա յե:

Շոգեմեքենայի մասին ընդհանուր գաղափար կազմելուց հետո կանք առնենք նրա առանձին մասերի վրա:

Նոգեկարան: Շոգեկաթսաները զանազան կազմությունն են ունենում: Դրանցից ամենապարզը՝ ներկայացնում է հաստ պատեր ունեցող մի գլան, վորն ամբողջովին ջրով չի լցվում. նրա վերին մասում, ջրից բարձր, թողնվում է ազատ տարածություն, վորտեղ




Նկ. 29. Շոգեկաթսա: ա—պահածե կաթսա, թ—մանոմետր, ն—ջրաչափ, թ—ապահովիչ, ր—խողովակ, կաթսայի մեջ ջուրը ածելու համար:

գոլորշին հավաքվում ե: 29-րդ նկարը ցուց է տալիս այդպիսի կաթսաներից մեկի կազմությունը:

Կաթսայի տակ գտնվում է կրակարանը: Ն գոնով վառելանյութն ածվում է չուգունե ցանցի վրա: Մոխիրը և քարածուխի մանր փշանքները ցանցի ծակոտիներով թափվում են ցած (մոխրատեղը), վորտեղից կարող են հեռացվել: Մոխրատեղով մտնում է ոդը, և ցանցի ծակոտիներով բարձրանում վեր և մասնակցում այրմանը: Այրումից ստացված աաք գաղային նյութերն անցնում են ծխատար և խողովակով և, տաքացնելով կաթսան, Ա մասով գուրս գալիս:

Կաթսայի այն մասը, վոր շփվում է տաք գաղերի հետ, կոչվում է տաքացման մակերես: Վորքան մեծ է այդ մակերեսը, անդան շատ գոլորշի կարելի յե ստանալ: Ամբողջական գլանի ձևունեցող կաթսաների տաքացման մակերեսը շատ մեծ չե, այդ պատճառով նրանք այնքան ել տնտեսական չեն: Ավելի ձեռնտու յին



Նկ. 30. Ջրատար խողովակներով կաթսա (կրակը տաքացնում է այդ խողովակների ջուրը):

Խողովակափոր կաթսաները: Տարբերում ենք ջրատար յեվ նրատար խողովակներ: Առաջին գեպքում ջուրը գտնվում է խողովակների մեջ, վորոնց արանքով շարժվում են կրակարանում ստացված աաք գաղերը (Նկ. 30): Այսպիսի կաթսաները գործ են ածվում գործարաններում: Յերկրորդ գեպքում գաղերը շարժվում են խողովակների միջով, իսկ խողովակները շրջապատված են ջրով: Հրատար խողովակներով կաթսաները գործ են ածվում շոգենավերում, շոգեգնացքներում և այլն:

Խողովակափոր կաթսաների տաքացման մակերեսը բավական մեծ է, այդ պատճառով ջուրն այստեղ ավելի շուտ է տաքանում, քան մյուսներում:

Վորովինետև կաթոսան ամեն կողմից փակված է լինում, այդ պատճառով նրա մեջ հավաքված գոլորշիներն ունենում են բավական մեծ ճնշում: Կաթոսաներ շինելիս միշտ հաշվի լին առնում այն ճնշումը, մինչև վորը կարող են նրանք գործածվել: Յիթե գոլորշիների ճնշումը այդ սահմանից անցնի, այն դեպքում կաթոսան կարող է պայթել: Վորպեսզի այդ տեղի չունենա, կաթոսալի վրա ամրացնում են մետաղե մանումներ և շարունակ դիտում գոլորշու ճնշումը: Մանումետրը հնարավորություն է տալիս նաև ցանկացած ճնշման գոլորշիներ ունենալ:


Շոգեմեքենալի աշխատանքի ժամանակ ծախսվում է մեծ քանակությամբ գոլորշի և դրանից կաթոսալի ջրի քանակը պակասում է: Յեթե ջուրն այնքան է պակասել, վոր կաթոսալի տաքացող պատը ջրով ծածկված չե, այդ դեպքում այդ տեղերն ուժեղ կրակից կարմրում են, կորցնում իրենց պնդությունը և այս չեն կարողանում դիմադրել գոլորշիներին: Զրի մակարդակին հետեւելու համար կաթոսալի պատի մեջ շինում են ապակե ջրաչափի խողովակ: Դիտելով այդ խողովակի ջրի մակերեսը, կարելի լեզ գաղափար կազմել, թե կաթոսալի մեջ ջուրն ինչ բարձրություն ունի:

Ավանդովիչ: Յեթե բանվորը ժամանակին նկատեց, վոր գոլորշու ճնշումը սահմանված մեծությունից անցնում է, այն դեպքում նա կամ կրակն է թուլացնում կամ կաթոսալից գոլորշու մի մասը հեռացնում է: Բայց կարող է պատահել, վոր բանվորը չնկատի ճնշման մեծանալը, կամ այն հարմարությունները, վորոնցով պակասեցնում են գոլորշու ուժը, փչացել են: Կաթոսան այս դեպքում կարող է պայթել: Այսպիսի պատահական պայթումներից կաթոսան պաշտպանելու համար նրա վրա շինում են ապահովիչ փական, վորի կազմության մասին խոսել ենք (տես Պապինի կաթոսան):

Թուչարան: Կա յերկու գրություն, յերբ մխոցի ուղղագիծ շարժումը չի փոխվում կորագիծ շարժման: Դա լինում է այն դեպքում, յերբ մխոցաբունը, շարժաբունը և մեղեխը նույն ուղիղ գծի վրա լին գտնվում: Այս գրությունները կոչվում են մեռած կետեր: Մեռած կետերում գլանը կամ ձգվում է կամ հրվում, բայց չի պատվում: Վորպեսզի մխոցն այդ ժամանակ կանգ չառնի, պատվող ԱԱ գլանին ամրացնում են մեծ զանգվածով մի անիվ (W), վորը կոչվում է բոչարան կամ թափանիվ (նկ. 27): Մխոցի շարժումից թուչարանը ձեռք է բերում կինետիկական եներգիա, վորի շնորհիվ նա շարունակում է պատվել և մեղեխն ու շարժաբունը հանում է մեռած կետերի գրությունից:

Բացի այդ՝ թափանիվ շնորհիվ շոգեմեքենան համաշափ է աշխատում:

Սողնակի Սողնակի շարժումները կատարվում են նույն ԱԱ գլանի շարժման շնորհիվ: Գլանի պատվելու միջոցին սողնակը վերու վար է անում և հերթով ծածկում դեպի գլանը տանող N և M անցքերը:



Զեմս Վատա (1736—1819) — անդամացի մեխանիկ շոգեմեքենայի գունդը:



Զ. Ստեփենոսոն (1781—1848) — անդամացի մեխանիկ, առաջին յերկաթուղու հարողը:

Ցրացուցիչ: «Աշխատած» գոլորշին, ինչպես ասացինք, նախ մտնում է սողնակի տակ, ապա այնտեղից առանձին Էլիոդովակով անցնում է դեպի ողջ կամ դեպի ցրտացուցիչը: Ցրտացուցիչ շնորհիվ աշխատած գոլորշու ճնշումն իջնում է մինչև 30—50 մմ, դրանով հեշտանում է աշխատող գոլորշու գործը:

Սակայն ցրտացուցիչ միացումից շոգեմեքենան ծանրանում է և բարդանում: Այդ պատճառով, յերբ ցանկանում են, վոր շոգեմեքենան լինի թեթև և փոքր (ինչպես, որինակ, գնացքի շոգեկառը), ցրտացուցիչ չեն շինում. աշխատած գոլորշին ուղղակի միացնում են ողի հետ: Բայց այս դեպքում կաթոսալի մեջ գոլորշին պետք է մեծ ճնշում ունենա, վորպեսզի վոչ միայն աշխատանք կատարի, այս հաղթահարի մթնոլորտի ճնշումը:

37. ՇՈՒՑԵՄԵՔԵՆԱՅԻ: ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Արդյունագործության և տրանսպորտի զարգացման գործում շոգեմեքենան մեծ դեր կատարեց: Այդ մեքենայի գյուտով սկսվեց մարդու կուլտուրայի մի նոր դարաշրջան:

Ներկայումս շոգեմեքենաները գործ են ածվում վորպես խոշոր շարժիչներ այս կամ այն նպատակով: Նրանով շարժման մեջ են դրվում գործիք-մեքենաները և կատարում զանազան աշխատանք-

ներ. որինակ, շոգեմեքենան շարժում ե սղոցը, բարձրացնում ե հանքը հորից, շարժելով ջրմուղը՝ նա կարողանում ե ջուրը մղել հեռավոր տեղեր, բարձրացնում ե գործարանալին ծանր մուրճերը, պտտում ե գինամո-մեքենան ելեկտրականություն ստանալու համար և այլն: Գործարանի այն ամբողջ ուժը, վորը պետք ե աշխատանքներ կատարելու համար, տալիս ե շոգեմեքենան: Այսպիսով շոգեմեքենան հանդիսանում է գործարանի սիրտը:

Յերբեմն ել շոգեմեքենան և կաթսան միացնում են իրար և տեղավորում անիվների վրա ու տեղափոխում գործի տեղը: Այդպիսի շոգեմեքենաները կոչվում են լոկոմոբիլ: Լոկոմոբիլը գործ ե ածվում գյուղատնտեսության մեջ զանազան նպատակներով. որինակ, շարժելու հնձող և կալսող մեքենաները և այլն:

Շոգեմեքենան մեծ գործադրություն ունի նաև տրանսպորտի մեջ: Յերկաթուղարին և ծովալին տրանսպորտը յուր զարգացման բարձր մակարդակին հասավ միայն շոգեմեքենայի շնորհիք: Յերկաթուղարին տրանսպորտի մեջ գործածվող շոգեմեքենան կոչվում ե տոգեկառք (լոկոմոտիվ):


Պարզ սիստեմի շոգեկառքերից մեկը հետեւյալ կազմությունն ունի (նկ. 31): Գոլորշին ստացվում ե Բ կաթսալում, վորի միջով անցնում են մի շարք հրատար խողովակներ և ապա ԿԿ խողովակով անցնում ե «բաշխող արկղը», այնտեղից ել գլանը: Աշխատած գոլորշին Ը խողովակով մտնում ե ծխատար Ն խողովակի մեջ և ապա ողը դուրս գալիս: Ծխատար խողովակի միջով հեռացող գոլորշին իր հետ քաշում, տանում ե այն գաղերը, վորոնք ստացվում են այրման ժամանակ. դրանից այրումն ավելի արագ ե կատարվում: Մ կոթի ոգնությամբ կարելի լի շոգեատար խողովակի Տ ծալրը լերբեմն շատ փակել, լերբեմն քիչ և կանոնավորել գոլորշու հոսանքը: Մխոցի շարժումները հաղորդելով անիվներին, կարելի լի գնացքը շարժել:

Շոգեգնացքի առաջընթաց շարժումը հետադարձ դարձնելու համար գործ են ածում Ր լծակը, վորով կարելի լի փոխել սողնակի շարժման ուղղությունը:

38. ՇՈԳԵՄԵՔԵՆԱՅԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ: Գոլորշին մտնելով գլանի մեջ, ընդարձակվում ե և ճնշում գործ դնում մխոցի վրա: Դրանից մխոցը շարժվում է: Գոլորշին աշխատում ե: Ի՞նչպես հաշվենք այդ աշխատանքը:

Յենթադրենք, թե գլանի մեջ գտնվող գոլորշին 5 մթնոլորտ ճնշում ունի, այսինքն այդ գոլորշին մխոցի 1 սմ<sup>2</sup>-ի վրա ազդում է 5 կգ ուժով: Յեթե մխոցի մակարդակը հավասար լինի 1000սմ<sup>2</sup>-ի,

այդ դեպքում գոլորշին կհրե մխոցը 5 կգ×1000=5000 կգ ուժով: Յեթե մխոցի ընթացքը 0,8 մետր է, այսինքն գոլորշու ուժից մխոցը դեպի մի կողմն անցնում է 0,8 մետր, այն դեպքում գոլորշին



Նկ. 31. Շոգեկառքի միական: Բ—շոգեկառք, Ը—կաթսալու միջով անցնումը խողովակում, ԿԿ—շոգեկառքի մուրճեր, Հ—գոլորշու մուրճեր, Ր—լծակ:

մեկ ընթացքի ժամանակ կկատարի 5000 կգ×0,8 մ=4000 կգմ աշխատանք, 20 ընթացքի ժամանակ կկատարի 20×4000 կգմ=80000 կգմ և այլն:

39. ԳԱՂԱՓԱՐ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: Ինչպես ասացինք, աշխատանք կատարելիս գործ են ածվում շոգու, քամու, ջրային և այլ շարժիչներ: Մարդը նույնպես շարժիչ է: Բոլոր շարժիչները հավասար ժամանակամիջոցներում հավասար աշխատանք չեն կատարում, այսինքն՝ հավասար աշխատանք կամ կարողություն չունեն:

Շարժիչի կարողությունը չափվում է այն աշխատանքով, վորայի շարժիչը կարող է կատարել մեկ վայրկյանում:

Տեթև վորեւ շարժիչ մեկ վայրկյանում կատարում է 75 կգմ աշխատանք, ասում ենք՝ այդ շարժիչն ունի մեկ ձիու ուժ: Ուրեմն շարժիչի կարողությունը չափվում է ձիու ուժերով: Ձիու ուժը կարողության միավոր է:

Իմանալու համար, թե շարժիչը քանի ձիու ուժ ունի, մենք պետք ենք մեկ վայրկյանում կատարած աշխատանքը բաժանենք 75-ով:

Լուծենք մի խնդիր: Ամերիկական մի մեծ շոգեկառքի զլանի մեջ գոլորշին 1 սմ<sup>2</sup>-ի վրա ճնշում ե գործ գնում 3,78 կգ ուժով: Մխոցի ընթացքը հավասար է 0,61 մետրի, իսկ մակարդակը՝ 1830 սմ<sup>2</sup>-ի: Մեկ րոպեյում մխոցը 520 շարժում է կատարում: Գոնել այդ շոգեկառքի կարողությունը:

Մխոցի մեկ շարժման ժամանակ կատարվում է 1830.3,78.0,61 կգմ, իսկ 520 շարժման ժամանակ կկատարվի 1830.3,78.0,61.520 կգմ: Այդչափ աշխատանքն ստացվում է մեկ րոպեյում, մեկ վայրկյանում կստացվի

$$\begin{array}{r} 1830 \cdot 3,78 \cdot 0,61 \cdot 520 \\ \hline 60 \end{array} \text{կգմ}$$

Տեթև այս աշխատանքը բաժանենք 75-ով, կստանանք շոգեկառքի կարողությունը ձիու ուժերով:

$$\begin{array}{r} 1830 \cdot 3,78 \cdot 0,61 \cdot 520 \\ \hline 60 \cdot 75 \end{array} = \text{մոտ } 488 \text{ ձիու ուժ:}$$

Վորովինետև հիշած շոգեկառքն ունի յերկու միանման աշխատող զլաններ, ուստի գնացքի շոգեկառքի լրիվ կարողությունը կլինի մոտ 976 ձիու ուժ:

Լծկան ձին մի վայրկյանում միջին հաշվով կատարում է 37  $\frac{1}{2}$  կգմ աշխատանք: Նրա կարողությունն արտահայտեցեք իու ուժերով:

Ուժեղ լծկան ձին բեռը տանելիս մեկ վայրկյանում անցնում է 1 մետր, գործ գնելով 65 կգ ուժ: Գոտեք նրա կարողությունը:

Շոգեմեքենան 20 ձիու ուժ ունի: Նա վնրքան աշխատանք կկատարի մեկ վայրկյանում, մեկ րոպեյում կամ մեկ ժամում:

Բանվորն աշխատում է 0,107 ձիու ուժով: Ութ ժամում այդ բանվորը վնրքան աշխատանք կկատարի:

Բանվորը ձեռնասալը քաշելիս մեկ վայրկյանում անցնում է 9,7 մետր, գործ գնելով 14 կգ ուժ: Վորոշեցեք նրա կարողությունը և ութ ժամվա ընթացքում կատարած աշխատանքը:

Մեքենան 5 րոպեյում 300 մետր խորությունից բարձրացնում է 12 խոր. մետր ջուր: Գոտեք նրա կարողությունը:

20 ձիու ուժ ունեցող շոգեմեքենան 400 մետր խորությունից ջուր և բարձրացնում: Մեկ ժամում նա վնրքան ջուր կարող է բարձրացնել:

Վորոշել շոգեմեքենայի կարողությունը, յեթե գոլորշու ճնշումն է  $8\frac{4}{5}$  մխոցի մակարդակն է 685 սմ<sup>2</sup>, գլանի յերկարությունն է 0,5 և մխոցը 1 րոպեյում շարժվում է 160 անգամ: Պատ. մոտ 97 ձիու ուժ:

40. ՇՈԳԵՄԵՔԵՆԱՅԻ ՈԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ: Շոգեմեքենան կլանում է ջերմային եներգիա և փոխարենն արտադրում է մեխանիկական աշխատանք: Բայց այդ ջերմային եներգիայի մի մասը գոլորշու միջոցով անցնում է ոդին կամ ցրտարանին և կորչում է անոգուտ կերպով: մի զգալի մասը հեռանում է արումից առաջացած գազերի հետ, մի մասը հաղորդվում է կաթոսայի պատերին և այն: Այդ պատճառով շոգեմեքենան ընդունած ամբողջ ջերմային եներգիան ոգտակար աշխատանքի չի վերածում: Յենթադրենք թե կրակարանում ալրվող քարածուխն արտադրում է 100 մեծ կալորիա, յեթե շոգեմեքենայի մեջ այդչափ ջերմությունից ոգտակար աշխատանքի վեր է ածվում միան 12 կալորիան, այն դեպքում ասում ենք շոգեմեքենայի ոգտակար գործողության գործակիցն է 12 %:

Սացված ոգտակար աշխատանքի յեվ ծախսված աշխատանքի (եներգիայի) հարաբերությունը կոչվում ե ոգտակար գործողության գործակիցից: Վորոշեցեք վորեւ շոգեմեքենայի ոգտակար գործողության գործակիցը:

Շոգեմեքենան ամեն մի ձիու ուժի համար մեկ ժամում ծախսում է 0,9 կգ քարածուխ: Գոնել այդ շոգեմեքենայի ոգտակար գործողության գործակիցը, յեթե մեկ կիլոգրամ քարածուխն ալրվելիս արտադրում է 7500 մեծ կալորիա:

Մեկ ձիու ուժը մեկ ժամում տալիս է 75 կգմ  $\times$  3600 = = 270000 կգմ ոգտակար աշխատանք (ժամը 3600 վայրկյան է):

Այդքան աշխատանք ստանալու համար մեկ ժամում ծախսվում է 0,9 կգ քարածուխ, վորը կտա  $0,9 \times 7500 = 6750$  մեծ կալորիա կամ  $6750 \times 427$  կգմ = 2882250 կգմ:

Ուրեմն ծախսվեց 2882250 կգմ աշխատանք, բայց ստացվեց 270000 կգմ: այստեղից ոգտակար գործողության գործակիցը կլինի


$$K = \frac{270000}{2882250} \cdot 100 = \text{մոտ } 9\%$$

Շոգեկառքի մեջ տեղի ունեցող կորուստների մասին գաղափար ե տալիս հետևյալ աղյուսակը:

Վառելիքի ամբողջ եներգիայից

Ոգտակար աշխատանքի վեր ե ածվում	5 %
Բանած գոլորշու հետ հեռանում ե	50 »
Ծխի հետ հեռանում ե	20 »
Մոխրի մեջ մնում ե	15 »
Պատերի միջոցով կորչում ե	10 »
<hr/> Ընդամենը . 100 %	

41. ՇՈԳԵՇԱՐԺ ՏՈՒԲԻՆՆԵՐԻ: Շոգեշարժ տուրբինը ամենատարածված ջերմաշարժ մեքենաներից մեկն է. Գոլորշին դուրս գալով՝ շոգեկաթափակաց առանձին խողովակով անցնում ե դեպի անիվը, վորի լեզերքին գտնվում են բազմաթիվ մանր թերթեր. Գոլորշին մեծ ուժով հարվածելով անվի (տուրբինի) թերթերին, ստիպում ե նրան պտըտվել: Այսպիսով տուրբինը պտըտվում ե գոլորշու կիսետիկական եներգիայի շնորհիվ:



Նկ. 32. Շոգեշարժ տուրբին (խողովակներից գոլորշին մեծ արագությամբ դուրս գալով զարկում ե տուրբինի թերթերն և պտըտվում նրան):

Շոգեշարժ տուրբիններն իրենց միջանի առավելության պատճառով վերջերս մեծ ընդունելություն գտան արդյունագործության և տեխնիկայի մեջ: Ամենից առաջ նրանց ոգտակար գործողության գործակիցն ավելի բարձր ե (մոտ 20%), քան թե շոգեմեքենայինը:

Յերկրորդ՝ տուրբինի անիվը չափազանց արագ ե պտըտվում (մեկ րոպեում մոտ 40000 անգամ): Այդ պատճառով նրանք գործ են ածվում այն գեղքում, լերը պետք ե արագ պտույտներ ստանալ, որինակ՝ ելեկտրական կայարաններում դինամո-մեքենան պլատեցնելիս և այլն:

Յերրորդ՝ շոգեշարժ տուրբիններն ավելի փոքր տեղ են բըռնում, քան նույն կարողություն ունեցող շոգեմեքենաները: Բացի այդ, նրանք աշխատանքի ժամանակ այսպիսի ցնցումներ չեն առա-

ջացնում, ինչպես շոգեմեքենաները: Այդ հատկությունների պատճառով տուրբինները չափազանց աարածված են նավերի վրա:

Վերջապես պարզվում ե, վոր մեծ կարողությունների դեպքում տուրբիններն ավելի ձեռնտու յեն, քան մխոցավոր մեքենաները:

42. ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՍԻ ՄԵՐԵՆԱՅ: Կրակարանը և հսկայական կաթսան բարդացնում են շոգեմեքենան ու գարձնում նրան անհարմար ավտոմոբիլների և աերոպլանների համար: Բացի այդ՝ կրակարանի մեջ անագին քանակությամբ ջերմային եներգիա զուր ե կորչում: Այդ կորուստից ազատվելու համար վառելիքն (լուսավորության գազ, նավթ, բենզին և այլն) սկսեցին այրել ուղղակի գլանի մեջ, մխոցի մի կողմը:

Պայմանական առաջացած գագերն ունենում են ջերմության բավական բարձր աստիճան և ընդարձակվելով, մեծ ճշշում են գործ դնում մխոցի վրա:

Մխոցի շարժումը մեղեմի միջոցով ազդում ե գլանի թռչարանի վրա և վերջինս սկսում է պտավել:

Այդպիսի «ներքին այրմամբ շարժիչ» կազմությունը պարզելու համար դիտենք 33-րդ նկարը:

Նկ. 33. Ներքին այրմամբ մեքենայի Յենթադրենը, թե կողմանակի վորև դուժողությունը:


Յենթադրենը պատեցինք և ք մխոցն այդ ժամանակ սկսեց դեպի աջ շարժվել: Այդ շարժման միջոցին փականներից մեկը (E) բացվում ե և բենզինը ոդի հետ ծծվում ե ներս: Յերբ մխոցը դեպի ձախ ե դառնում, E փականն այդ ժամանակ ծածկվում ե և գաղերի խառնուրդը գլանի ձախ կողմում ձնշման ե լենթարկվում, ելեկտրական կալծի միջոցով գագերի խառնուրդը պայթում ե և մխոցը կրկին շարժվում ե դեպի աջ՝ թռչարանին հաղորդելով ավելի մեծ արագություն: Վերջապես, յերբ մխոցը կրկին հետ ե դառնում, բացվում ե D փականը և պայմանական աստացված անպետք գագերը հեռացվում են գլանից:

Այսպիսով, ներքին այրմամբ մեքենան աշխատելիս կատարում ե հետևյալ չորս շարժումը, կամ, ինչպես ասում են, սահերը:

- I տաքտ—գագերի խառնուրդը ծծվում ե:
- II » » » սեղմվում ե:
- III » » » պայթում ե (աշխատանքի ֆազ):
- IV » անպետք գագերը հեռանում են:

Դրանից հետո Ե փականը կրկին բացվում է և այդ չորս տաքտերը (ֆագերը) դարձալ կրկնվում են: Հենց վոր պալթիուններն սկսեցին, այլև թռչարանը պտտելու կարիք չի զգացվում. մեքենան սկսում է աշխատել ինքն իրեն:

Ներքին այրմամբ մեքենաներն այժմ բավական տարածված են. նրանք գործադրվում են ելեկտրական կայարաններում, գործարաններում և այլն: Գյուղատնտեսության մեջ ավտոգութաններն



Նկ. 34. Ներքին այրմամբ մեքենայի սխեման, վորպիսին գործ և ածվում ավտոմոբիլների կամ տրակտորների մեջ (չորս տաքտ): Ա—ցնկածն զլան, վորը տալիս և պտտուտական շարժում, Ե—աշխատող զլան, վորը, պտտվելով իր առանցքի շուրջը, իր հերթին պտտում է անիվը. Վ—թափանիք:

ու տրակտորները մեծ գրավումներ են անում: Ողագնացությունը և ավտոմոբիլային տրանսպորտը իրենց հաջողությամբ ներքին այրմամբ շարժիչներին են պարտական:

Շոգեմեքենաների համեմատությամբ նրանք մեծ առավելություններ ունեն. նախ չկա կաթսան, յերկորդ՝ ոգտակար գործողության գործակիցը մեծ է (մոտ 35%), յերրորդ՝ վառելիք քիչ և ծախսվում և չորրորդ՝ բավական թեթև են: Աերոպլանի մեջ գրաված 100 ձիու ուժ ունեցող շարժիչը հազիք 100 կգ է կշռում:

Ինչու անհրաժեշտ է ներքին այրմամբ մեքենան նախապես պըտքել:

Շոփփերն ավտոմոբիլի շարժիչը շարժման մեջ դնելու համար ինչ և անում:

Շարժիչի զլանի մեջ գագերի այրումից շատ բարձր աստիճանի ջերմություն և առաջ գալիս: Ի՞նչ են անում, վոր զլանը շատ չտաքանա:

43. Ներքին ԱՅՐՄԱՄԲ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: Ներքին այրմամբ շարժիչները ներկայումս մեծ դեր են կատարում թե գործարանային կանքում, թե ավտոտրանսպորտում և թե ողագնացության մեջ: Այն բազմաթիվ ավտոմոբիլներն ու տրակտորները, աերոպլաններն ու գիրիժաբերները, վորոնք տարածված են յերկրագնդի զանազան անկյուններում, աշխատում են ներքին այրմամբ շարժիչներով (մոտորներով):


Կերպերս այդ շարժիչը տարածվում է նաև գյուղատնտեսության մեջ: Լոկոմոբիլը, վոր այնքան տարածված էր գյուղատնտե-

սության մեջ, ներկայումս դուրս է մղվում: Լոկոմոբիլն ինքն իրեն չի կարող շարժվել. Նրան պետք է դնել անիմսերի վրա և ձիերով կամ յեզներով փոխադրել աշխատանքի տեղը: Մինչդեռ տրակտորը ինքն իրեն է շարժվում և վոչ միայն գործ է ածվում այնտեղ, վորտեղ լոկոմոբիլը պետք չի գալիս, որինակ՝ վար ու ցանքի մեջ: Մինչուն տրակտորը շարժվում է և հնձող մեքենան, և կալորդ ու քամող մեքենան, և գութանը, և սերմազտիչ մեքենաները և այլն:

44. ԿԵՆԴԱՆԻ ՇԱՐԺԻՉՆԵՐ: Մարդը, ինչպես և կենդանիները, բավարար չափով մնունդ ստանալու և հանգստի դեպքում, նույնպես կարող են մեխանիկական աշխատանք արտադրել: Նրանք այդ աշխատանքը կատարում են ի հաշիվ այն ջերմակին եներգիայի, վոր աննդարար նյութերը կենդանու մարմնի մեջ այրվելիս արտադրում են:


#### ՍԱՆԴԱՐՑԵՐԸՆԵՐԻ ջերմարար ունակությունը

Մեկ գրամ	կաթը	տալիս է . . .	670 գրոր կալորիա
»	պանիրը	» . . .	4000 » »
»	յուղը	» . . .	7800 » »
»	ձուն	» . . .	1600 » »
»	միսը	» . . .	1100—1500 » »
»	խոզի ապուխուը	» . . .	4400 » »
»	ձարուը	» . . .	7200 » »
»	ցորենի հացը	» . . .	2500 » »
»	բրինձը	» . . .	3500 » »
»	կարտոֆիւը	» . . .	950 » »
»	շաքարը	» . . .	4100 » »



Նկ. 35. Հին ջերաց. աշխատում և մարդով: ոգնությամբ նա չափում եր մըտնող և գուրս յեկող ջրի ջերմության աստիճանները ( $t_1$  և  $t_2$ ): իմանալով անցնող ջրի M քանա-

կը, նա հաշվում եր, թե ջուրը վորքան ջերմություն եր ստացել մի վորոշ ժամանակի ընթացքում՝  $M$  ( $t_2 - t_1$ ) կալորիա։ Պարզ ե, վոր այդ ջերմությունն արտադրել ե մարդը, վորովհետև կալորաչափի մեջ բացի նրանից ջերմության ուրիշ աղբյուր չկար։



Նկ. 36. Զբաղաց հին Հոռոմում (շարժվում ե կենդանու ուժով)։

և չափավոր ֆիզիկական աշխատանքի դեպքում պետք ե մոտ 3700 մեծ կալորիա։

Կենդանի շարժիչների ոգտակար գործ. գործակիցը

Զին լավագույն պայմաններում	.	.	50%
Մարդը լավագույն գեղքում	.	.	37 »
Կառապանի ձին	.	.	20—22 »
Մարդը միջին հաշվով	.	.	17 »
Շոգեմեքենան (համեմատության համար)	.	.	15 »

Զանազան պրոֆեսիայի պատկանող մարդկանց ծախսը կալորիաներով

Գրադիր	.	2500	կալորիա	Դարբին	.	4100	կալորիա
Կար անող	.	2700	»	Խոտ հարող	.	4400	»
Մետաղագործ բանվոր	3300	»	Մաճկալ	.	5000	»	
Լվացարար	.	3400	»	Փայտահատ	.	6000	»
Ատաղձագործ	.	3600	»	Աղյուսներ կրող	.	8900	»
Հնձվոր	.	4000	»	Հեծանիվ քրող	.	9000	»

Խնդիրներ։

Գնացքի շոգեմեքենան 800 ձիու ուժ ունի, նրա ոգտակար գործողության գործակիցն է  $6^{\circ}/\text{o}$ ։ Մի ժամում քանի կիլոգրամ քարածուխ կծախսվի, յեթե մեկ կիլոգրամ քարածուխն արտադրում է 7000 մեծ կալորիա (Պատ. 1204, 4 կգ)։

30 ձիու ուժ ունեցող լոկոմոբիլը 2 ամիս անընդհատ որական 16 ժամ պետք ե աշխատի։ Նա ստացած ջերմության  $12^{\circ}/\text{o}$ -ը վեր ե

ածում ոգտակար աշխատանքի։ Դոնեցի քարածխի վորքան պաշար պետք ե ունենալ վորպեսվի բավարարի շոգեմեքենային այդ ժամանակամիջոցի համար։

Ներքին ալբամամբ շարժիչը 100 ձիու ուժ ունի։ Մի ժամում քանի կիլոգրամ նավթ կծախսվի, յեթե նրա ոգտակար գործ. գործակիցն է  $21^{\circ}/\text{o}$ ։ Մեկ կգ նավթն արտադրում է 10300 մեծ կալորիա (Պ. 31 կգ)։

Շոգեկառքը, վորի ոգտակար գործ. գործակիցն է  $8^{\circ}/\text{o}$ , աշխատում ե 3 ժամ, ունենալով 400 ձիու ուժ կարողություն։ Այդ 3 ժամում նա վորքան քարածուխ կծախսի։ (1 կգ քարածուխը տալիս է 7500 մեծ կալորիա), Պ. 1270 կգ։

#### ՎԱՐԵԼԱՆՑՈՒԹԻ ՊԱԿԱՍԵԼՈՒ ՏԱԳՆԱՐԾ ՅԵՎ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ

Տեխնիկայի և արդյունագործության արագ կերպով զարգանալու պատճառով եներգիայի պահանջը հետզհետե մեծանում է։

Այն միլիոնավոր մեքենաները, վորոնք ցրված են յերկրագնդի վրա, աշխատելիս ահագին քանակությամբ եներգիա յեն կլանում։ Հիշենք միմիայն հենց այն, վոր տրանսատլանտիկան «Մաջեստիկ» կոչված նավը ունի 91000 ձիու ուժ։ Կարելի յե յերեակալակել, թե վորքան մեծ քանակությամբ քարածուխ պետք ե այրի այդ նավը կոնդոնից Նյու-Յորք գնալիս։

Զանազան տեսակի եներգիաներից, վորոնցով ներկայումս մարդիկ ոգտվում են, առաջին հերթին հիշելու արժանի յե վառելանյութի եներգիան։ Ամեն որ շոգեկառքերի, շոգենավերի և այգործարանների ու ֆաբրիկաների ջերմաշարժ մեքենաների կրակարաններում, բնակարանների վառարաններում և խոհանոցներում միլիոնավոր տոններով վառելանյութ ե այրվում։

Վառելանյութերի մեջ ամենակարևորը բարածուխը և նավին են։ Ցերե նկատի ունենանք այն հանգամանքը, վոր բարածուխի պահարը բնության մեջ կազմում է մոտ 7.338.000 միլիոն տոնն և տարեկան գործածության չափն ել կազմում է մոտ 1300 միլիոն տոնն, այն գեղքում այդ քարածուխը կարող է բավականանալ մոտ 5500 տարի։ Բայց այդ քարածուխի մի մասը շատ խոր ե գտնվում և բավական դժվար ե շահագործել. բացի այդ վլումներից պաշտպանվելու համար քարածուխի մի մասը կմնա վորպես միջնորմներ և այն։

Մյուս կողմից՝ նկատի ունենալով այն հանգամանքը, վորտեխնիկայի և արդյունագործության զարգացման շնորհիվ քարածուխի գործածությունը հետզհետե մեծանում է, կարելի յե հաստատած ասել, վոր մարդիկ քարածուխի պակասության կարիքը կզանապելի շուտ, քան հիշած ժամանակամիջոցը. նավի արտադրությունը կամ առաջնային է այս պահում։

թիունը նույնպես աճում է. Միացյալ Նահանգներն արդեն նավթի պաշարի մեծ մասն արտադրել են:

Տորմ յեվ անտառ: Մրանք համեմատաբար եժան վառելանյութեր են համարվում և չունեն քարածխի ու նավթի նշանակությունը: Դրանցով առանձնապես հարուստ ե Խ. Միությունը: Անտառային տնտեսությունը կանոնավոր հիմքերի վրա դնելու դեպքում, ինչպես և տրանսպորտի կանոնավոր գործունելության դեպքում ԽՍՀՄ-ն շատ դարեր կարող ե ապահով լինել վառելանյութով:

Այսպիսով քարածխի և նավթի սպառումն առաջին հերթին զգալի կլինի ոտար լերկրների համար:

45. ՎԱՐԵԼԻՔՆ ԻՆՉՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՓՈԽԱՐԻՆԵԼ, Այժմ հարց ե ծագում, լեթե վառելանյութերը սպառվելու լինեն, այն դեպքում մարդիկ ինչով պետք ե ծածկեն տեխնիկայի և արդյունագործության կարիքները: Ի՞նչ պետք ե անի ապագայի մարդը, զրկվելով քարածխից և նավթից:

Ահա այս խնդիրներն են, վոր ներկայումս դրվում են մարդու առաջ և շուտափությունում պահանջում:

Պարզվում է, վոր բնությունն ունի մի շարք ուրիշ եներգիաներ, վորոնց վրա մարդիկ առաջ ուշադրություն չելին դարձնում: որինակ, հոսող և թափող ջրի եներգիան, քամու եներգիան, մակընթացության և տեղատվության եներգիան, արևի ճառագայթների եներգիան և այլն:

Այդ եներգիաներից ամենակարևորը հոսող ջրի եներգիան ե, վոր կոչվում ե սպիտակ ածուխ:


Սպիտակ ածխի պաշարը լերկրագնդի վրա շատ մեծ ե և քանի արեւ կփայլե լերկնակամարի վրա, հոսող ջրերն անպակաս կլինեն:

Մենք արդեն գիտենք, թե ինչպես կարելի լե ոգտագործել հոսող ջրերի և ջրվեժների եներգիան: Բայց դժբախտաբար ջրային եներգիայի աղբյուրը արդյունագործական կենտրոններից հեռու լե գտնվում: Ի՞նչպես անենք, որինակ, վոր Նիազարայի ջրվեժի եներգիան հասցնենք Նյու-Յորք, կամ Վոլխով գետի եներգիան՝ Լենինգրադ: Դրա համար անհրաժեշտ ե տեղերում կառուցել ելեկտրական կայարաններ. տուրբինը կաշխատեցնի դինամո-մեքենան, վերջինս կտա ելեկտրական հոսանք, վորը հաղորդիչներով կարելի լե տանել գործարանները:

Նույն լեզանակով կարելի լե շահագործել նաև առողի եներգիան, վորով մեր լերկիրն, ինչպես ասացինք, շատ հարուստ ե: Փոխանակ այդ եժան վառելանյութը փոխադրելու գործածության

տեղերը, կարելի լե այդ տորֆի արտադրության տեղում կառուցել ելեկտրական կայարաններ և հոսանքը տեղափոխել: Արտադրության տեղում տորֆը կարգվի և շոգեշարժ տուրբինների ոգնությամբ կաշխատեցնի դինամո-մեքենան և կստացվի ելեկտրական հոսանք: Այդպիսի ելեկտրակայարաններից ե Շատուրի կայարանը (Մուկվայի մոտ):

Ելեկտրական եներգիային անցնելը կոչվում է ելեկտրիֆիկացիա: Բայց վորպեսզի ելեկտրական եներգիան նպատակահարմար կերպով գործածվի, անհրաժեշտ ե ծանոթ լինել ելեկտրականության և մագնիսականության հատկություններին:



## ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԵԼԵԿՏՐՈՍՏԱՏԻԿԱ

46. Ելեկտրականություն ԱՌԱՋԱՆԱԼԸ ՇՓՄԱՄԲ. Ապակե ձողը չոր թղթով շփեցեք և ապա մոտեցրեք սեղանին թափված խցանի կամ թղթի մանր կտորներին. դուք տեսնում եք, վոր ապակին ձգում ե նրանց: Նշանակում ե ապակին թղթով (կամ ամալգամով ծածկված կաշվով<sup>1</sup>) շփելիս ստանում ե նոր հատկություն. Նա այժմ ընդունակ է դեպի իրեն քաշելու զանազան թեթև մարմիններ: Ասում ենք՝ ապակին «Ելեկտրականացել ե» կամ ապակու վրա գտնվում ե «Ելեկտրականություն»:

Ելեկտրականություն բառն առաջացել է հունարեն elektron բառից, վոր նշանակում ե սաթ: Մեզանից դեռ 2600 տարի առաջ հունարեն գիտեցին, վոր սաթը մահուդով շփելու դեպում ձգում ե բմբուլ, հարզի կտորներ և այլն: Ելեկտրական լեռնութների առաջին գիտական հետազոտությունը կատարեց XVI դարի վերջում անգլիացի Փիզիկոս Զիլբերտը:

Ապակե ձողի փոխարեն կարելի յե վերցնել երոնիսի<sup>2</sup> ձող կամ սանր և մահուդով շփելուց հետո մոտեցնել թղթի կտորներին, կտեսնենք, վոր երոնիտի ձողը ձգում ե նրանց: Այստեղից լեզրակացնում ենք, վոր երոնիտի ձողը մահուդով շփելիս ելեկտրականացնում ե:

<sup>1</sup> Կաշին ծածկելու համար գործածվող ամալգամը պատրաստվում ե

<sup>2</sup> Կշռամաս սնդիկից, 1 կշռամաս կլատեկից և 1 կշռամաս ցինկից:

<sup>2</sup> Երոնիտը մի պինդ մարմին ե, վորը պատրաստվում ե խեժից, ծըծմբից և լեղջերալին նութից: Երոնիտից պատրաստում են սանրեր, խաղալիքներ և այլն:

Փորձերը ցուց են տալիս, վոր անխտիր բոլոր մարմինները շփելու դեպքում ելեկտրականանում են, բայց այդ ելեկտրականությունը կարելի յե անմիջապես լեռնան բերել միայն միքանի մարմինների, որինակ՝ ապակու, երոնիտի վրա: Մետաղները նույնպես ելեկտրականանում են, բայց այդ ելեկտրականանությունը լեռնան բերելու համար հարկավոր են առանձին պայմաններ, վորոնց մասին կխոսենք քիչ հետո:

#### 47. ՅԵՐԿՈՒԻ ՍԵՐԻԻ ԵԼԵԿՏՐԱԿԱ-

ՆՈՒԹՅՈՒՆ: Մի կտոր խցան մետաքսե թերով կախեցեք և ապա երոնիտը մահուդով ելեկտրականացնելուց հետո մոտեցրեք այդ խցանին: Խցանը կձգվի և կկպչի երոնիտին, բայց անմիջապես հետ կփախչի: Երոնիտի ելեկտրականության մի մասն անցավ խցանին: Այժմ այդ լեռկու մարմինների վրա գտնվում ե նույն ելեկտրականությունը և նրանք իրար վանում են:



Նկ. 38. Սանրի (երոնիտի) և դնդակի վրա գտնվում են միենույն ելեկտրականությունները. Արանք լեռար վանում են:

Յեթե նույն խցանին մոտեցնեք կաշվով շփած ապակե ձողը, այն դեպքում կտեսնեք, վոր ապակին ու ձողը ձգում են իրար: Յեկ վորովինետև խցանի վրայի ելեկտրականությունը երոնիտից եր ստացվել, ուստի կարելի յե ասել, վոր երոնիտի և ապակե ձողի վրա ստացված ելեկտրականությունները ձգում են իրար:

Հետազոտելով տարբեր մարմինների վրա ստացված ելեկտրականությունը, գալիս ենք այն լեզրակացության, վոր յերկու սեռի ելեկտրականություն ունի: Դրանցից մեկն այն հատկությունն ե ցուց տալիս, ինչ վոր երոնիտի վրայի ելեկտրականությունը, իսկ մյուսը նման ե ապակու վրա ստացված ելեկտրականության: Ուրեմն

Գոյուրյուն ունի յերկու սեռի ելեկտրականություն:

Նույն սեռի ելեկտրական լիցենցը վանում են իրար:

Տարբեր սեռի ելեկտրական լիցենցը ձգում են իրար:

48. ԵԼԵԿՏՐԱՑՈՒՅՑ (Ելեկտրոսկոպ): Վորևե մարմնի վրայի ելեկտրականությունը լեռնան բերելու համար զործ են ածում մի զործիք, վորը կոչվում ե ելեկտրոսկոպ (Նկ. 40): Նա մի ապակե անոթ ե, վորի բերանը փակված ե խցանով: Խցանի միջով անցնում ե մետաղե ձող, վորի սառըին ծալըին կպած են լեռկու թեթև պթերթիկներ»: Այդ թեթիկները լինում են թղթից, ալյումինից, հարզից և այլն:

Յերբ ելեկտրականացած մարմինը դիպլցնում ենք ելեկտրոսկոպի ձողիկին, ելեկտրականությունն անմիջապես տարածվում է ձողի վրայով և թերթիկները բացվում են: Յեթե թերթիկները բացվում են, նշանակում է մարմինի վրա գլուխում են ելեկտրականություն:


Ելեկտրոսկոպի թերթիկներն ինչու են իրար վանում:

49. ՏԱՐԲԵՐ ՍԵՐԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵԶՈՐԱՑՈՒՄԸ. Վերցնենք յերկու միատեսակ ելեկտրոսկոպ և նրանցից մեկին հաղորդենք երոնիտի ելեկտրականություն: Ուրեմն ելեկտրոսկոպներից մեկը կունենա ելեկտրականություն, իսկ մյուսը՝ վոչ: Յեթե ելեկտրոսկոպների ձողերը դիպ-


կիլյամ (1540 — 1603) — ցնենք իրար, ելեկտրականության մի մասնագիտությամբ բժիշկ եր, բայց մասը մի ելեկտրոսկոպից կանցնի մյուլառնական պարագում եր ելեկտրական և մագնիսական յերկույթների հետին և վերջինիս թերթիկները նույնագույնությամբ:

պես կբացվեն:

Մատով դիպչենք թե՛ մեկ և թե՛ մյուս ելեկտրոսկոպի ձողիկին: Նրանց թերթիկներն անմիջապես կիշնեն: Դա ցուց է տալիս, վոր նրանց վրա այս ելեկտրականություն չկա: Այժմ ելեկտրոսկոպներից մեկին հաղորդենք ապակու, իսկ մյուսին երոնիտի ելեկտրակա-



Նկ. 39. Նման ելեկտրականությունները վանում են, իսկ առաքելները ձգում են իրար



Նկ. 40. Ելեկտրականացած և վոչ ելեկտրականացած ելեկտրոսկոպներ:

Նություն, բայց այնքան, վոր յերկու ելեկտրոսկոպների թերթիկներն ել հագասար բացվեն: Յեթե այդ ելեկտրոսկոպների ձողերը դիպշնենք իրար, կտեսնենք, վոր թերթիկներն իշնում են: Նշանակում է հակառակ սեռի ելեկտրականություններն իրար չեղոքացնում են: Այս հիման վրա ելեկտրականություններից մեկն անվանում են դրական, իսկ մյուսը՝ բացասական: Իբրև դրական ընդունված է ապակու, իսկ իբրև բացասական երոնիտի վրայությունը:

Ելեկտրոսկոպները լարեցեք դրական ելեկտրականությամբ, բայց տարբեր չափերով, այսինքն այնպես, վոր մեկի թերթիկները շատ բացվեն, իսկ մյուսինը քիչ: Ելեկտրոսկոպների ձողիկները միացրեք իրար, ինչ ստացվեց:

Ելեկտրոսկոպներից մեկն հաղորդեցեք դրական իսկ մյուսին բացասական:

Ելեկտրականություն, բայց այնպես, վոր թերթիկները տարբեր չափերով բացվեն:

Յեթե ձողիկները միաց-

նեք իրար հետ, այն դեպ-

ում ելեկտրոսկոպների

վրա ինչ ելեկտրականությունը

չափասար ելեկտրականությամբ:

Ելեկտրոսկոպի վրա կա

միացնայի մարմնի նյութից, այլ և նրանից, թե ինչով ենա ըստ-

վում: Ցուց տվեք, վոր ապակին մորթով շփելու դեպքում, ելեկտրա-

կանում է բացասական ելեկտրականությամբ:

Նկ. 41. Ելեկտրոսկոպները

Նկ. 42. Տարբեր ելեկ-

տրականությունները

չեզոքացրեն իրար, թե

նա վոր տեսակին ե:

Մարմնի վրա ստացված ելեկտրականության նշանը կախված է

վոչ միայն այդ մարմնի նյութից, այլ և նրանից, թե ինչով ենա ըստ-

վում: Ցուց տվեք, վոր ապակին մորթով շփելու դեպքում, ելեկտրա-

կանում է բացասական ելեկտրականությամբ:

50. ՅԵՐԿՈՒ ՍԵՐԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԱՌԱ-

ՋԱՆԱԼԸ ՇՓՄԱՆ ՄԻՋՈՑԻՆ: Փորձերը ցուց են տալիս, վոր շփման

միջոցին միաժամանակ առաջանում է թե՛ դրական և թե՛ բացասա-

կան ելեկտրականություն: Յեթե շփող մարմնի (որինակ, ապակու)

վրա առաջ է գալիս դրական, այն դեպքում շփողի (կաշվի) վրա

կառաջանա բացասական ելեկտրականություն: Յեթե երոնիտի վրա

առաջանում է բացասական ելեկտրա-

կանություն, նշանակում է այդ միջո-

ցին մահուղին ստանում է դրական ե-

լեկտրականություն:

51. ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԻՉ-

ՆԵՐ ՅԵՎ ԱՆՀԱՂՈՐԴԻՉՆԵՐ: Ելեկտրոս-

կոպլը լարեցեք վորեւ ելեկտրականու-

թյամբ: Յեթե մատով դիպչեք ելեկ-

տրոսկոպի ձողիկին, կտեսնեք, վոր

թերթիկներն իշնում են: Ե-

թերթիկները ձեր մարմնի մի-

ջով անցավ գետին:

Ելեկտրոսկոպի կրկին ելեկտրակա-

նացրեք: Ապակի ձողիկի մի ծալը ձեռքներիդ մեջ պահեցեք,

իսկ մյուսը դիպչեք ելեկտրոսկոպի ձողիկին: Թերթիկները չեն

իրար բացվեցին իշնում:



Նկ. 42. Երկու ելեկտրականությունը չի անցիացնում:

իշնի: Նշանակում ե՛ ելեկտրոսկոպի ելեկտրականությունը ապակու միջով չանցավ ձեր ձեռքին: Ուրեմն ապակին ելեկտրականություն չի անցկացնում: Այժմ վերցրեք յերկաթե կամ պղնձե ձող և նրա մի ծալրը պահեցեք ձեռքի մեջ, իսկ մյուսը դիպոլը ելեկտրոսկոպի ձողիկին. թերթիկներն անմիջապես կիցնեն: Ելեկտրոսկոպի ելեկտրականությունը մետաղի միջով անցավ ձեր ձեռքին, այնտեղից ել գետին: Ուրեմն յերկաթը կամ պղինձը ելեկտրականության հաղորդիչ են:


Մարդու և կենդանիների մարմինները, մետաղները, գրաֆիտը, կոքսը, աղերի և թթուների լուծուլիթները համարվում են հաղորդիչներ, իսկ երոնիտը, ապակին, մետաքսը, ուետինը, միանգամայն մաքուր ջուրը<sup>1</sup>, չոր ողը և այն համարվում են ելեկտրականության վայ հաղորդիչներ կամ անհաղորդիչներ:

Չոր փայտը, թուղթը համարվում են կիսահաղորդիչ:

Յերբ ցանկանում են, վոր հաղորդիչի վրա ելեկտրականությունը մնա, նրան կղզիացնում են, այսինքն տեղափորում են վոչ հաղորդիչ նյութի վրա: Իբրև կղզիացնող նյութ սովորաբար գործ են ածում երոնիտ կամ ապակի:

Ելեկտրոսկոպը լրացրեք և ապա նրա ձողիկին դիպոլը չոր թղթի մի ծալրը (մյուսը պահեցեք ձեռքներիդ մեջ). Բնչ եք նկատում:

Նույն փորձը կրկնեցեք թաց թղթի վրա: Վճր թուղթն ե ելեկտրականությունը լավ անցկացնում:



Նկ. 44. Խնդուկցիայի ժամանակ առաջանաւմ է + և - ելեկտրականություն: Թերթիկները բացվում են: Նշանակում ե, ելեկտրականացած ձողը հեռվից ազդում է ելեկտրոսկոպի վրա և նրա վրա առաջացնում ելեկտրականություն: Բայց հենց վոր ձողը հեռացնում ենք, թերթիկները կրկնին իշնում են:

Վորպեսզի յերկույթն ավելի հասկանալի լինի, կատարենք մի այսպիսի փորձ: Յերկու ելեկտրոսկոպի ձողիկները մետաղե հաղորդիչ-

<sup>1</sup> Կողմանակի նյութեր պարունակող ջուրն, ընդհակառակը, ելեկտրականությունն անց ե կացնում. այդ պատճառով, յերբ ելեկտրականացած մարմինը ծածկվում ե խոնավության բարակ շերտով, այն ժամանակ նրա լիցքը կորչում ե:

չով միացնենք և ապա մոտեցնենք մի ելեկտրականացած մարմին. թերթիկները կբացվեն. յեթե ձողը հեռացնենք, թերթիկները կիշնեն: Յեթե ելեկտրականացած ձողը պահենք ելեկտրոսկոպի մոտ և ապա միացնող հաղորդիչը<sup>1</sup> վերցնենք, ելեկտրոսկոպները լարված կմնան և ելեկտրականացած ձողը հեռացնելուց հետո:

Հետազոտելով այդ ելեկտրոսկոպների լիցքերը, մենք համոզվում ենք, վոր նրանք տարբեր նշան ունեն: Յեթե ազդող ելեկտրականությունը դրական ե, այն դեպքում մոտիկ ելեկտրոսկոպի վրա ստացվում ե բացասական, իսկ հեռու գտնվող ելեկտրոսկոպի վրա՝ դրական ելեկտրականություն:


Ուրեմն ելեկտրականացած մարմինն իր մոտ գտնվող մարմնի վրա առաջ ե բերում հավասար հանակությամբ յերկու տեսակի ելեկտրականություն: մոտիկ մասում առաջանաւ ե հակառակ, իսկ հեռավոր մասում նման ելեկտրականություն:

Այս յերկույթը կոչվում ե ելեկտրական ինդուկցիա կամ ազդեցություն:

Ելեկտրական ինդուկցիայի հիման վրա կարելի յե մի տեսակ նույն և զետին. ելեկտրոսկոպի վրա մնում ե հակառակ:

Նկ. 45. Նման ելեկտրականությունն անցնում է զետին. ելեկտրոսկոպի վրա մնում է հակառակ:

Ելեկտրոսկոպին մոտեցրեք դրական ելեկտրականությամբ լարված ապակե ձողը. Ելեկտրոսկոպի թերթիկները կբացվեն: Զհեռացնելով ապակե ձողը, մատով գիպեր ելեկտրոսկոպի ձողիկին ձողիկները կիշնեն. այն ժամանակ ելեկտրոսկոպի վրայի դրական ելեկտրականությունը կանցնի զետին, իսկ բացասականը կմնա, վորովհետև դրական աղբյուրը ձգում ե նյան: Բայց յեթե ապակե ձողը հեռացնենք, այն դեպքում ելեկտրոսկոպի վրա մնացած բացասական ելեկտրականությունը



Նկ. 46.

<sup>1</sup> Ելեկտրոսկոպները միացնող հաղորդիչը սովորաբար ունենում ե կը զիացանող կոթ. յեթե ազդուի հաղորդիչ չունեք, այն դեպքում ելեկտրոսկոպները միացնող կացնում է աղորդիչը պետք ե բռնել ուետինի կամ մետաքսի ողությամբ:

կտարածվի ելեկտրոսկոպի ամբողջ ձողիկի վրա: Ուրեմն ապակու դրական ելեկտրականության ազդեցության տակ ելեկտրոսկոպի ձողիկի վրա մենք ստացանք բացասական ելեկտրականություն:

Ի՞նչ յերկույթ ե ցուց տալիս, վոր ինդուկցիայի միջոցով առաջած ելեկտրական լիցքերը հավասար են:

Ի՞նչ նմանություն կա ելեկտրական և մագնիսական ձգողության ու վանդության մեջ, ինչպես և ելեկտրական ու մագնիսական ինդուկցիայի մեջ:

Բացատրեցեք 46-րդ նկարը:

53. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵԹԵՆԱԿԵՐ. Բավական ուժեղ ելեկտրական լիցքեր ստանալու համար գործ են ածում զանազան ելեկտրական մեքենաներ: Դրանցից ամենապարզը կոչվում է «Ելեկտրական մեքենա շփմամբ»: Նրա գլխավոր մասը կազմում է ապակե շրջանը,





վորը կարելի յե պտտել: Պտտվելիս շրջանը քսվում է կաշվե (A) բարձիկներին և ստանում է դրական ելեկտրականություն: Բարձիկների վրա առաջացող բացասական ելեկտրականությունն անցնում է գետին: Ապակու ելեկտրականացած մասերն ընկնելով սուր ծայրեր ունեցող (C) յերկանությունը մեջ, առաջացնում են ինդուկցիայի յերկույթ—սուր ծայրերում հավաքվում ե բացասական, իսկ (K) հավաքիչի վրա՝ դրական ելեկտրականություն: Սուր ծայրերի բացասական ելեկտրականությունն անցնում է ապակուն և չեղոքացնում այնտեղի դրական ելեկտրականության բնազավառում կատարած հետազոտություններով: Շանթարգելի գյուտը նրան և պատկանում է K.

ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ (1706-1790) Ամերիկայի հաստրակական նշանավոր գործիչ: Գիտության մեջ հայտնի յե ապակուն և չեղոքացնում այնտեղի դրական ելեկտրականությունը. իսկ դրական ելեկտրականությունը. իսկ դրական ելեկտրականությունը մնում է K հավաքիչի վրա: Շրջանը պտտելիս K հավաքիչի վրա անընդհատ ավելանում է ելեկտրական լիցքը: Կան և այնպիսի ելեկտրական մեքենաներ, վորոնք ինդուկցիայի շնորհիվ իրենց վրա գտնվող ելեկտրական անշան լիցքը բավական ուժեղացնում են: Այդ մեքենաներն ունենում են յերկու հաղորդիչ, վորոնցից մեկի վրա պտտելու ժամանակ հավաքվում է դրական, իսկ մյուսի վրա՝ բացասական ելեկտրականություն: Յերբ այդ հաղորդիչների վրա հավաքվում են բավական ուժեղ լիցքեր և հաղորդիչների ծայրերն ել շատ հեռու չեն, այն գեպքում նրանք միանում են իրար հետ և կայծ առաջացնում: Այդ կայծով կարելի յե վառել եթեր, ծակել

թուղթ, նունիսկ ապակի: Նկատենք, վոր կայծի ակտությունը հազիվ 0,00001 վայրկյան ե լինում:

Ելեկտրական մեքենայի ոգնությամբ կարելի յե ելեկտրականացնել մարդուն. դրա համար հարկավոր ե կանգնել վորեւ անհա-



Նկ. 47. Ելեկտրական մեքենա շփմամբ:

դորդչի վրա կամ հագնել չոր կրկնակոշիկներ: Ելեկտրականացած մարդու մազերը գլխին բիզ-բիզ են կանգնում. դիպչելով նրան, կարելի յե առաջացնել կայծեր. այդ կայծերով կարելի յե վառել գազեր և ալյն:

54. ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ: Ինչպես վոր ջերմային յերկութներն ուսումնասիրելիս մարմնի մեջ դաշտվող ջերմության քանակը տարբերում ենք այդ մարմնի ջերմության աստիճանից, այնպես ել մարմնի վրա յեղող ելեկտրականության բանակությունը տարբերում ենք այդ ելեկտրականության լարվածությունից:

Մարմնի վրա գտնվող ելեկտրականության լարվածության չափը կոչվում է պոտենցիալ:

Վորեւ հաղորդչի պոտենցիալի մասին կարելի յե գաղափար կազմել ելեկտրոսկոպի թերթիկների բացվելով: Դրա համար մետաղ բարակ թելով հաղորդիչը միացնում ենք ելեկտրոսկոպի հետ:

Յեթե թերթիկները շատ են բացվում, նշանակում ե պոտենցիալը բարձր ե:

Գետնի հետ միացրած ելեկտրոսկոպի թերթիկները բոլորովին չեն բացվում. նշանակում ե յերկրի պոտենցիալը բնականաբար պեսք ե ընդունել զերո:

Ինչպես վոր ջերմության տեղափոխվելու պատճառը բարեխառնության կամ ջերմության աստիճանների տարբերությունն ե,

այնպես ել ելեկտրականուրյան սեղափոխվելու պահառը պոտենցիալների տարբերությունն ե:

Ելեկտրոսկոպները լարեցեք նույն սեռի ելեկտրականությամբ, բայց այնպես, վոր նրանք տարբեր պոտենցիալներ ունենան: Յեթե ելեկտրոսկոպների թերթիկներն

նկ. 48. Նույն քանակությամբ ելեկտրականությունից փոքր հաղորդիչը մեծ պոտենցիալ ե ցույց տալիս:

իրար հետ միացնեք, դուք կտեսնեք, վոր մի ելեկտրոսկոպի պոտենցիալն իջավ, իսկ մյուսինը՝ բարձրացավ: Նշանակում ե բարձր պոտենցիալ ունեցող մարմնից ելեկտրականությունն անցավ ցածր պոտենցիալ ունեցող մարմնին:

55. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (Ելեկտրունակություն): Վերցնենք տարբեր մեծություն ունեցող յերկու կղզիացած հաղորդիչներ յերկուսին ել հաղորդենք նույն չափով ելեկտրականություն: Յեթե հաղորդիչները միացնենք նման ելեկտրոսկոպների հետ, կտեսնենք, վոր փոքր հաղորդիչը ցույց կտա մեծ պոտենցիալ, իսկ մեծ հաղորդիչը՝ փոքր: Նշանակում ե, հավասար ելեկտրական լիցքերից փոքր հաղորդիչն ավելի յե լարվում, քան թե մեծը: Վորպեսզի մեծ հաղորդիչն ունենա նույն պոտենցիալը, ինչ վոր փոքրպեսզի մեծ հաղորդիչն ունենա նույն պոտենցիալը, հաղորդենք: Ասում ենք մեծ հաղորդիչն ավելի մեծ ունակություն ունի, քան թե փոքրը:

Ելեկտրականության քանակ, պոտենցիալ և ունակություն հասկացողությունները լավ ըմբռնելու համար, դրանց համեմատենք ջերմության քանակի, ունակության և աստիճանի հետ, ցույց տալով նրանց նման և տարբեր գծերը:

Մարմնի պոտենցիալն այնքան ավելի բարձր է, վորքան շատ ելեկտրականություն կտ նրա վրա:

Մարմնի մեջ վորքան շատ ջերմություն կտ, այնքան ավելի բարձր և նրա աստիճանը:

Յերկրի և յերկրի հետ միացած բոլորդիչների պոտենցիալը պայմանական կերպով ընդունված ե զերո:

Ընդունված ե, վոր դրական ելեկտրականությամբ ելեկտրականացած հաղորդիչն ունի դրական պոտենցիալը, իսկ բացասականացած հաղորդիչը՝ բացասական պոտենցիալ:

Յեթե նույն քանակությամբ ջերմություն հաղորդենք տարբեր նույն սեռի յերկու դրականություն ունեցող մարմինների, վորոնք տարբեր ելեկտրականություն ունեն, այն դեպքում մեծ ջերմունակություն ունեցող մարմնի ջերմության աստիճանն ավելի քիչ կբարձրանա, քան թե մյուսինը:

Զանազան հաղորդիչներ մինչև նույն պոտենցիալը ելեկտրականացած ներկու համար այնքան ավելի շատ ելեկտրականություն ե պետք, վորքան մեծ և հաղորդչը ունեցող մարմնի ջերմություն ունեցող մասկությունը:

Յերբ տարբեր պոտենցիալ ունեցող յերկու հաղորդիչները միացնում ենք իրար, այն դեպքում ջերմությունը մարմնից անցնում ե մյուսին, մինչև վոր նրանց պոտենցիալները հավասարվում են:

Հաղորդչի ելեկտրունակությունը կախված է այդ հաղորդչի ձեվից և ծանրավայրից, բայց կախված չե զանգվածի մեծությունից (սնամեջ գունդականի մասսիվ գունդը նույն ելեկտրունակությունն ունեն), կախված չե նաև նյութի տեսակից:

Տարբեր ելեկտրականություն ունեցող մարմինները, վորոնք մեծաքանչ են մինչև տարբեր պոտենցիալները, մենք կարող ենք համարված են մինչև մեծատել նաև տարբեր լայնություն ունեցող գլանաձև անոթների

Սառցի հալման աստիճանը պայմանական կերպով ընդունված ե զերո:

Ընդունված ե, վոր հալվող սառցից տաք մարմիններն ունեն ջերմության դրական աստիճան, իսկ ավելի ցուրտ մարմինները՝ բացասական աստիճան:


Յեթե նույն քանակությամբ ջերմություն հաղորդենք տարբեր նույն դեպքում մարմինների, այն դեպքում մեծ ջերմունակություն ունեցող մարմնի ջերմության աստիճանն ավելի քիչ կբարձրանա, քան թե մյուսինը:

Զանազան մարմիններ նույնագություն կամ ամառ այնքան ավելի շատ ջերմություն ե պետք հաղորդչը, վորքան մեծ և մարմնի ջերմություն ունեցող մասկությունը:

Յերբ մարմինները կպչում են իրար, այն դեպքում ջերմությունը տաք մարմնից անցնում ե սառը մարմնին, մինչև վոր աստիճանները հավասարվում են:


Մարմնի ջերմունակությունը կախված չե նրա ձեվից, բայց կախված է նյութից և զանգվածի մեծությունից:

հետ, վորոնց մեջ ջուրը տարբեր բարձրության վրա իւ կանգնած (նկ. 49): Այստեղ ջրի քանակը կարելի իւ նմանեցնել ելեկտրական




նկ. 49.

քանակությանը, անոթի լայնությունը՝ հաղորդչի ելեկտրունակությանը, իսկ սյան բարձրությունը (կամ նրա ճնշումը)՝ պոտենցիալին:



նկ. 50. Ցերբ գետնի հետ միացած հաղորդիչը մոտենում ենք ելեկտրականացած մարմին, վերջինիս ունակությունը մեծանում է:

56. ԽՏԱՅՈՒՑԻՉ (կոնդենսատոր): Վերցնենք թիթեղի ձև ունեցող կղզիացած հաղորդիչ և, ելեկտրոսկոպի հետ մետաղի թելով միացնելուց հետո, ելեկտրականացնենք մինչև մի վորոշ պոտենցիալ: Ցեթե այդ թիթեղին մոտենենք մի ուրիշ թիթեղ, վորը միացած է գետնի հետ, այն դեպքում կտեսնենք, վոր առաջին թիթեղի պոտենցիալն ընկնում է և վորքան մոտ լինեն թիթեղները, պոտենցիալն այնքան ավելի կնվազի:




նկ. 51. Ցերբ գետնի հետ միացրած հաղորդիչը մոտեցնում ենք ելեկտրականացած մարմին, վերջինիս ունակությունը մեծանում է:

Փորձի ժամանակ թիթեղի լիցքը մնում է անփոխ. և լիթե պոտենցիալը պակասեց, նշանակում է նրա ելեկտրունակությունը մեծացավ: Ուրեմն գետնի հետ միացրած թիթեղի մոտեցնելուց՝

կղզիացրած առաջին թիթեղի ելեկտրունակությունը մեծանում է:

Բավական զգայուն ելեկտրոսկոպի ոգնությամբ կարելի է ցուց տալ, վոր առաջին թիթեղի ելեկտրունակությունն ավելի կմեծանա, յեթե յերկու թիթեղների արանքում տեղավորենք պարաֆինի, ծծմբի, ապակու և այլ անհաղորդիչ թիթեղը: Այդ փորձերի ժամանակը ի միջի ալոր, պարզվում է, վոր տարբեր անհաղորդիչների գեպքում թիթեղի ելեկտրունակությունը տարբեր չափով և փոխվում: Այս յերեսութը ցուց է տալիս նաև, վոր ելեկտրական ուժը զանազան անհաղորդիչների միջով տարբեր չափով և գործում:

Այսպես ուրեմն տնհաղորդիչ ցերտով բաժանված հաղորդիչ թիթեղների գույզն ավելի մեծ ելեկտրունակություն ունի, քան առանձին թիթեղը:




նկ. 52. Կոդեն-

շերտով բաժանված յերկու հաղորդիչ թիթեղներից, կոչվում է ելեկտրական խացուցիչ կամ կոնդենսոր:

Ամենահարմար և գործնական կոնդենսատորներից մեկը լեյլենյան է: Սա յուր անոնն ստացել է Հոլլանդիայի Լեյլեն քաղաքից, վորտեղ առաջին անգամ (XVIII դարում) կատարեցին մի շարք փորձեր նման կոնդենսատորի վրա:

Լեյլենյան շիշը մի ապակե գլանաձև անոթ է, վորի դրսի և




նկ. 53. Լեյլենյան շիշ լարում ելեկտրականությամբ:

Ներսի յերեսները պատաժ են կլայեկի թերթով: Այստեղ կլայեկի թերթերը կատարում են հաղորդիչ թիթեղների գերը, իսկ ապակին՝ թիթեղները կատարում են հաղորդիչ թիթեղների գերը: Հարմարության համար լեյլենյան շիշ

ներքին թերթը միացրած է մետաղի ձողի հետ։ Յերբ ցանկանում են շիշն ելեկտրականացնել, ելեկտրական մեքենայի բևեռը միացնում են այդ ձողի գլխիկի հետ։

Այժմ տեսնենք, թե ինչպես է գործում կոնդենսատորը։ Դիցուք թե լեյդենիան շիշ ձողիկը միացրած է ելեկտրական մեքենայի դրական բևեռի հետ։ Պարզ է, շիշ ներքին թերթն ել կտանադրական ելեկտրականություն։ Այս ելեկտրականությունը կազդի




Նկ. 55. Ելեկտրոսկոպ կոնդենսատորով։

(նմանը) կանցնի գետին, իսկ բացասականը կմնա։ Այս բացասական ելեկտրականության ձգողության ուժի ազդեցության տակ ելեկտրական մեքենայից ավելի շատ ելեկտրականություն կգա, քան առանց նրան։ Ուրեմն դրսի թերթի շնորհիվ ներսի թերթի վրա ելեկտրականությունը խտանում է։

Յեթե ձախ ձեռքներդ դրսի թերթի վրա, իսկ աջը մոտեցնեք ձողիկին, առաջ կգա կայծ։ Ուժեղ լարված կոնդենսատորը ձեռքով պարպելիս կարող ե մահացու կայծ տալ, ուստի կոնդենսատորը պարպելու համար գործ են ածում կղզիացնող կոթով աղեղնաձև կամ անկյունաձև «պարպիչներ»։

### ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

57. ԳՈՂԱՓԱՐ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՄԱՍԻՆ. Մենք տեսանք, վոր յերբ տարբեր պոտենցիալ ունեցող յերկու հաղորդիչներ միացնում ենք իրար հետ, ելեկտրականությունն պնդիչապես տեղափոխվում է բարձր պոտենցիալ ունեցող մարմնից գեպի մյուսը և նրանց պոտեն-




նկ. 56. Ելեկտրականությունը փայտի ձողի միջով հոսում է գեպի գետին։ Ելեկտրոսկոպները ցույց են տալ, զոր պատենցիալը հետզհետե ընկնում են։ Ատացվում է մի վոր հավասարակշռություն։ Բայց յեթե հաղորդիչներից մեկին անընդհատ ելեկտրականություն հաղորդենք, այնպես վոր նրա պոտեն-

ցիալը շարունակ ավելի բարձր լինի, քան թե մյուսինը, այն դեպքում ելեկտրականությունն անընդհատ կհոսի բարձր պոտենցիալը ունեցող հաղորդչից գեպի մյուսը։

Ելեկտրականության անընդհատ տեղափոխությունը կոչվում է ելեկտրական հոսանք։

Ելեկտրական հոսանքը կարելի յէ ստանալ ելեկտրական մեքենայի ոգնությամբ։


Վերցնենք մի կիսահաղորդիչ, որինակ՝ փայտե ձող և նրա մի ծալիքը միացնենք ելեկտրական մեքենայի բևեռի հետ, իսկ մյուսը՝ գետնի հետ (նկ. 57)։ Պոտենցիալների չափի մասին գաղափար կազմելու համար ձողի տարբեր տեղերում կախենք ծխախոտի թղթից բարակ թերթիկներ, վորոնք կատարեն ելեկտրոսկոպի դերը։




Նկ. 57. Զրի ճնշումը աստիճանաբար թուլանում է։ Մեքենայից գեպի գետին անցնող ելեկտր. հոսանքը նմանություն։

Ճեթե գետի անընդհատ լիցքեր հաղորդենք, այն դեպքում ելեկտրականությունը փայտի միջով անընդհատ կանցնի գետին։ Համաշափառտելիս տեսնում ենք, վոր պոտենցիալները գեպի գետին հետզհետե նվազում են։

Յեթե փայտի ձողի ծալիքը միացնենք ելեկտրական մեքենայի հակառակ բևեռների հետ ու մեքենան պատենք, այն ժամանակ դրական ելեկտրականությունը, կհոսի գեպի բացասական բևեռ, իսկ բացասականը՝ գեպի դրական բերքը (նկ. 59)։



Նկ. 58. Փայտի ծայրերն ունեն տարբեր պոտենցիալներ։ միջին մասում պատենցիալը գերու յէ։




Նկ. 59. Ելեկտրական հոսանքը նմանություն։ Յեթե անոթներից մեկի մեջ ջուրը միշտ բարձր մնա, իսկ մյուսում՝ ցածրը այն գեպի գումարը միացնող խողովակով ջուրը շարունակ կհոսի։

Վորպիս հոսանքի ուղղություն պայմանական կերպով ընդունվում է այն ուղղությունը, վորով շարժվում է դրական ելեկտրականությունը։

Այսպիսով ելեկտրական մեքենան փայտի ծալը ուժ առաջ երթում պոտենցիալների վորոշարբերություն։ Այդ պոտենցիալների տարբերության պատճառով ելեկտրականությունը հոսում է փայտի միջով։ Պոտենցիալների տարբերությունը կոչվում է նաև ելեկտրաշարժիչ ուժ (ելեկտրականությունը մզող ուժ)։

Փայտի ընդլայնական կտրվածքի միջով մի վայրկյանում վորան շատ ելեկտրականություն է անցնում, հոսանքն այնքան ավելի ուժեղ է։

58. ԳԱԼՎԱՆԱԿԱՆ ԵԼԵՄԵՆՏ. Ելեկտրական մեքենան պտտելու դեպքում մենք ստանում ենք պոտենցիալների մեծ տարբերություն


  
 $-$  + (մեծ ելեկտրաշարժիչ ուժ), բայց աննշան քանակությամբ ելեկտրականություն, հետեւապես և թույլ հոսանք։ Այսպիսի ելեկտրական հոսանքով մենք չենք կարող զանազան աշխատանքներ կատարել։ Ելեկտրական մեքենայի տված հոսանքը կարելի է նմանեցնել այն բարակ տուփակին, վորը հոսում է բավական բարձր տեղից։ Վոչ վոք այդպիսի առվակի վրա ջրաղաց չի շինի։

Նկ. 60. Վոլտուի ելեմենտ։

Ներկայումս ուժեղ ելեկտրական հոսանք ստանալու համար գործ են ածում այսպիսի աղբյուրներ, վորոնք պոտենցիալների փոքր տարբերության դեպքում անգամ տալիս են բավական ուժեղ հոսանք։ Այդպիսի աղբյուրներից են գալվանական ելեմենտը և դինամոմետրենական մումենական։

Առաջիմ զբաղվենք գալվանական ելեմենտով. դինամոմեքենայի մասին կխոսենք հետո։

Վերցրեք մեկ հատ ցինկի և մեկ հատ ել պղնձի թիթեղ և ընկդեցեք բաժակի մեջ, վորտեղ գտնվում է ծծմբաթթվի թույլ լուծույթ (նկ. 60). Չափազանց զգայուն ելեկտրոսկոպի միջոցով կարելի է ցույց տալ, վոր յերկու թիթեղներն ել ելեկտրականացել են։ Ցեթեւ ցինկի ազատ ծալը մետաղի թելով միջով միացնենք գերեզման կամ պղնձական հոսանքի մուտքային մասին կխոսենք հետո, այն դեպքում կստանանք դրական ելեկտրականություն, իսկ



Առաջիմ Գալվանի (1737—1798)՝ մարդականության պրոֆեսոր եր Բոլոնիայի համալսարանում (Իտալիա)։ Գալվանու և Վոլտայի մեջ յեղած հետաքրքիր գեճի ժամանակ զանգեց ելեկտրական հոսանքի աղբյուր։

իսկ պահանջանական ելեկտրականություն, իսկ

յեթե պղինձը միացնենք գետնի հետ, իսկ ցինկը՝ ելեկտրոսկոպի հետ, կստանանք բացասական ելեկտրականություն։

Պղնձի և ցինկի թիթեղները կոչվում են ելեկտրոդներ։

Պղնձի ազատ ծալը կոչվում է դրական բեվեռ կամ անոդ, իսկ ցինկի ծալը բացասական բեվեռ կամ կատոդ։ Ցեթեւ պղնձի և ցինկի ծալը բարեր գորևե հաղորդչով միացնենք իրար հետ, կստանանք ելեկտրական հոսանք, վորի ուղղությունը հաղորդչի մեջ կիսնի պղնձից դեպի ցինկը, իսկ թթվի մեջ ցինկից դեպի պղնձը։

Ցինկի, պղնձի և ծծմբաթթվի մեր այս միավորությունը ամենապարզ գալվանական ելեմենտն է, վորը վոլտա գիտականի անունով կոչվում է նաև Վոլտայի ելեմենտ։


Ելեկտրական մեքենայի դեպքում ելեկտրական եներգիան մենք ստանում ենք ի հաշիվ այն աշխատանքի, վոր ծախսում ենք մեքենան պտտելիս, իսկ վոլտայի ելեմենտի մեջ այդ ելեկտրական եներգիան ստացվում է ի հաշիվ ֆիլմական եներգիայի։ Ցինկի և ծծմբաթթվի մեջ տեղի է ունենում հետևյալ ըեակցիան։



Ցինկը դուրս է մղում ջրածինը թթվից, իսկ ինքը բռնում է նրա տեղը։ Ցինկի և թթվի փոխարեն ստանում ենք աղ և ջրածին։ Այս թեակցիայի ժամանակ ֆիլմական եներգիայի մի մասը վեր է ածվում ելեկտրական եներգիայի։

Հոսանքի ժամանակ դրական և բացասական ելեկտրականությունները չեղոքացնում են իրար, բայց, շնորհիվ ըիմիական ըեակցիայի, ելեմենտի բեվեռների վրա հավաքվում են նոր ելեկտրական լիցքեր, սրանք նույնպես չեղոքացնում են իրար, դարձյալ առաջ և գալիս պոտենցիալների տարբերություն է այն։

Կարենոր է հիշել, վոր ելեկտրական հոսանք ստանալու համար անհրաժեշտ պայմանը վարն է։ Ի՞նչ է նշանակում անոդ և կատոդ։ Հոսանքն ինչ ուղղությամբ է հոսում։



Նկ. 61. Վոլտուի ելեմենտից ստացվում է ելեկտրական հոսանք։


Հոսանք ստանալու համար անհրաժեշտ պայմանը վարն է։

Ի՞նչ է նշանակում անոդ և կատոդ։

Հոսանքն ինչ ուղղությամբ է հոսում։

59. ՄԱՐՏԿՈՅՑ: Վոլտայի մեկ ելեմենտը թուզ հոսանք է տալիս, այդ պատճառով մի քանի ելեմենտներ միացնում են իրար հետ և կազմում մարտկոյց:


Մարտկոյց կազմելիս մեկ ելեմենտի դրական բևեռը միացնում են յերկրորդի բացասականի հետ, յերկրորդի դրականը՝ յերրորդի բացասականի հետ, յերրորդի դրականը՝ չորրորդի բացասականի հետ և այլն, այնպես վոր առաջինից մնում ե ազատ բացասական բևե-



Նկ. 62. Վոլտայի ելեմենտներից կազմված և մարտկոյց, վորը տալիս ե ուժեղ հոսանք:

որ, իսկ վերջինից՝ դրականը. հետո այդ ազատ մնացած բևեռները միացնում են վորես հաղորդչով և ստանում ավելի ուժեղ հոսանք։ Հասկանալի յե, իհարկե, վոր մարտկոյց կազմելիս կարելի յե վերցնել ցանկացած թվով ելեմենտներ։

Ահա այդպիսի մարտկոցների ոգնութիւամբ մենք կարող ենք ստանալ բավական ուժեղ ելեկտրական հոսանք։ Բայց հաղորդչի



Նկ. 63. Շղթան կտրված ե, հոսանքը չի անցնում։

Շղթան փակ ե, հոսանքն անցնում է։

միջով հոսանքն անցնում է թե չե, այդ մենք անմիջապես չենք կարող վրոշել, վորովհետև ելեկտրականությունն ըմբռնելու համար զգացարան չունենք. այդ պատճառով հոսանքը պետք է անցկացնել այնպիսի գործիքների միջով, վորոնք հոսանքի ազդեցությունից կուտքն գործել, և մենք այդ ժամանակ կեզրակացնենք, վոր հո-

անք կա։ Այդ նպատակով կարելի յե գործածել ելեկտրական զանգը, ելեկտրական լապտերը և այլն։

Աշխատանք։

Մարտկոյցից յեկ ելեկտրական լապտերից ելեկտրական տրա կազմել։ Պարագաներ—1) մի քանի գալվանական ելեմենտներ, 2) զանգի համար գործածվող մետաղե լար, 3) «բանալի», 4) փոքր վոլտանոց ելեկտրական լապտեր (գրպանի ելեկտր. լապտեր)։

1. Վերը հիշած իրերն իրար հետ այնպես միացրեք, վոր կազմվի ելեկտրական շղթա և լապտերն ել վորվի։

2. Պարզեցեք, թե հոսանքն անցնելու ժամանակ (այսինքն լապտերը վառվելիս բանալու մետաղե մասերն իրար հետ չըշփվեն։ Ի՞նչ եք նկատում։

3. Այնպես արեք, վոր բանալու մետաղե մասերն իրար հետ չըշփվեն։ 4. Բանալու մետաղե մասերը դարձյալ միացրեք իրար հետ, վորպեսզի լապտերը վառվի։


5. Բաժանեցեք ձեր կազմած շղթայի մի այնպիսի սխեմա, վորը լուց տա, թե լապտերը վառվում ե, այսինքն հոսանքն անցնում է։

6. Գծագրեցեք ձեր կազմած շղթայի մի այնպիսի սխեմա, վորը լուց տա, թե լապտերը վառվում ե, այսպիսի սխեմա, վոր ցուց տա, թե լապտերը չի վառվում, այսինքն հոսանք չկա։


60. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՂԹԱ. Նախորդ աշխատանքից մենք գալիս ենք հետևյալ լեզվակացության։

1. Ելեկտրական հոսանքն անցնում է միացած ճանապարհով։ Նա սկսվում է անողից և զանազան գործիքների միջով անցնելուց հետո վերադառնում է կատողին։ Ելեմենտի մեջ հոսանքն անցնում է կատողից դեպի անող (նկ. 65)։

2. Հոսանքի ճանապարհին չի կարող լինել այնպիսի տեղ, վորտեղով հոսանքը չկարո-



Նկ. 64. Ելեկտրական շղթայի մասերը։



Նկ. 65. Զանազան ձեր կլիմաներ, վորոնցով հաղորդիչները միացնվում են իրար հետ։

Դանազան անցնել։ Յեթե այդպիսի ընդհատում վորես տեղ լինի, այն դանա անցնել։ Յեթե այդպիսի ընդհատում վորես տեղ լինի, այն դեպում հոսանքը չի կարելի ստանալ։ Այս հիման վրա բոլոր այն

մարմինների միավորությունը, վորոնցով հոսանքն անցնում է, կոչվում է ելեկտրական շղթա:

Ելեմենտի բևեռները միացնող հաղորդիչը (կամ հաղորդիչները) կազմում են ելեկտրական շղթայի արտաքին մասը, իսկ ինքը ելեմենտը՝ ներքին մասը: Պարզության համար ելեկտրական շղթայի արտաքին մասը կանվանենք ատափին մասը՝ ներքին շղթա:


Ամեն մի ելեկտրական շղթայի մեջ կան մի շարք հարժարություններ, վորոնք հնարավորություն են տալիս շղթան միացնել կամ կտրել: Այդպիսի հարժարություններից են կլեմմը, բանալին և կոնակը:

Ելեկտրականություն անցկացնելու համար գործ են ածում այնպիսի լարեր, վորոնք փաթաթված են լինում մետաքսով կամ պարաֆինած թելով. ինչու:

թյունն ե 275 ոմ. իսկ 25 մոմանոցինը՝ 170: Դա հասկանալի յէ.

մեծ դիմադրության դեպքում ստացվում ե թույլ հոսանք, իսկ  
թույլ հոսանքը 110 վոլտով բազմապատկելու դեպքում քիչ վատ-  
տեր են ստացվում:

Նուսավորության ցանց: Ելեկտրական կայարանում գտնվում ե  
հոսանքի աղբյուրը (դինամո-մեքենան), վորն ունենում ե վորոց  
պոտենցիալի տարբերություն կամ, ինչպես ընդունված ե ասել,  
«վոլտաժ»: Այդ վոլտաժը լինում ե սովորաբար 120 վոլտ: Ելեկ-  
տրական կայարանից սլուների վրայով բերվում են յերկու հազոր-  
բարական կայարանից սլուների վրայով բերվում են յերկու հազոր-  
բիչ, վորոնք ճանապարհին մյուղերի յեն բաժանվում ե մոցնվում  
տները:


Ելեկտրական լապտերները շղթայի մեջ մտցնում են իրար գուշականեռու: 87-րդ նկարը ցույց է տալիս լուսավորության ցանցի կազմությունը: Հաղորդիչներից մեկը հոսանքը բերում է, իսկ մյուսը



Նկ. 88. Ցերե ջրի ճյուղերից մեկը փակենք, մյուսները կշարունակեն գործել: Լապտերները միացած են կուզահեռ: Ջերե մի ճյուղի մեջ հոսանքը կտրվի, մյուս ճյուղի մեջ կշարունակվի:

տանում ե: Այդ հաղորդիչներից տարվում են այս ու այն կողմը ձյուղեր, վորոնց մեջ գտնվում են լապտերներ: Ցանցն այնպես ե կազմված, վոր լեռը լապտերներից մեկը հանգժնվում է, մյուսը շարունակում է վառվել:


Հալվող ապահովիչներ: Ցենթրալը, թե A և B հաղորդիչները միացած են 16 մոմանոց լապտերի հետ, վորի դիմադրությունն



Նկ. 89. Ելեկտրականության լուսավորության ցանց:

և 240 ոմ (Նկ. 90): Ցերե վոլտաժը 120 վոլտ է, այն դեպքում հոսանքի ուժը կլինի  $\frac{1}{2}$  ամպեր: Այժմ լենթադրենը, թե այդ հաղորդիչները մերկացած են և պատահմամբ դանակն ընկնում ենթանց վրա ու կարծ միացում առաջացնում: Թող դանակի դիմադրությու-

նը լինի 0,1 ոմ: Դանակի միջով կանցնի 1200 ամպեր հոսանք: Կառաջանա մեծ քանակությամբ ջերմություն, վորից կարող է հրդեհ առաջանալ: Բացի դրանից կփչանան այն մեքենաներն ու գործիքները, վորոնք գտնվում են շղթայի մեջ:




Նկ. 90.

Ցերեի տպահովիչի մեջ հարված կապարի փոխարեն դնում են պղնձե կամ յերկաթե լար: Թուլատրելի՞ չե դա: Ինչու հաղորդիչների ծայրերն առանց լուսական չի կարելի միացնել իրար հետ:

Կարելի՞ չե լապտերը գործ ածել ընուտատի փոխարեն:

Ելեկտրական լապտերի ծախսած եներգիան: Վորոշելով ելեկտրական լապտերի թելի ծայրերի պոտենցիալների տարբերությունը և այն հոսանքը, վոր անցնում է շղթայի միջով, մենք հեշտությամբ կազմութիւնը, վոր անցնում է շղթայի միջով, մենք հեշտությամբ կազմութիւնը:



Նկ. 91. Առանցքիչի կազմությունը

ըստ ենք հաշվել լապտերի մեջ մի վորոշ ժամանակամիջոցում ծախսը կամ եներգիան: Ցերե հոսանքի ուժը 0,5 ամպեր է, իսկ պոտենցիալների տարբերությունը 120 վոլտ, այն դեպքում հոսանքի կարողությունը կլինի 60 վատտ կամ 0,06 կիլովատտ: 10 ժամ կամ առանցքիչի կազմությունը կամ 0,06 վատտ կամ 0,06  $\times$  10 = 0,6 կիլովատտ

ժամ եներգիա: Յեթե ամեն մի կիլովատուժամն արժե 15 կոպեկ, 0,6 կիլովատուժամը կարժենա  $0,6 \times 15 = 9$  կոպեկ:

**Գոլոյան աղեղ:** Հուսավորության համար գործ ե ածվում նաև այսպես կոչված աղեղնավոր լայտերը: Նրա ելական մասը կազմում են կոքսե յերկու ձողերը, վորոնք միանում են ուժեղ ելեկտրական աղբյուրի հետ: Յերբ կոքսե ձողերը դիպցնում ենք իրար և ապա անմիջապես մի աննշան չափով իրարից կրկին հեռացնում, այն դեպքում կոքսերի ծալքերի միջև առաջ ե գալիս աղեղնաձևոց, վորը ի պատիվ Վոլտայի կոչվում և Վոլոյան աղեղ: Վոլտյան աղեղը հանդես ե գալիս վորպես լույսի ուժեղ աղբյուր:

**Աղեղի առաջանալն այսպես ե բացատրվում:** Յերբ ածուխներն իրարից հեռացնում ենք, վերջին մոմենտում նրանք իրար հետ շփվում են միայն մի քանի կետերում. այսպիսի «վատ կոնտակտը» մեծ դիմադրություն ե ցույց տալիս հոսանքին և այդ պատճառով շփման տեղերում մեծ ջերմություն




Նկ. 92. Վոլտյան աղեղ:

և առաջ գալիս: Յերբ ածուխների տաքացած ծալքերը հեռանում են իրարից, այն ժամանակ տաքանում ե և այն ոդը, վոր գտնվում ե այդ ծալքերի արանքում. բայց տաքացած գաղերն ելեկտրականության հաղորդիչներ են, այդ պատճառով հոսանքը չի դադարում և այն դեպքում, յերբ ածուխների ծալքերի մեջ միքանի միլիմետր արանք ե գոյանում: Լապտերի գործողության ժամանակ ածուխները մասամբ այրվում են, մասամբ ել գոլորշանում. բայց ավելի արագ ծախսվում ե «դրական» ածուխը, այդ պատճառով նրա ծալքում գոյանում ե «կրատեր»: Բացասական ածխի ծալքում, ընդհակառակը, գոյանում ե ցցվածք. վրա պատճառն այն ե, վոր դրական ածխից պոկված մասնիկները հավաքվում են բացասական բների վրա:

Վոլտյան աղեղի ամենատաք մասը կրատերն ե, այստեղ ստացվում ե մոտ 3900° ջերմություն, իսկ բացասական ածխի ծալքում լինում ե մոտ 2900°: Այդ բարձր աստիճանի շնորհիվ կրատերը լույսի արհեստական աղբյուրների մեջ հանդիսանում ե ամենատքն-

տեսականը: Աղեղի ամեն մի մոմի վրա ծախսվում է հազիվ մեկ վատու:

1914 թ. պրոֆ. Լումմերը վոլտյան աղեղ առաջացրեց 22 մըթ-նոլորտ ճնշում ունեցող ջրածնի մեջ և ստացավ 6900—7000° ջերմություն:



Նկ. 93. Գործիք, վորով ածխի ծալքերը կարելի յեւ մոտեցնել և հեռացնել:

ստացավ մանր աղամանդներ, վորոնք վոչնչով չեն տարբերվում բնական աղամանդներից:

#### Աջատանիք:

Ծանոթանալ ելեկտրական լուսավորության ցանցի հետ:

Անհրաժեշտ պարագաներ՝ 1) ածխի և մետաղի թելով լապտերներ, 2) եղիսոնի փամփուշտ, 3) ընդհատիչ, 4) շտեպսել, 5) ապահովիչներ (մեկը պետքական, մյուսը՝ այրված), 6) հաղորդիչ լար:

1. Դիտեցնեք լապտերը և ցույց տվեք այն տեղերը, վորտեղ շիկացող թելը միանում ե հաղորդիչ լարի ծալքերին:

2. Ծանոթացնեք փամփուշտի կտղմությանը:

3. Ցույց տվեք հոսանքի ճանապարհը փամփուշտի և լապտերի մեջ:

4. Պարզեցնեք ընդհատիչի կազմությունը և գծեցնեք նրա սխեման:

5. Պարզեցնեք շտեպսելի կազմությունը և գծեցնեք նրա սխեման:

6. Ցույց տվեք ապահովիչի մեջ հոսանքի ճանապարհը:

7. Փչացած ապահովիչի մեջ կապարի թելի փոխարեն դրեք մետաղի բարակ թել:

8. Շտեպսելի ոգնությամբ հոսանք անցկացրեք լապտերի, ապահովիչի և ընդհատիչի միջով: Դիեցնեք ձեր կազմած շղթայի սխեման, ընդունելով, վոր հոսանքն սկսվում ե շտեպսելից և այնտեղ ել վերջանում է:

9. Ցույց տվեք այն տեղերը, վորտեղ հոսանքը մտնում է բնակարան:

2. Ցույց տվեք ապահովիչը և ապա հոսանքի ճանապարհը մեկ սենյակի մեջ:

3. Գծեցեք սենյակի լուսավորության սխեման, մեկ այն դեպքի համար, իբր լապտերը վառ ե, մեկ ել՝ իբր լապտերը հանգած ե:

4. Նշանակեցեք տետրում ամեն մի լապտերի մոմերի թիվը:

5. Բնդունելով, վոր լուրաքանչյուր մոմ լույսի համար ծախսվում ե 1 վատտ (իթե լապտերը մետաղից ե) և լարվածությունն ել ալնքան ե, վորքան վոր նշանակված ե լապտերի վրա, հաշվեցեք, թե ամեն մի լապտերի մեջ ինչ հոսանք ե անցնում: Հաշվեցեք բնակարանի բոլոր լապտերների միջով անցնող հոսանքի ուժը:

6. Հետևանքը գրեցեք աղյուսակի մեջ:

Լարվածությունը լապտերների թերթի ծայրեղում	Շղթայի միջի լապտերների թիվը			Հոսանքի ուժը մեկ լապտերի մեջ			Հոսանքի ուժը մատակարարող մագիստրալի մեջ
	16 մոմական	25 մոմական	50 մոմական	16 մոմական	25 մոմական	50 մոմական	
V=	n <sub>1</sub> =	n <sub>2</sub> =	n <sub>3</sub> =	A <sub>1</sub> =W <sub>1</sub> /V	A <sub>2</sub> =W <sub>2</sub> /V	A <sub>3</sub> =W <sub>3</sub> /V	A=A <sub>1</sub> n <sub>1</sub> +A <sub>2</sub> n <sub>2</sub> +A <sub>3</sub> n <sub>3</sub>

Խնդիրներ:

25 մոմանոց ելեկտրական լապտերի դիմադրությունն ե 170 ոմ: 120 վոլտ լարվածության (պոտենցիալների) դեպքում շիկացող թերթի միջով ինչ հոսանք կանցնի:

Արդպիսի մեկ լապտերը ինչ կնուի ամիսը, իթե որական վառվի միջին հաշվով 5 ժամ և կիլովատտ-ժամն ել արժենա 15 կոտեկ:


16 մոմանոց ելեկտրական լապտերը վերցնում ե 0,3 ամպեր հոսանք 110 վոլտ լարվածության դեպքում: Մեկ մոմերն քանի վատտ ե ընկնում: 1 ժամվա ընթացքում լապտերի մեջ վորքան ջերմություն ե առաջանում:

Տան լուսավորության ցանցը բաղկացած ե 150 հատ 25 մոմանոց տնտեսական լապտերից, վորոնցից ամեն մեկի դիմադրությունը 400 ոմ ե. 40 հատ 25 մոմանոց ածխի լապտերից, վորոնցից ամեն մեկն ունի 170 ոմ դիմադրություն, և վերջապես 20 հատ 16 մոմանոց ածխի լապտերից, ամեն մեկը 275 ոմ դիմադրությամբ: Հոսանք մատակարարող մագիստրալի մեջ ինչ հոսանք ե անցնում, իթե վոլտաց 110 վոլտ ե: Վորքան կիլովատտ-ժամ եներգիա կծախսվի 4 ժամում:

Ելեկտրական շեռուցիչներ: Հոսանքի արտադրած ջերմությունը գործ ե ածքում վոչ միայն լուսավորության նպատակով, այլև կերպուր լեփելու, թել պատրաստելու համար և այլն:

Հոսանքով տաքացող կաթսան բաղկացած ե կրկնակի պատերից, վորոնց արանքում գտնվում են մեծ դիմադրություն ունեցող լարեր, վորոնք իրար հետ միացած են լինում զուգահեռաբար: Այդ լարերը սովորաբար պատրաստում են նիկելի համաձուլվածքներից

և վորպեսզի նրանք չոքսիդանան, դրսից ծածկվում են առանձին եմալով: Հոսանքն անցնելով լարերի միջով, առաջ ե բերում ջերմություն, վորից տաքանում ե կաթսավի ներսի պատը և կերակուրը: Վորովի ետևու ելեկտրական եներգիան հաշվել, ուստի դժվար չե գտնել այն եներգիան, վոր ծախսվում ե այս կամ այն կերակուրը լեփելու համար:



Նկ. 94. Ելեկտրական հանց, վորով կարելի յել հաշվել դժվարահալ նյութեր:

Ելեկտրական վառարանները կարելի յել տեղափոխել մի սենյակից մյուսը: Նրանք այն հաշվով են պատրաստված, վոր 1 խոր. մետր ողը 10 տաքացնելու համար ծախսվի մոտ 4 վատտ ելեկտրական եներգիա:

Վոլտայն աղեղի բարձր աստիճանի ջերմությունը հնարավությունը ետքական բեակցիաներ, վորոնք պահանջում են մի քանի հազար ամպեր հոսանք:

Այդ բեակցիաները մեծ չափով առաջ բերելու համար գործ են ածում այնպիսի վոլտայն աղեղներ, վորոնք պահանջում են մի քանի հազար ամպեր հոսանք:

Աշխատանք:

Վորոշել ելեկտրական կաթսավի ոգտակար գործունելության գործակեցը:

Անհրաժեշտ պարագաներ—1. Հոսանքի աղբուուր (կաթսանի հոսանք), 2. Ելեկտրական կաթսա, 3. ածպերմետը, 4. վոլտմետը, 5. Ընդհատիչ, 6. շտեպսել, 7. ժամացուց, 8. կշեռք, 9. պատկե բաժակ, 10. ջերմաչափ:

1. Կշեռք գատարկ բաժակը;
2. Կշեռք բաժակը ջրով;
3. Նշանակել ջրի կշեռք (որինակ, M=300 գրամ):
4. Զուրն ածել կաթսավի մեջ և ջերմաչափով վորոշել նրա բարեխառնությունը:

5. Կաթսան շտեպսելի ոգնությամբ միացնել լուսավորության ցանցի հետ, մատնելով շղթայի մեջ նաև ածպերմետը և բանալին: Վոլտմետը գործունելով վորոշել լարվածությունը (վոլտաժը):

6. Գծել ամբողջ շղթալի սխեման և սլաքներով ցուց տալ հոսանքի ուղղությունը:

7. Ըսդհատիչի ողնությամբ հոսանքն անցկացնել և նշանակել հոսանքն սկսվելու մոմենտը:

8. Հոսանքն այնքան ժամանակ անցկացնել, մինչև վոր չեռումն սկսվի:

9. Հոսանքն ընդհատել և նշանակել այդ մոմենտը:

10. Հետեանքը գրել հետեւալ աղյուսակի մեջ:

Հոսանքի ուժը	Լուծվածությունը	Հոսանքի անցնելու թիվը	Զառուցան ջերմություն	Հարուցումը	Հարուցումը նորմանը	Ջրի ձեռք բերած ջերմությունը	Աղյուսակը՝ ջերմությունը
A=	V=	t=	Q=0,24.A.V.t	M=	Θ°	Q <sub>1</sub> =M(100-Θ)	K=Q <sub>1</sub> /Q

11. Հաշվել կաթսալի ոգտակար գործողության գործակիցը:  
Խնդիրներ:

Կալորաչափի մեջ ածած և 120-ի 500 գր ջուր: Այդ ջրի մեջ դըրված և մի զապանակ, վորի դիմադրությունն և 30 ոմ: Հոսանքի լարվածությունն և 120 վոլտ: 5 րոպեի ընթացքում ջուրը քանի աստիճան կտաքանա:

Կալորաչափի մեջ ածած և 450 գր սպիրտ, վորի մեջ գտնվում և 5 ոմ դիմադրություն ունեցող հաղորդիչ, 2 տապեր հոսանքն անցնելով այդ հաղորդչի միջոցով, 70 վայրկանում սպիրտը տաքացրեց 6°, Դանել սպիրտի տեսակարար ջերմունակությունը:

#### ԵԼԵԿ. ՀՈՍԱՆՔԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԵԼԵԿՏՐՈԼԻՉ:

18. ԱՌԱՋԻՆ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴԻ ԿԱՐԳԻ ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐ: Յերբ ելեկտրական հոսանքն անցնում է պինդ հաղորդիչների, որինակ, մետաղների կամ ածխի միջով, մենք տեսնում ենք, վոր այդ հաղորդիչները տաքանում են, նրանց ցուրջն առաջ և գալիս մագնիսական դաշտ, բայց այդ ժամանակ հաղորդիչները քիմիական փոխարկումների չեն յենթարկվում: Պղնձե կամ յերկաթե լարը ելեկտրական հոսանքից կարող է սաստիկ շիկանալ, բայց հոսանքի ընդհատումից հետո մենք նրա մեջ վոչ մի փոփոխություն չենք նկատում:

Այս հաղորդիչները, վորոնք ելեկտրական հոսանքից քիմիական փոխարկումների չեն յենթարկվում, կոչվում են առաջին կարգի հաղորդիչներ:

Բոլորովին ուրիշ յերկությ ենք տեսնում միքանի լուծությների մեջ: Փորձով տեսանք, վոր ելեկտրական հոսանքից պղնձի արջաս-


պի լուծուկթը տարրալուծվում է, կատողի վրա հավաքվում է պղինձ, իսկ անողի վրա՝ թթվածին: Յեթե ելեկտրական հոսանքն անցկացնենք աղաթթվի լուծուկթի միջով, կտեսնենք, վոր կատողի վրա անմիջապես սկսվում է արտադրվել ջրածին: Հոսանքից աղաթթուն (HCl) վեր և լուծվում ջրածնի (H) և քլորի (C):

Այն հաղորդիչները, վորոնք հոսանքից տարրալուծվում են, կոչվում են յերկրորդ կարգի հաղորդիչներ: Կամ ելեկտրոլիտներ, իսկ ինքը յերկությ՝ ելեկտրոլիտը:

Ելեկտրոլիտներ են աղերի, թթուների և ալկալիների լուծուկթները, ինչպես և հալված աղերն ու ալկալիները:

Այն անոթը, վորի մեջ կատարվում է ելեկտրոլիտի յերկութը, կոչվում է վոլտամետր կամ ելեկտրոլիտական ավազան:


79. ԵԼԵԿՏՐՈԼԻԴՅ ՅԵՐԵՎՈՒՅԹԸ: Վերցնենք մի բաժակ և նրա մեջ ածենք աղաթթվի լուծուկթ: Այդ լուծուկթի մեջ ընկածենք կոքսի յերկու ձող, բայց այնպես, վոր իրար չդիպչեն: Կոքսերից մեկը միացնենք ելեմենտի դրական, իսկ մյուսը՝ բացասական բնեոփ հետ: Այն կոքսը, վոր միացած է բրական բնեոփ հետ, կինք անոր, իսկ այն, վոր միացած է բացասական բնեոփ հետ՝ կատող: Աղաթթվի յուրաքանչյուր մոլեկուլ բաժանվում է յերկու մասի, վորոնք կոչվում են յոներ:



Ջրածին յոնի վրա գտնվում է դրական ելեկտրականություն, իսկ քլոր յոնի վրա՝ բացասական ելեկտրականություն. այդ պատճեառով ջրածնի յոները կշարժվեն դեպի կատող, իսկ քլորի յոները՝ դեպի անող: Հասնելով կոքսերին յոներն իրենց լիցքերը տալիս են այդ կոքսերին, իսկ իրենք դառնում են չեղոք ատոմներ և ավագանից արտադրվում գազալին վիճակում:


Բոլոր այն յոները, վորոնք շարժվում են դեպի կատող, կոչվում են կայսյոներ, իսկ այն յոները, վորոնք շարժվում են դեպի անող՝ անյոներ: Ջրածնը կինք կայսյոն, իսկ քլորը՝ անյոն:

80. ԾԾՄԲԱԹԹՎԻ ԼՈՒՅՈՒՅԹԻ ԵԼԵԿՏՐՈԼԻԴՅԸ: Ծծմբաթթվի մեջ ելեկտրական յերկությը փոքր ինչ բարդ է կատարվում: Այստեղ կատողի վրա հավաքվում են ջրածնի յոները, իսկ անողի վրա՝ թթվի մնացորդի՝ այսինքն  $\text{SO}_4^{2-}$  յոները:



Ջրածնի յոները, կատողին տալով իրենց լիցքերը, դառնում են չեղոք ջրածնի և ավագանից հետանում, իսկ  $\text{SO}_4^{2-}$  խումբը անողին տալով իր լիցքը դառնում է չեղոք  $\text{SO}_4^{2-}$  խումբը, վորն անմիջապես

բաժանվում ե յերկու մասի՝  $SO_3$  և  $O$ : Թթվածինը հեռանում ե, իսկ  $SO_3$ -ը միանում ե ջրի հետ և տալիս ծծմբաթթու—




Ալտեղից յերկում ե, վոր ծծմբաթթվի քանակը ավազանի մեջ չի փոխվում: Մեկ մոլեկուլ տարրալուծվեց, բայց մի մոլեկուլ կրկին գոյացավ: Պակասեց ջրի քանակը:

Ծծմբաթթվի ջրային լուծույթից ելեկտրոլիզի ժամանակ արտադրվում ե 2 ատոմ ջրածին և մեկ ատոմ թթվածին, այսինքն

ծծմբաթթվի ելեկտրոլիզի ժամանակ ստացվում են ջրածին և թթվածին այն հարաբերությամբ, ինչ հարաբերությամբ նրանք գտնվում են ջրի մեջ: Այդ պատճառով ծծմբաթթվի ջրային լուծույթի ելեկտրոլիզը յերեմի սխալմամբ անվանում են «ջրի ելեկտրոլիզ»:

81. ԱԿԱՌՈՒՄՈՒԼՅԱՏՈՐ: Վերցնենք կապարե յերկու թիթեղ և ընկղմենք ծծմբաթթվի ջրային լուծույթի մեջ (նկ. 96): Այս յեղանակով, իհարկե, ելեմենտ չենք ստանա, վորովհետև յերկու թիթեղներն ել նույն նյութից են և ծծմբաթթուն ել կապարի վրա չի ազդում:

Կապարի թիթեղների ծայրերը միացնենք ելեկտրական մարտկոցի հետ և ծծմբաթթվի միջով անցկացնենք հոսանք: Ծծմբաթթուն կտարրալուծվի: Կատոդի վրա կարտադրվի ջրածին, իսկ անոդի վրա՝ թթվածին: Բայց թթվածինը կմիանա կապարի հետ և կտա կապար ոքսիդ ( $PbO$ ): Ելեկտրոլիզը շարունակելու դեպքում դարձալ կստացվի ջրածին և թթվածին: Կապար ոքսիդը կմիացնի մի ատոմ թթվածին ևս և կդառնա կտապար պերոսիդ ( $PbO_2$ ) (նկ. 97): Այսպիսով կապարի թիթեղներից մեկը կմաս անփոփոխ, իսկ մյուսը կծածկվի կապար պերոքսիդով:




Նկ. 96. Կապարի շետերն ընկղմած կապարի ծծմբաթթվի մեջ: B—մարտկոց և: G—գարվանոմետր:

Հեռացնենք մարտկոցը և ապա կապարի թիթեղների ծայրերը մեջ: Ճիշտապահ ծծմբաթթվի հետ, միացնենք գալվանոմետրի հետ, մենք կտեսնենք, վոր շղթայի միջով անցնում ե հակառակ ուղղու-

թյամբ հոսանք: Ստացված լուրատեսակ ելեմենտը կոչվում ե ակկումուլյատոր:


Ակկումուլյատորի մեջ կապար պերոքսիդը հանդիսանում ե անող, իսկ մաքուր կապարը՝ կատոդ (նկ. 98):

Յերբ ակկումուլյատորն սկսում ե գործել, այն դեպքում նրա մեջ դարձալ ստացվում են ջրածին և թթվածին: Ջրածինն արտադրվում ե անողի վրա ( $PbO_2$ ) և միանալով կապար պերոքսիդի մեջ ատոմ թթվածնի հետ, տալիս ե կապար ոքսիդ և ջուր:




Թթվածինը հավաքվում ե կատոդի վրա և միանալով մաքուր կապարի հետ, տալիս ե կապար ոքսիդ: Յերբ ակկումուլյատորի յերկու թիթեղներն ել դառնում են կապար ոքսիդ, այն ժամանակ ակ-

կումուլյատորը դադարում ե գործել: ասում են՝ ակկումուլյատորը պարզվել ե (նկ. 99):



Նկ. 95. Ակկումուլյատոր: Վերցնենք կապարե յերկու թիթեղ և ընկղմենք ծծմբաթթվի ջրային լուծույթի մեջ (նկ. 96): Այս յեղանակով, իհարկե, ելեմենտ չենք ստանա, վորովհետև յերկու թիթեղներն ել նույն նյութից են և ծծմբաթթուն ել կապարի վրա չի ազդում:



Նկ. 98. Ակկումուլյատորը պատճենական ակկումուլյատոր:

Նկ. 99. Բոլորովին պարզած ակկումուլյատորը:

Ակկումուլյատորները մեծ գործադրություն ունեն: Նրանք գործ են ածվում տեխնիկայում, բարդիկայաններում և այլն:

Պարզենք ակկումուլյատորի գերը ելեկտրական կայաններում:


Կենտրոնական ելեկտրական կայարանը տալիս ե հոսանք քաղաքի լուսավորության համար: Յերեկները, յերեկական եներգիան քիչ ե ծախսվում, այդ եներգիայի մի մասն անց են կացնում ակկումուլյատորների միջով և լարում նրանց, իսկ գիշերները, յերեներգիայի ծախսը մեծ ե, ակկումուլյատորներն ողնում են դինամո-մեքենային: Այսպիսով ակկումուլյատորը մի գործիք ե, վորը ամբարում ե իր մեջ ելեկտրական եներգիա և ապա կարիքի դեպքում այդ եներգիան կրկին արտադրում ե, բայց ի հարկե ավելի պակաս չափով (կլանված եներգիայի մոտ 75%):

82. ԳԱԼՎԱՆՈՍԵԳԻԱ (Գալվանազոնում): Ելեկտրական հոսանքի ոգնությամբ առարկաները մետաղով ծածկելը կոչվում ե գալվանիզացիա, որինակ՝ արծաթը վուկեցրելը կամ վուկեզոնումը, պղինձը սիկելով ծածկելը և այլն: Սովորաբար այն մետաղե իրերը,

## ԵԼԵԿՏՐ. ՀՈՍԱԿՆԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

վորոնք ողում հեշտությամբ ոքսիդանում են, ծածկում են դժվարությամբ ոքսիդացող մետաղով, որինակ՝ յերկաթը ծածկում են ցինկով (ցինկաղոծ յերկաթ), պղինձը կամ յերկաթը՝ նիկելով և աղնոցին (ցինկաղոծ յերկաթ), պղինձը կամ յերկաթը՝ նիկելով և աղնոցին:

Յենթադրենք, թե մետաղե իրը (դգալը, բաժակակալը) պետք է արծաթաջրել: Ելեկտրոլիտական ավազանի մեջ կածենք արծաթ նիտրատի լուծուլիթ, անողից կախենք մաքուր արծաթի կտոր, իսկ կատողից արծաթաջրվող իրը: Յեթե ավազանի միջով անցկացնենք



Նկ. 100. Գողալի գոսկեղոծելը:

հոսանք, այն դեպքում լուծուլիթի արծաթ յոները կշարժվեն դեպի կատոդ և կնստեն դգալի վրա, իսկ մյուս յոնը ( $\text{NO}_3^-$ ) կշարժվի դեպի անոդ և միանալով արծաթի հետ, կառաջացնի արծաթ նիտրատ. սա նորից կբաժանվի յոների, արծաթ յոնը դարձալ կնստի կատոդի վրա, իսկ  $\text{NO}_3^-$ -ը՝ անողի վրա, կրկին կստացվի արծաթ նիտրատ և աղնոց. Այսպիսով մետաղե իրը կծածկվի արծաթի բարակ շերտով, իսկ անողից կախված արծաթի շերտը կմաշվի:

Ուրեմն՝ այն իրը, զոր պետք է գալվանազոծել, կախվում է կատոդից, անողից կախում են այն մետաղը, զորով իրը պետք է ծածկվի, իսկ ելեկտրավազանի մեջ պետք է լինի այդ մետաղի աղը:

83. ԵԼԵԿՏՐԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ. Ելեկտրոլիզի ոգնությամբ մետալուրգիալի մեջ ստացվում են մաքուր մետաղներ: Հիշենք պղնձի և ալյումինի ստանալը:

Պղնձանքը հնոցներում նախ «ալրում են», հալում և ստանում մի նյութ, զորի մեջ գտնվում է մոտ  $60\%$  պղինձ: Այս նյութը տեղափոխում են ելեկտրական գործարան, զորտեղ ելեկտրոլիզի ոգնությամբ պղինձը մաքրում են: Այդ նպատակով ելեկտրական մեծ ավազանը լցնում են պղնձի արջասպով, անմաքուր պղինձը դարձնում են անոդ, իսկ կատոդից կախում են պղնձի բարակ թերթ: Ելեկտրոլիզի ժամանակ արջասպի պղինձ յոնը նստում է կատոդի վրա, իսկ  $\text{SO}_4^{2-}$  յոնը՝ անողի վրա և միանում ախտեղի պղնձի հետ ու տալիս  $\text{CuSO}_4$ . Վերջինս վեր և լուծվում յոների, պղինձ յոնը նստում է կատոդի վրա, իսկ  $\text{SO}_4^{2-}$ -ը՝ անողի վրա և դարձալ ստացվում է  $\text{CuSO}_4$ : Այսպիսով պղինձը կարծես անողից տեղափոխվում է դեպի կատոդ և կուտակվում պղնձե բարակ թերթիկի վրա: Պղնձի այդ շերտը հանում են և տեղը դնում նոր թերթ և այլն:

84. ԲՆԱԿԱՆ ՑԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԵՂՆԻԳ ԴԵՐ ՄՈՄ 2000 տարի առաջ հայտնի յերկաթահանքի մի տեսակը ընդունակություն ունի ձգելու յերկաթի և պողպատի կտորներ: Յերկաթահանքի այդ ձգողական ուժը կոչվում է մագնիսական ուժ կամ մագնիսականություն, իսկ հանքի առանձին կտորները՝ բնական մագնիսի պաքար»: Բնական մագնիսը յերկաթի և թթվածնի միացություն ե ( $\text{Fe}_3\text{O}_4$ ) և բավական տարածված ե յերկրագնդի վրա: Խ. Միության մեջ (Ուրալյան լեռնաշղթայում) հսկայական լեռներ այդ հանքից են բաղկացած: Նկատենք, զոր  $\text{Fe}_3\text{O}_4$  բաղադրություն ունեցող յերկաթահանքը միշտ մագնիսական ուժ չի ունենում. նայերեմն կարող է մագնիսական ուժը կորցնել կամ յերեմն կրկին «մագնիսանալ»:


Յեթե բնական մագնիսը քսենք պողպատին կամ յերկաթին, այն դեպքում սրանք մագնիսներ կդառնան, բայց յերկաթը շուտով համարյա բոլորովին կորցնում է իր մագնիսականությունը, իսկ պողպատը պահում է:

Մագնիսացած պողպատե ձողերը, ոլացները, պայտերը և այլն արհեստական մագնիսներ են:

Մագնիսական յերեսությունն ուսումնասիրելու համար մենք այսուհետեւ գործ կածենք արհեստական մագնիս. նա շատ ավելի հարմար է, քան թե բնականը:

Յեթե մագնիսը մոտեցնեք զանազան նյութերից կազմված կտորների, դուք կտեսնեք, զոր մագնիսի ազդեցությանը յենթարկութերը կամածուլվածքը, յերկաթի միջանի միացությունները և այլն), և մեկ ել կոբալտն ու նիկելը, վորոնք իրենց ֆիզիկական և քիմիական հատկություններով շատ նման են յերկաթին:

<sup>1</sup> Մագնիս անունն առաջացել է Փոքր Ասիայի Մագնեզիա (այժմ Խնեքաղաք) քաղաքից, զորի շրջակալիքում կին հուկերը մշակում ելին այդ հանքը:




Նկ. 102. Մագնիսը կախված է հորիզոնական գրությամբ:


85. ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԲԵՎԵՌՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱԴԱՐՁ ԱԶԴԵ-  
ՑՈՒԹՅՈՒՆԸ: Մագնիսի զանազան կետերին դիպցըք մի յերկաթի  
կտոր կամ մագնիսի վրա յերկաթե խարտվածք ածեցեք, դուք  
տեսնում եք, վոր մագնիսական ուժը ծալը բռնում բավական ուժեղ  
է գործում, իսկ միջին մասում յերեան չի գալիս (նկ. 101): Մագ-  
նիսի ծալը բռնում, վորտեղ ձգողական ուժն ավելի մեծ է, քան մյուս  
տեղերում, կոչվում են բեվեռներ, իսկ այն ու-  
ղիղ դիմք, վոր բռնում միացնում է իրար  
հետ, կոչվում է մագնիսի առանցք:

Յեթե մագնիսը թելով կախեք այնպես, վոր  
նա ընդունի մոտավորապես հորիզոնական դրու-  
թյուն, կամ մագնիսական սլաքը դնեք սրածայր  
հենարանի վրա, ինչպես այդ արված է կողմնա-  
ցուցի մեջ, այն դեպքում դուք կտեսնեք, վոր  
նա մի քանի տատանումներ կատարելուց հետո  
ընդունում է մի այնպիսի դիմք, վոր մի բռնուը  
նայում է (մոտավորապես) դեպի հյուսիս, իսկ մյուսը՝ դեպի  
հարավ: Մագնիսի այս հատկության վրա յե հիմնված կողմնա-  
ցուցի պատրաստելը և գործածությունը: Այն բռնուը, վոր նայում  
է դեպի հյուսիս, կոչվում է հյուսիսային բեվեռ և նշանակվում է N  
տառով (գերմաներեն Nord—հյուսիս բառից), իսկ հակառակ բռն-  
ուը, վոր դարձած է դեպի հարավ, կոչվում է հարավային բեվեռ և  
նշանակվում է S տառով (գերմաներեն Süd—հարավ բառից):  
Աչխատանք:

Հետազոտել մագնիսական բեվեռների փոխադարձ ազդեցույթունը:  
Մագնիսական ձողը կախեցեք, վորպեսզի նա ընդունի մոտավո-



Նկ. 104. Չինական կողմնացույց:  
Հյուսիս ցույց ավող նշանն է  
մուկը, հարավ ձին, արեւելք՝ նա-  
պատակը, արեմսուաք՝ հավը:




Նկ. 105. Շովային կողմնացույց:  
Կարտոնի շրջանը բաժանված է  
մասերի: Ունի 8 մագնիս, վորոնք  
ամրացած են կարտոնին:

բապես հորիզոնական դրություն: Յեթե մագնիսի բռնուները տարբեր  
գույններով ներկված չեն, այն դեպքում հյուսիսային բռնուի մոտ  
թղթի կտոր կապեցեք:

2. Վերցըք մի ուրիշ մագնիս և նրա հյուսիսային բռնուը մո-  
տեցըք կախված մագնիսի հյուսիսային բռնուն: Ինչ եք նկատում:  
3. Զեր ձեռքում գտնվող մագնիսի հարավային բռնուը մոտեցըք  
կախված մագնիսի հարավային բռնուն: Ինչ եք նկատում:  
Փորձերը ցույց են տալիս, վոր նման բեվեռներն իրար վանում  
են, իսկ տարբերները՝ ձգուն են.

Յենթագրենք, թե դուք մի մագնիս ունեք, վորի բռնուները  
հայտնի չեն: Կողմնացույցի ոգնությամբ ինչպես կարելի յե վորոշել,  
թե ձեր մագնիսի վնար բռնուն ե հյուսիսային և վնար հարավային:



Նկ. 106. Նման բռնուները վանում են, իսկ տարբերները ձգում են իրար:

Վերցըք մի լայն ամանով ջուր և ջրի մեջ գցեցք մի խցան:  
Լողացող խցանի վրա դրեք մի մագնիսական ձողիկ կամ սլաք. Ինչ եք  
նկատում: Կարելի յե այդ լողացող մագնիսն ընդունել  
վորպես կողմնացույց:

86. ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԻՆԴՈՒԿՑԻԱ (Ազդեցություն):  
Մագնիսի բռնուներից վորեն մեկին մոտեցըք մի յեր-  
կաթի կտոր, որինակ, բանալի. բանալին կկպչի մագ-  
նիսին: Բանալու ազատ ծալըին մոտեցըք մի մեխ, բանալին կձգի նրան: Յեթե մեխի ազատ ծալըին մո-  
տեցնեք մի պտուտակ, դուք կտեսնեք, վոր մեխն իր  
հերթին ձգում է պտուտակը: Այս յեղանակով կարելի  
յե ստանալ յերկաթի իրերի մի շարան, բայց հենց վոր  
մագնիսը հեռացնում եք, դուք տեսնում եք, վոր այդ  
իրերը կորցնում են իրենց մագնիսականությունը և  
պոկլում իրարից:


Ուրեմն փորձերը ցույց են տալիս, վոր յերկարը  
մագնիսի մոտ գտնվելիս դառնում է մագնիս: Այս յե-  
րեսությը կոչվում է մագնիսական ինդուկցիա կամ  
ազդեցություն: Յեթե բանալին մոտեցնում ենք մագ-

նիսի հյուսիսային բեվեռին, այն դեպքում բանալու այն ծալը,  
վոր մոտ է հյուսիսային բեվեռին, ընդունում է հարավային բե-  
վեռի հատկություն, իսկ հեռալորը նման, այսինքն՝ հյուսիսային:

Մագնիսի բևեռը մոտեցրեք միքանի մանր մեխերի: Մեխերն անմիջապես կկուզեն մագնիսին, բայց նրանց ազատ ծայրերը կհեռանան իրարից. ինչու:

87. ՄԱԳՆԻՍԱՑՈՒՄ. Փափուկ լերկաթը մագնիսից հեռացնելուց հետո կորցնում է իր մագնիսականությունը, իսկ պողպատն, ընդհակառակը, մագնիսից հեռանալուց հետո լել ավել կամ պակաս չափերով պահպանում է այն բևեռները, վոր նա ուներ մագնիսի մոտ գտնվելու ժամանակ: Այդ պատճառով արհեստական մագնիսները պատրաստում են վոչ թե փափուկ լերկաթից, այլ պողպատից:

Վորևել պողպատի ձողիկ կամ շերտ ալսպես են մագնիսացնում (նկ. 108): Այդ ձողիկը դնում են սեղանին և ապա վերցնում են լերկու մագնիս ու նրանց հակառակ բևեռներով մի քանի անգամ




Նկ. 108. Արհեստական մագնիս պատրաստելը

ձողիկը շիռում, ոկտելով ձողիկի մեջտեղից և տանելով դեպի հակառակ ծայրերը, ինչպես այդ ցուցի ե տալիս նկարը: Հասկանալի յե, ի հարկե, վոր այդ ձողիկի ծայրերում ստացվող բևեռները պետք ե մագնիսի շիռող բևեռների հակառակը լինեն:


Մեծ մագնիսներ պատրաստելու համար դիմում են ելեկտրական հոսանքի ոգնության: Այդ մասին կիսունք հետո:

88. ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏ: Մագնիսի շուրջը գտնվող տարածությունը, վորտեղ գործում են մագնիսական ուժերը, կոչվում ե մագնիսական դաշտ:

Դաշտի ամեն մի կետում




Նկ. 109. Ուղիղ մագնիսի մագնիսական սեկտորը:



Նկ. 110.

գործում ե մագնիսական ուժ: Վորպեսզի վորոշենք այն ուղղությունը, վորով այդ ուժն աղղում ե դաշտի վորևել կետում, մենք այդ կետում կտեղափորենք մի փոքրիկ մագնիսական սլաք: մագ-

նիսական ուժի ազդեցությունից սլաքն այնպիսի դիրք կլնդունի, վոր նրա առանցքը լինի ուժի ազդեցության ուղղությամբ:




Նկ. 111. Փոքրիկ մագնիսները դասավորվում են ուժագծերի ուղղությամբ:  
(C—հուսւխ, 10—հարավ):

վածքը դասավորվում է կոր գծերի ձևով, այդ գծերը սկսվելով մագնիսի մի բևեռից անցնում են դեպի միուսը և ցուցի են տալիս, թե մագնիսական ուժերն ինչ ուղղությամբ են գործում դաշտի տարբեր կետերում: Այդ գծերը կոչվում են մագնիսական ուժագծեր, իսկ խարտվածքի միջոցով ստացված պատկերը՝ մագնիսական սպեկտր:


Մագնիսական սպեկտրի առաջանալն ալսպես ե բացատրվում: Յենթագրենք, թե NS-ը մագնիսն ե, իսկ աԵ-ն լերկաթի խարտվածքի հատիկներից

մեկն ե: Մագնիսական ինդուկցիայի շնորհիվ այդ հատիկի մոտիկ ա ծայրում կստացվի հարավային, իսկ ե ծայրում հյուսիսային բևեռ: Յերբ կարառը ցնցելիս խարտվածքի հատիկները վեր են ցատկում, այն դեպքում նրանք հակառակ բևեռներով միանում են իրար հետ և կազմում գծերի ձևով շարաններ:



Դժվար չե ստանալ մագնիսական սպեկտրը և այն դաշտի արանքում յեղած սպեկտրը:

համար, վոր գտնվում ե նման կամ տարբեր բևեռների միջև: Միայն այս դեպքում պետք ե ու-




Նման մագնիսական բևեռների արանքում յեղած սպեկտրը:

Նենալ յերկու տարբեր մագնիսական ձողեր: Դիտելով յերկու մագնիսների բևեռների արանքում յեղած սպեկտրը, մենք տեսնում ենք, վոր տարբեր բևեռների դեպքում ուժագծերը կարծես դուրս են դալիս մի բևեռից և մտնում մյուս բևեռի մեջ (նկ. 112). Նման բևեռների դեպքում ուժագծերը նմանվում են յերկու այնպիսի հոսանքների, վորոնք հոսում են իրար հանդեպ և, դեմ առնելով իրար, ծովում են հակառակ կողմը (նկ. 113).

Ըստունվում ե, վոր մագնիսական ուժագծերը դուրս են զայխ մագնիսի հյուսիսային բեվեռից յեվ մենում հարավային բեվեռի մեջ: Բացի այդ՝ ընդունում են, վոր

1. Ամեն մի ուժագիծ աշխատում է կարեանալ, ինչպես ձրգված ուետինե թելը: Դրանով ե բացատրվում այն, վոր յերկու տարբեր բևեռներ ձգտում են մոտենալ իրար:

2. Յերկու հարեվան ուժագիծ աշխատում են վանել իրար:



Նկ. 114. Մագնիսական սլաքը ծովում և Ամպերի կանոնի համաձայն:

Յերկու նման բևեռների իրար վանելու պատճառն այն ե, վոր ուժագծերը փոխադարձաբար վանում, ձնշում են իրար:

89. ԵՐԵՇԵՆԻ ՅԵՐԵՎԱՆԻ ՅԹԸ: Ա.ՄՊԵՐԻ ԿԱՆՈՆԸ:  
Մենք տեսանք, վոր ելեկտրական հոսանքն ազդում է մագնիսական սլաքի վրա: Այս յերեւլիքն առաջին անգամ նկատեց գանիստի Փիդիկոս Երշտեդը, այդ պատճառով կոչվում է Երևեդի յերեվույթ:

Դրեք մագնիսական սլաքը սեղանին (այս փորձի համար կարելի յե գործածել նաև կողմացուցը) (նկ. 114): Հոսանքատար լարը պահեցեք սլաքի աջ կամ ձախ կողմը, սլաքից բարձր կամ ցածր և այլն: Ամեն անգամ դիտելով սլաքի խոտորումը, կարելի յե դուրս բերել հետեւալ նշանագոր կանոնը.

Յերեւ աջ ձեռքի մատներն ուղղենք հոսանքի ուղղությամբ, իսկ ձեռքի ափը դարձնենք դեպի վարդը, այն դեպքում սլաքի հյուսիսային բեվեռը կծովի բութ մատի կողմը (Ա.ՄՊԵՐԻ ԿԱՆՈՆԸ):

Դիտելով մագնիսական սլաքի հյուսիս բևեռի ծռվելը և գործածելով Ամպերի կանոնը, կարելի յե ցուց տալ, թե ինչ ուղղություն ունի հոսանքը լարի մեջ:

90. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՊՈՒՄ Ե ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՍԼԱՔԻ ՎՐԱ, ԱՊԱ ՎԵՄՊ Ե ՅԵՆԹԱՊԵԼ, ՎՈՐ ԱՅԴ ՀՈՍԱՆՔՆ ՈՒՆԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱշտ: ՀՈՍԱՆՔԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱշտի կազմության մասին գաղափար կազմելու համար, կատարենք հետևյալ:




Երշտեդ (1775—1851), գանիստի Փիդիկոս. Փորձը:

Կառատիվի վրա հորիզոնական դրուելամբ ամրացնենք մի թերթ ստվարաթուղթ (կարտոն) և ապա նրա միջով ուղղահայաց դրությամբ անցկացնենք բավական ուժեղ հոսանք (20—26 Ա): Յեթե մատով կարտոնին թեթև հարվածներ տանք, կտեսնենք, վոր մագնիսական ուժագծերը հաղորդի ըուրչը դասավորվում են համակենտրոն շրջանագծերի ձևով:

Յեթե հաղորդչի մոտ պահնք մի դյուրաշարժ մագնիսական սլաք և հետո հոսանքն անցկացնենք վերևից դեպի ներքև, կտեսնենք, վոր սլաքն ընդունում է մի փորձ դիրք, իսկ յեթե հոսանքն անցկացնենք ներքեւից դեպի վերք, այն դեպքում սլաքը

կընդունի ուրիշ դիրք: Այսաեղից յեզրակացնում ենք, կշարժվի և կընդունի ուրիշ դիրք: Ա.ՄՊԵՐԻ կազմությունի մեջ վոր մագնիսական ուժագծերի դասավորության անցկացնենք ներքեւից դեպի բյունը ուղղագիծ հոսանքի շուրջը:



սին ցուցի ե տալիս 116-րդ նկարը։ Ամեն մի սլաքի հյուսիսավին բեկորից դուրս են գալիս ուժի գծերը և մտնում մյուս մագնիսի հարավային բևեռի մեջ։ Կարծես մագնիսական ուժի գծերը բոլոր սլաքների միջով շրջան են կատարում։ Յեթե հոսանքը հակառակ ուղղությամբ անցնի, բոլոր սլաքներն իրենց ուղղությունը կփխեն և կընդունեն հակառակ դիրքը։ Այժմ մագնիսական ուժի գծերը շրջան են կատարում հակառակ ուղղությամբ։




Նկ. 116. Մագնիսական սլաքները հոսանքի շուրջը վորոշ դասավորություն են ընդունում։

Տակենք հոսանքի ուղղությամբ, այն դեպքում խցանահանի զլիսիկի շարժման ուղղությունը ցույց կտա մագնիսի ուժագծերի ուղղությունը։

91. ՇՐՋԱՆԱՑԻ ՀՈՍԱՆՔԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԸ։ Կարտոնը շտատիվի վրա հորիզոնական դրությամբ ամրացնենք և նրա միջով անցկացնենք մի շրջանաձև հաղորդիչ։ Կարտոնի վրա ցանենք յերկաթե փոշի և ապա հաղորդչի միջով անցկացնենք ուժեղ հոսանք, կտեսնենք, վոր փոշին դասավորվում են այնպես, ինչպես 119-րդ նկարն է ցուց տալիս։


Յեթե խցանահանի կանոնը դորձադրենք կարտոնի միջով բարձրացող և իջնող հոսանքների համար, կտեսնենք,



Նկ. 117. Խցանահանի կանոնը։ Յեթե վոր մագնիսական ուժագծերը մտնում խցանահանը պատռակենք հոսանքի են ողակի մի կողմից և մյուս կողմից ուղղությամբ, այն դեպքում ձեռքի դուրս են գալիս (նկ. 119)։ Պտույտը պառայք ցույց կտա մագնիսական կատարող հոսանքը նմանվում է մի տափակ մագնիսի, վորի մի յերեսն ունի հյուսիսային, իսկ մյուս յերեսը՝ հարավային բևեռի հատկություն։ Իմանալու համար, թե ողակի վոր յերեսը կլինի հյուսիսային և վորը հարավային բևեռ, պետք ե նայել ողակի յերեսին։ Յեթե հոսանքը պատռված է կատարում այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ ժամացուցի սլաքն է շարժվում, այն դեպքում ողակի այդ յերեսը կունենա հարավային բևեռի հատկություն։ Մագնիսական ուժի գծերն այդ կողմից ներս


կմտնեն. իսկ յեթե ողակի յերեսին նայելիս յերեաց, վոր հոսանքը պատռված է կատարում ժամացուցի սլաքին հակառակ, այն դեպքում այդ յերեսը կլինի հյուսիսային բևեռ։

Այժմ այնպես անենք, վոր հոսանքը կատարի մի քանի պառույտավորակ ուղարկած հաղորդիչ կամ, ինչպես Դրա համար պատրաստենք մի պարուրածե հաղորդիչ կամ,




Նկ. 118. Մագնիսական ուժագծերի դասավորությունը ողակային հոսանքի շուրջը։

ընդունված ե ասել, սոլենոյդի և նրա միջով անցկացնենք ուժեղ հոսանք։ Յերկաթի փոշու ողնությամբ կարելի յե ցուց տալ, վոր պատռված սոլենոյդին ունի այնպիսի մագնիսական դաշտ, ինչպիսին ստացված պում ե սոլենոյդի յերկարությունն ունեցող մագնիսական ձողից։ Վում ե սոլենոյդի յերկարությունն ունեցող մագնիսական ձողից։ Վում ե սոլենոյդի մեջ այդ պառուտները պատռված, ինչպես տեսանք, ունի տափակ մագնիսի («մագնիսական թերթի») հատկություն։ Սոլենոյդի մեջ այդ պառուտները պատռված են ապա հաղորդչի մեջ այդ պատռված են։



Նկ. 119. Ողակային հոսանքի մագնիսական սպեկտրը։




Նկ. 120. Մագնիսական ուժագծերի դասավորությունը հոսանքամար կոճի շուրջը։

րի գաշտերը գումարվում են և դառնում յերկար մագնիսի դաշտ։ Սոլենոյդի մագնիսական բեկոր վորոշում են այնպես, ինչպես մեկ պատռվածինը։ Յեթե նայենք սոլենոյդի մի ճակատին և այդ ժամանակ հոսանքի ուղղությունը համապատասխան լինի ժամացուցի սլաքի շարժմանը, այն դեպքում այդ ժայըը կլինի հարավային բևեռում պատռված ողակի մագնիսական

92. ԵԼԵԿՏՐՈՄԱգնիս։ Հոսանքատար սոլենոյդի մագնիսական դաշտն այնքան ել ուժեղ չե։ Բայց յեթե սոլենոյդի մեջ զնենք մի յերկաթե ձող, այն դեպքում յերկաթը կխտացնի մագնիսական գծերը և սոլենոյդի դաշտը կուժեղանա։

Այս պարուրաձև հաղորդիչը, վորի մեջ գտնվում է յերկաթե ձող, կոչվում է ելեկտրամագնիս: Ելեկտրամագնիսը մագնիսական դաշտ ունենում է միայն այն դեպքում, յերբ հոսանքն անցնում է:




Նկ. 121. Սոլենոիդի մագնիսական ուժագծերի դասավորությունը:

Անհրաժեշտ պարագաներ. 1—2 ակումուլյատոր կամ գալվանիսկան ելեմենտներ, զանգի համար գործածվող պղնձե լար, բանալի, 1 ոմ դիմադրություն ունեցող հաղորդիչ, սրածայր հենարանի վրա դրված մագնիսական սլաք, յերկաթե և պողպատե ձողիկներ:

1. Պղնձե լարը պարուրաձև փաթաթելով մատիտի շուրջը պատրաստեցեք սոլենոիդ:



2. Ակումուլյատորից, բանալուց, գիմադրությունից և սոլենումիդից շղթա կազմեցեք:



3. Վորոշելով ակումուլյատորի անողը, ցուց տվեք, թե սոլենումիդի վորեե ծայրում հոսանքն ի՞նչ ուղղություն ունի: Նկատի ունենալով հոսանքի ուղղությունը, գտեք Նկ. 122. Ելեկտրամագնիսի սխեման: Հյուսիթե սոլենումիդի այդ ծայրն ի՞նչ բեեն սային բեեն ստացվում է այն ծայրում, կունենա: Ստուգեցեք սլաքի ողդ վորտեղ հոսանքն անցնում է ժամացույցի նությամբ:

4. Յերկաթի ձողիկը դրեք սոլենումիդի մեջ. մագնիսական դաշտն ուժեղացավ:

5. Բնդհատեցեք հոսանքը. ձեր պատրաստած ելեկտրամագնիսն իր մագնիսական դաշտը կորցրեց:

6. Ստուգեցեք, վոր պողպատի ձողիկը մագնիս չե և հետո յերկաթը սոլենումիդի միջից հանեցեք ու նրա տեղը դրեք պողպատե ձողիկը:

7. Մի քանի րոպե հոսանքն անցկացրեք սոլենումիդի միջով: Վորոշեցեք սոլենումիդի մագնիսական բեեները: Զողի այն ծայրը, վոր գտնվում է սոլենումիդի հյուսիսային բեեները, կողմը, կինի հյուսիսային բեեն:

հենց վոր հոսանքն ընդհատում էնք, մագնիսական դաշտն ել կորչում է (ի՞նչու):

Մեծացնելով հոսանքի ուժը և պտույտների թիվը, կարելի յե ստանալ չափազանց ուժեղ ելեկտրամագնիսներ:

Աշխատանք:

Հոսանքի ոգնուրյամբ պարասել արմեսական մագնիս:

8. Հոսանքն ընդհատեցեք: Ձուլը հանեցեք և մոտեցրեք մագնիսական սլաքին: Պողպատն իր բեեները պահեց:

93. Ելեկտրամագնիսի գործառնությունը: Ելեկտրամագնիսները գործադրվում են թե տեխնիկայում և թե առորյա կյանքում, որինակ, ելեկտրամագնիսական զանգը, ելեկտրամագնիսական հեռագիրը, գործարանային ուժեղ ելեկտրամագնիսները, ելեկտրամագնիսական ժամացույցները և այլն:

94. Ելեկտրամագնիսական զանգը, անշուշտ, ամենատարավծած ելեկտրամագնիսական գործիքներից մեկն ե:

Յերբ կոճակը սեղմում ենք, շղթան փակվում ե և ելեմենտից անցնում է հոսանք, վորից զանգի ելեկտրամագնիսը մագնիսանում ե և ձգում յերկաթե (Ա) խարիսխը: Խարիսխն կպած մուրճը հարվածում է (Ը) զանգին: Բայց հենց վոր խարիսխը մոտենում է ելեկտրամագնիսին, հոսանքն անմիջապես կտրվում է Յ կետում և ելեկտրամագնիսը կորցնում է իր ուժը. դրանից խարիսխը կրկին հետ ե զնում և դիպչելով պատուտակին, կրկին հոսանք ե առաջացնում: Ելեկտրամագնիսը կրկին մագնիսանում ե և ձգում խարիսխը, այդ ժամանակ մուրճը տալիս է յերկրորդ հարվածը և այլն, Յեթե կոճակը անշանդի սեղմենք, զանգն ել անընդհատ կգործի: Շնդհատ սեղմենք, զանգն ել անընդհատ կգործի:

Քանգեցեք կոճակը և ծանոթացեք նրա կազմությանը: Գծեցեք կոճակի սխեման. ցուց տվեք զանգի ելեկտրամագնիսը: Գտեք այն տեղը, վորտեղ հոսանքը կտրվում է, լեկլանշելի կամ վորեե այլ ելեմենտից, կոճակից և զանգից շղթա կազմեցեք: Անպես արեք, վոր զանգը գործի:


Հաղորդիչը զանգի մեջ այնպես միացրեք, վոր կոճակը սեղմելու գեպքում մուրճը միայն մեկ հարված տա:

Ի՞նչպես կազմել զանգի շղթան, վորպեսպի միքանի սենյակներից կարելի լինի նույն զանգով զանգահարել:

Զանգի շղթան ի՞նչպես կազմել, վոր կոճակով կարելի լինի զանգահարել մի քանի զանգիր:

95. Ելեկտրամագնիս չենԱգիր: (Մորգելի ապարատ): Ամենապարզ հեռագրական ապարատը հնարել է Մորգեն 1840 թ.: Այդ ապարատը բաղկացած է մի ելեկտրական մագնիսից, վորի մոտ գտնըրատը բաղկացած է մի լծակի յերկաթե կարճ բազուկը: Լծակի յերկար բազկի վում է մի լծակի յերկաթե կարճ բազուկը: Լծակի յերկար բազկի վորը թաց ե արվում վորեե ներկով: Ժայրին ամրայրած ե գրիչը, վորը թաց ե արվում վորեե ներկով:


ձգում լծակի կարճ բազուկը. յերկար բազուկն այդ ժամանակ բարձրանում ե և գրիչը սեղմում ե թղթի յերիզը, վորը առանձին մեխանիզմով շարժվում ե: Հոսանքն ընդհատելու դեպքում գրիչն իջնում ե, վորովհետև ելեկտրամագնիսը կորցնում ե իր մագնիսականությունը: Նախած թե հոսանքը յերկար ժամանակ ե անցնում, թե կարճ, ըստ այսմ ել յերիզի վրա ստացվում ե գիծ կամ կետ: Կետերի և գծերի տարրեր խմբավորումները տալիս են տառեր. որինակ, կետն ու գիծը ա ե, գիծն ու յերեք կետը՝ բ և այլն: Գրող



Նկ. 124. Մորգելի գրող ապարատը:


և մի կայարանում, իսկ բանալին կամ կարգում ե՝ մյուս միայն մեկ հաղորդիչ ե գտնվում, մյուս հաղորդչի դերը կատարում է գետինը. մարտկոցի մի բները միացած ե գետնի հետ: Հեռագրելիս գործում ե միայն ուղարկող կայարանի մարտկոցը: 125-րդ նկարը ցույց է տալիս յերկու կայարանների միացման սխեման: Ի կայարանում բանալին սեղմված ե, հոսանքը նրա միջով անցնում ե մյուս կայարանի ելեկտրամագնիսին, այսաեղից ել գետինը. գրիչը գրում ե:

Մորգելից հետո հեռագրական տեխնիկան հսկայական առաջադիմություն ե արել, որինակ, հնարել են այնպիսի գործիքներ, վորոնք ուղղակի տառեր են տպում, գտել են միջոցներ միաժամանակ նույն հաղորդչով մի քանի հեռագիր ուղարկելու, նույնիսկ գտել են այնպիսի գործիքներ, վորոնք հնարավորություն են տալիս հեռագրի միջոցով պատկերներ ստանալ և այլն, վերջապես հիշենք «անթել հեռագիրը» կամ բաղիոն: Բայց և այնպես Մորգելի ապարատը այսոր ել տարածված ե ամբողջ աշխարհում:



Սամվել Մորգե (1791—1872)—հեռագրի գանողը:

96. ԵԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՐԱՆ: Ուժեղ ելեկտրամագնիսները վերջերս մեծ չափով գործ են ածվում յերկաթե և պողպատե իրեր պատրաստող գործարաններում: Բելսերի վրայով ելեկտրամագնիսական կրանը վերկից մոտեցվում ե այն յերկաթե կամ պողպատե



Նկ. 125. Ցիվիլ հեռագրական սխեման միացման սխեման: Զան կայարանը լինում է այս լինում ե, ոչ պատճենական սխեմանը լինում է այս լինում ե:

իրին, վորը պետք ե բարձրացնել և տեղափոխել: Հոսանքն անցկացնելու դեպքում ելեկտրամագնիսը ձգում ե այդ իրը, կրանը տեղափոխում մի ուրիշ տեղ, վորտեղ հոսանքն ընդհատելու դեպքում իրն ընկնում ե:

## ՑԱՆԿ

### ԶԵՐՄԱՆԵԹՑՈՒՆ

	Ցերեալ
Չերմային եներգիայի չափումը . . . . .	3—13
Մարմինների մի վիճակից մյուսին անցնելը . . . . .	13—25
Գոլորշիների հատկությունները . . . . .	25—33
Ողի խոնավության մասին . . . . .	33—35
Չերմությունը վորպես եներգիա	35—44
Չերմաշարժ մեքենաներ . . . . .	44—59
Վառելանյութի պակասելու տագնապը և ելեկտրիֆիկացիան . . . . .	59—61

### ԵԼԵԿՏՐԱԿՕՆՈՒԹՑՈՒՆ

Ելեկտրոստատիկա . . . . .	62—74
Ելեկտրական հոսանք . . . . .	74—90
Ելեկտրական մեծությունների գործնական միտվորները . . . . .	90—98
Ելեկտրական հոսանքի ջերմային գործողությունները . . . . .	98—112
»              »              քիմիական գործողությունները . . . . .	112—117
»              »              մագնիսական գործողությունները . . . . .	117—129





«Ազգային գրադարան»

ML0256513

3 u

9 May